ԺԲ. ՏԱՐԻ

ԹԻՒ 1–2

ՑՈՒՆԱՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ 1973

A.R.A.R.@

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ԱԼԻՔԵԱՆ . . . . . Բարութիւն Կալենց

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ . . . . . Սեւ զգեստով կինը

Մ. ԹԱՒՐԻԶԵԱՆ . . . . . «Ես եղել խաւար...»

Ա. Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . . Խոզերը, աճ, եւ այդ միւսները

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . . Անտառային համանուագ

Ն. ՎԻՐԱՊԵԱՆ . . . . . WEEKEND

Ա. ՔԷՆՏԻՐՃԵԱՆ . . . . . Դուռը

Է. ՍԱՐԱՃԵԱՆ . . . . . Երկու բեւեռ

... . Մկրտիչ Արմէն

Մ. ԱՐՄԷՆ . . . . . Ցարգելի բարեկամներ

Ն. ՍԱՐԱՖԵԱՆ . . . . . Մեր դարը իր հոգերով, ֆրանսական գրականութեան մէջ

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ . . . . . Կրտսեր Կրին եւ իր «Զօրութիւնն ու փառքը»

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . . . Արիութեան փառաբանութիւնը պատմութեան շրջանակում

Մ. ԷՍԼԻՆ . . . . . Սամուէլ Պէքէթ (թրգմ. Ֆ. Ճինպաշեան)

... . Մրցանակներ

... . Լուռ ու լրիւ թշուառութիւն

Ց. ԿԱՐԱՊԵՆՑ . . . . . Բողոք՝ Ն. Պէշիկթաշլեանի մահուան առթիւ

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . . Ն. Պէշիկթաշլեան

digitised by A.R.A.R.@

Բազմ

ԱՅՍԱՑԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԲ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1 — 2 ՅՈՒՆՈՒԱՐ — ՓԵՏՐՈՒԱՐ 1973 ՊԷՅՐՈՒԹ

7164740

Ա. ԱԼԻՔԵԱՆ

ԲԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԼԷՆՑ

(ԵՌԱՆԿԱՐ)

Հայրենադարձութեան առաջին նաւի խարխարկէքի քառանիանգամեակին:

Հարգ. պրն. Ա. Ալիքեան,
իր սիրելի հեղինակի տարեգրքի
[illegible] գրքի համար։ Ակամայ
եւ Ձեզի իր սիրելի գրքի [illegible]
Սիրով՝ Ա. Ալիքեան
Մոնրեալ 25.IX.72

Մի խայթ ու մի խայթ իր անձնական գործունեութեան համարձ արամադրուած Ա. Ալիքեանի այս պոեմը փափաքցանք ունենալ նոյն նպատակով, բայց որովհետեւ հաւաքական գործունեութիւնները կը խաչեցէր անիկա եւ փորձիչ էր իր նուանած գեղեցկութիւններով՝ որոշեցինք զայն յանձնել ապագրութեան, որուն համար վատահաբար հնարամիտ պիտի ըլլան ինքնանները, եւ չնորհապարտ՝ ընթերցողը...։

ԱՌԱՋԻՆ ՓԵՂԿ

Հիմա, երբ որ ներկայնակն անմահութեան
Էլ չի անցնի դիպուածների բթամատին,
Ու կարպետում ժամանակի, իբրեւ որդան,
Կ'ընդելուզուի երանգների այս մեղեդին,

digitised by A.R.A.R.@

Հիմա, երբ որ պատկերակալը, անկատ
Մշուշուելով, ինչպէս դելփեան եռոտանի,
Իր վրայ լոկ կը կրի մէ՛կ ինքնանկար,
Որ հարցուկի պէս հրաշքներ կը պատգամի,
Հիմա, երբ որ մահուան տափանը գետնաբան
Փխրել, փակել է խտրութեան ակօս ու արտ՝
Հիմա արդէն, վերյիշելով ի՛մ էլ ճամբան,
կալե՞նց, կալե՞նց, թոյլ տուր, որ գէթ մէ՛կ ակնթարթ
Գամ, մօտենամ ճեպընթացին քո գոյութեան,
Որպէս փոքրիկ կիսակայան:

Ա՜հ, ե՞ս, ե՞ս քեզ պէտք է ասեմ,
Քեզ, որ մանկուց, ինչպէս գոյներ, ներկի խառնուրդ,
Ինչպէս միակ գիրք ու դասեր,
Սերտել ես լոկ այլափոխումն ամէնօրեայ, —
Միթէ ե՞ս քեզ պէտք է պատմեմ, թէ կեանքը մերթ
Այնքան արագ է շրջուում, այնպէ՛ս դառնում,
Որ մենք հազիւ ենք նկատում դէմքը նրա
Եւ ամէն ինչ անուանելու միշտ հակամէտ՝
Բախտ ենք կոչում այդ շրջումը վայրկեանական,
Կոչում վախճան, կոչում ենք մահ,
Մինչդեռ գուցէ, ինչպէս երկան,
Նա պտրտուում է ակամայ,
Որ վերնահոս նոր ցոլքերը ալրանան:

Եւ շրջուեց նա մի անգամ էլ, բարեկա՛մ,
Քե՛զ սուզելով իր փոխարկման եռեւեփում,
Երբ, դու, հազի՛ւ մղձաւանջից դաշտ դուրս եկած՝
Փնջում էիր ոսկեծաղիկ ու տերեփուկ,
Որ կոչումիդ երանութեամբ
Նրանց մահուան ափսոսանքը մարդիկ չզգան:

Ես քաջ գիտեմ ի սկզբան,
Թէ նկարիչը ներքոզ է ծափոզ կեանքի,
Նրա բարձումը՝ որքացումը բնութեան,
Եւ նրա լոյսը՝ խրախոյս ու փրկագին,
Ահա ինչու ծաղկամանիս
Ստրկութեան ու մղձուկի մէջ կաւակերտ,
Որքուկօրէն թառամելով, եղրեւանին
Քո աչքերն է ողբում հիմա աչքերիս հետ:
Նա գերագոյն տարագիրն է իմ սեղանին:
Ի՜նչ փոյթ նրան սէրս, որ ինձ ի սէր իրեն
Տարաւ յատուկ մինչեւ հեռու գիւղակ ու շէն:

Եւ ես գիտեմ, անճա՛ռօրէն գիտեմ արդէն,
Թէ նկարչի մահը լռիկ պահ է միայն
Որ նախորդում է ճիչերին հիացողների

digitised by A.R.A.R.@
160--2000

Ուր նա կ'ապրի ի գիշերի եւ ի տուրընչեան:
Գիտե՛մ, կ'ապրե՛ս: Բայց քեզօրէն ո՞վ կ'իմանայ,
Թէ քո վրձնի ոթած վերջին շիթն իսկ ներկի
Երբեակ կեանքի երաշխիքն է նոյն ժամանակ,
Որ ապրեցիր դու աներկիւղ՝
Նախ հա՛յօրէն՝ աչքերիդ մէջ արեան կարիճ,
Ապա իբրեւ արուեստագէտ՝ պատժաց պնակ,
Եւ հուսկ՝ որպէս հա՛յ նկարիչ:

Ո՞վ կ'իմանայ, թէ ոլորտում այդ հողմակոծ
Սիրտդ, ինչպէս մի մանկական օդապարուկ,
Դատարկելով նակատագրի կծիկ ու կոճ,
Սուրաց դէպի միգամածները անպարոյր,
Շաչեց, շչեց, մերթ փոսացաւ ու բքուռեց,
Տապլտկուեց, ինչպէս դարձուն մի աղաւնի,
Սասինձն հալուեց, ճարքերեցին առանցք ու յեց,
Ծոպերն ընկան, ճարճատեց ճարն առաստաղի,
Եւ երբ հողմերը կողմեցին երան-երան,
Երբ կապոյտը աչեց, փչեց սիւքն ըստ քմաց՝
Ծփծփացիր դու գէթ առժամ,
Բայց ճմռթկած սրբապատկեր էիր միայն,
Կոտորակուած հաւքի կմախք:

Տէ՛ր իմ Աստուած, ինչքա՛ն տարբեր,
Ի՛նչ ուրիշ են նակատագրերը մարդկային,
Եւ ինչքա՛ն մէկ, իրար նման ու ձախաւեր,
Ինչքա՛ն անդէմ, կարծես թէ նոյն մեքենայի
Մեխեր լինեն
Մահերն ամէն:
Քո օրերից, առագաստի պէս ուռեցուն,
Անցա՞ւ միթէ գէթ մի ծուէն քո վախճանին,
Երբ նո՛յն հեւքով կնքում է իր մահկանացուն
Նաեւ նեռնգը, տնարնակն ու քաղքենին:

Անցա՞ւ գուցէ, քանի որ, տե՛ս,
Քո նկարն եմ ես առկախում երգիս որմին,
Որ դու նաեւ ի՛մ թոռոնից մարդկանց դիտես
Բարեբարի՛, ինչպէս որմիզդ:

ՄԻՋԻՆ ՓԵՂԿ

Ասա՛, կալի՛նց,
Սփոփանքի շող չէ՞, որ միշտ՝ դարեր անտի
Արհաւիրքի կմախքակերպ կոյրն է իջել
Արուեստագէտ ամէն հայի նսեմ քախտի
Ու իր վսեմ գործի միջեւ:

digitised by A.R.A.R.@

Ինչպէ՞ս տեսան...
Սուր թափանցմանց այդ ի՞նչ լուսան
Փոսփորափայլ իր թիրերն էր նրանց բաշխել,
Որ կիկլոպեան կապիճներից անդին տեսան
Լոյսի այսքա՜ն առէջք ու թել:
Այսքա՜ն թեզան:

Ինչպէ՞ս տեսար:
Զէ՞ որ իբրեւ չոր ոսկրադաշտ եզեկիէլեան,
Տեսիլներիդ առջեւ մխաց ու նարնատեց
Ճապաղիքի ու ճենների մի նահճատենդ,
Եւ քստմնեց ու ժանիքուեց, ինչպէս բորեան,
Դաշունաշող այն շեղբը թաց,
Որ մի շոշորթ ու շաղդահոտ դիակապուտ,
Ատամներով եւ ուղեղի տիղմով սեղմած՝
Այրի մօրդդ, եղբայրներիդ եւ քո՛ եւ քո՛
Փոդոտումին էր շտապում
Այնպէ՞ս հեւքոտ...

— Ի՞նչ բառերով, ինչպէ՞ս պատմես...
Կը կռնծի, կը գալարուի մարդու լեզուն
Կանաչ կոթունը պլորած տերեւի պէս:
Իսկ նկարե՞լ... Չեմ ուզում, որ դառնայ վեզուվ
Ներկապնակդս անլուայ,
Չեմ ուզում, որ իւղաներկերը պղպջան,
Ինչպէս եռման, եռման լաւայ,
Եւ վրձինս դառնայ խորունկ խառնարանում,
Խառնարանի եզրին ասած
Մի հէք կնիւն...

(Եւ, արդարեւ, նոյնիսկ այնժամ,
Երբ վերյուշի բանդագուշն էր բռնել տարին,
Եւ նկարներ ու քերթուածներ, իբրեւ խաշամ,
(Որին ես էլ խառնել էի մի գօս տերեւ)
Սոսկումների աշուն ու ժանգ իրենց դէմքին՝
Խուժում էին ամէնուրեք,
Նոյնիսկ այնժա՛մ
Դու մօտ չեկար հրաբուխին այդ անօրէն,
Այլ կարծես թէ ի հեռուկս բախտի չարքին
Վրձնեցիր վարդեր բուրեդ:
— Է՞հ, չեն տեսել, հարկաւ կ'երգեն, կը նկարեն...)

Իսկ երբ քո դէմ մահապարող ոսկրադաշտին,
Մարմանդ վառուող ծղանների պէս փուլ գալով,
Մէկիկ-մէկիկ խառնըուեցին
Մօր ու եղբօր ոսկերոտին,
Եւ երբ յանկարծ դիւաբրիչ մի գիշերով

digitised by A.R.A.R.@

Որքուրթեան խուլ խորխորատի մէջ դեգերող
Սովալուկ մի արծագանգ
Հրամայեց կրծե՛լ դրանէ՝
Ինչպէ՞ս, ինչպէ՞ս

digitised by A.R.A.R.@

Այդ ամէնուստ հոնդացող ձայնի ետեւ
Տեսար կապոյտ շշուկների մի շքադուռ,
Որ խոստացաւ քեզ յայտնութեանց մի ողջ եդեմ
Այդ դժոխքին ի տրիտուր...
Բոլոր որբերը նման են գուցէ իրար,
Սակայն հայ որբը հա՛յօրէն եղաւ տարբեր:
Նրա աչքի խոռոչներում՝ մահատիպար
Սարսափն անգամ էլ չգտաւ տամկութեան փայլ,
Որով արբէր:

Անմեղագոյն նրա յոյսի վրայ անգամ,
Մէկ աչքը բաց քնի, սիրոյ մէջ անմրափ
Տարուբերուեց մի պակուցիչ ադամագանգ՝
Մի ակնապիշ ու կունդ կառափ
Եւ նրա տակ
Զոյգ խաչաձեւ գիստի երանգ:

Ճակատագրի նապուկ քերծէն
Օդի մէջ իսկ նրա հետքերը հոտուըտաց
Եւ սպասեց նոյնիսկ այնժամ, երբ որ կարծեց
Ու հաւատեց, թէ նա մահուան
Մացառուտի մէջ է արդէն ծուար մտած:

Բայց, օ՜, վշտի վաղահասիկ, վե՛հ գերանում:
Նա դարձրեց նրան բախտի
Բարակներից էլ հոտառու,
Միշտ կապելով նրա սրտի սրտուռ սոճուն
Առհաւական յոյզի ամբողջ գետն ու տառուն:

Եւ դու հայ որբն եղար՝ ակի՜հ սրբավայե՛լ,
Որտեղ իսկոյն քացխեց քաղցուն լինելութեան
Եւ կրծելով պղինձի կոզ ու կլայեկ,
Արջասպի համ խառնեց համին իր հնձանեան:

Եղար ինչպէս բարի, անօգ ու հեզ լորտուն,
Որ, ըստ հնոց, խորխ փոխելու համար միայն
Ոսկորների է քսքսում ու նապատում,
Գալարելով սիրտ ու իրան:
Քսքսուեցիր, գալարուեցիր անապատէն:
Մեռելներիդ կմախքներին,
Ինչպէս ուխտի ծառի չորուկ ճիւղերն ի վար,
Թողիր հոգու ծիւ ու ծուէն:
Թողիր նոյնիսկ ազգանունդ, ուր քեզ քուաց,
Թէ տակաւին քայլում են բուք մարդագայլեր,
Եւ ձայներն այդ խլացնելու համար ի սպառ
Դու հայավար
Դարձար Կալենց...

digitised by A.R.A.R.@

Խաղաղութի՛ւն, Կալե՛նց, բնիկ քո ոստանին,
Որ Կիւրին էր, գուցէ Կորիւն,
Սերուած այն ջոջ առիւծներից, որոնց Անին
Իր դարպասներն էր վստահում,
Եւ որ հիմա լոկ մի յանգ է քաշում՝ արիւն:

Խաղաղութի՛ւն ամբողջ կեանքում
Քո հինգ անհոգ տարիներին:
Խունկ ու արցունք շալեր գործած հօրդ հոգուն,
Իր պատրաստած հրաշալի մոռ ներկերին
Խաղաղութի՛ւն:

Խաղաղութի՛ւն
Տարերքների տարուբերման մէջ տարբացած
Մօրդ սրտին, եղբայրներիդ անիւններին,
Խաղաղութի՛ւն ճամբաներիդ արհաւրաձայն
Եւ իշուկիդ բաչիւններին,
Խրտչումներին իր մարդկային:

Բի՛ւր պտղունց խունկ քո օրերին որբանոցեան,
Ընկերներիդ, որ թէեւ մերթ եղել են բիրտ,
Բայց հսկել են, որ հոգեզէշ եւ ուրուական
Քո անուտին իսկ մօտ չգան,
Երբ հսկումն է հանգել լամպիդ:

Խաղաղութի՛ւն ազգանունիդ Հարմանդարեան,
Որի պատուի մէջ պլլուած, ինչպէս արեան,
Մահ է գտել ամբողջ, ամբո՛ղջ մի գերդաստան:

Խաղաղութի՛ւն նախաշաւիղ քո կտաւին
Ու պատերի պաստառներին ածխանկար,
Փա՛ռք ի փառս նրանց, որոնք
Դէք մի բերան երան տուին
Աստուածարարձ կալիդ ոսկուն դէզի համար:

Խաղաղութի՛ւն խարխափանքիդ բաւիղներին,
Տեսլահարման կծիկներիդ Արիադնէեան,
Խաղաղութի՛ւն սրտիդ, որ դեռ անհնարին
Սլացքի էր պատրաստում իր թեւերն արեան:

Խաղաղութի՛ւն եօթգլխանի մեր այն դեւին,
Որ հայրենախտ էր մեր սրտում, հայրենացա՛ւ,
Խաղաղութի՛ւն նրան սնող ե՛ւ քո, ե՛ւ իմ
Տառապանքին, որ փորձութեանց փուռով անցաւ:
Խաղաղութի՛ւն մոնչիւնին նրա, ի տես
Ծխի նման բացուող կայմին հեռաստանի,
Խաղաղութի՛ւն մեր կասկածին, թէ այդ ինչպէ՞ս

digitised by A.R.A.R.@

Մի ձեռակերտ նաւ Հայաստան մեզ կը տանի:
Խաղաղութի՞ւն մեր զոչումին ու մանաւանդ
Թեւերի պէս մեր ուսերին բուսած սիրոյն,
Որով, արբշիռ, ինչպէս նաւազ,
Շոգենաւի սոյրերի մէջ մտանք իսկոյն,
Դու, համառոտ քո Արմինէն
Մէկ–մէկ սնդուկ պաստառ առած,
Իսկ ես՝ դոդով ու շտապով
Նախափորձի մրոտ թղթի մէջ ծրարած
Գրքոյկների մի թոյլ կապոց:

ՎԵՐՋԻՆ ՓԵՂԿ

Ո՞վ չգիտէ,
Թէ կարճագոյն ճանապարհը դէպի երկիր
Անցաւ արնոտ Ռաս–իլ–Այնով ու Դէր–Զօրով:
Ուստի պէտք չէ՞ր, որ միայն դու, դո՛ւ լինէիր
Առաջինը հայրենի ափը եզերող:

Եւ առաջի՛նն եղար, քանզի
Արուեստագէտ էիր նաեւ,
Կպած ուղիղ շառաւիղին Օրփէոսի,
Որ անզօր է իր երազին շեշտ չնայել:

Եւ նայեցի՛ր...
Այդպէս ձմրան ձիւնն է նայում,
Դարձած լոյսի հիացք ու կայծ:
Այդպէս նայում է հմայուն
Հաւքը, որի հագագի մէջ երգն է պտկած:
Ծննդկանն է նայում այդպէս, այդպէս ապա
Նայում է ճիչը նորածնի:
Այդպէս Ցիսուսն է անկասկած նայել մի պահ
Ու մտել է Գեթսէմանի:

Դու նայեցի՛ր:
Բայց նկարչի նայուածքները քո անսայթաք,
Որ սուզակի խուզարկման պէս ընկլուզուելով,
Բացւում էին, աղջամուղջներ նառագայթած,
Կարծես գայթուն էին, ինչպէս ծուփ ծովալոռ:

Այդ օր կարծես ոչինչ չկար,
Որ տարօրէն սրտատրոփուէր:
Լոկ թեւում էր մի գաղափար,
Որ հանդիպման յոյզն էր, ոգին
Քո սիրտն ի վեր:

digitised by A.R.A.R.@

— Ա՛խ, Հայաստա՛ն, ալմա մա՛տեր,
Ինչո՞ւ այսքան շոշափելի ու իրական,
Ինչո՞ւ այսքան բնականոն կալենցն եմ դեռ,
Երբ իմ դէմ է քո ընծայման առհաւատչեան:
Անասելի մի խորհուրդ կա կարծես մի տեղ:
Բայց, ո՛չ, դու միշտ ճիշդ ես, գիտե՛մ,
Զանցառուն ես, ե՛ս եմ միայն,
Որ բերանիս անձուկութեամբ
Ճիչիս ոլորտն եմ դարձրել սահմանաւոր,
Իմ աչքերի աղբիւրացումը ապստամբ
Ողոքել եմ հառաչներիս չոր հարաւով,
Խլացրել եմ ռունգերս խունկի սովից,
Խցանել եմ ունկիս անօթն աղմուկներով,
Մթագնել են նայուածքներս սուր ու սուին,
Եւ դեղնել են կեանքի ծանգից
Արցունքներս, որպէս մեռոն...

Սակայն ինչպէ՞ս ըմպեցիր դու՝ շուրթ շուրթի դէմ,
Պահի ամբողջ լուսամամուկը սրբազան,
Ինչպէ՞ս եկան բացխփուելով, իբրեւ թիթեռ,
Հպանցելու քո մէջ ամէն զգայարան
Լեռներ, հագած ամպ ու օգոն,
Ձորեր, մարգեր միգամթար:
Բայց դու ինքդ այնքա՞ն էիր յորդուն յոյզով,
Որ սուզուեցիր քո՛ իսկ աչքում
Ու նրանց յոյզը չզգացիր մի ակնթարթ:

Մէ՛կ ակնթարթ: Քանզի ահա կայծակնօրէն
Հնչում են դեռ բառերը քո,
Իմաստնազոյն, ինչպէս Մուսա.
— Գուցէ կեանքիս մինչեւ վերջը ես նկարեմ
Հայաստան ոտք դրած օրս ինչ որ տեսայ
Ու չտեսայ...

Եւ ինչքա՞ն դաշն է քո հեւքոտ օրերի հետ,
Ի՞նչ ներյատուկ կեանքիդ, իբրեւ խորհրդանիշ,
Որ երբ ժպտաց գետը Դեւրեդ,
Ու առաջին անգամ մի պահ
Կանգնեց գնացքն հոդի վրայ Հայաստանի,
Դու շուրթերիդ չսեղմեցիր հոդիդ շուշփան,
Այլ բոկոտն, այլ անգուլպայ,
Խտուտ ծաղկի պէս մխացող մազերդ հովին՝
Վազվզեցիր յափշտակեալ, փակաչք, անշունչ,
Ինչպէս հոգերն աստուածարեալ
Գետնին փռուած վարշամակի սրբութեան շուրջ:

digitised by A.R.A.R.@

Կալե՜նց, կալե՜նց:
Մեր մղումներն ինքնությունն են մեր բնության,
Եւ մեր արարքն իրաքանչիւր՝
Բիւր, բովանդակ մեր օրերի շուքը երկայն,
Որ անտես է, անկապտելի մեզնից, ինչպէս
Երգեհոնից հեւք ու հնչիւն:

Ո՞վ, ո՞վ կարող է վերծանել
Ճակատագրի մեհենագրերը ուրիշի,
Ո՞վ ի զօրու է ըմբռնել, զգալ զոնէ,
Թէ խելայեղ, գիսախուլ ու անկօշիկ
Սոյրիդ կայմերն ու առագաստը հայածին
Լցնում էին, ճկում, ճօճում հազա՛ր թռքեր,
Որ խոտոցուած խոիկի պէս խուլ խզզացին,
Հազա՛ր շնչեր,
Որ վանելով, շարժտկելով աւազը ջեռ,
Աւազի մէջ թոզին խոռեր խորշակների,
Հազա՛ր սէրեր,
Որ ամպօրէն կը վարէին բիւր սառցալեռ,
Հազա՛ր սրտեր, հազա՛ր ձեռքեր, հազա՛ր ձեռիկ:

Սոյրիդ սահանքը սահմանող սուրբերը քո,
Սատարելով քեզ քո սրտում,
Եղան կամշոտ, նախանձայոյզ ու պահանջկոտ,
Ինչպէս ամէն մի ենջեցեալ,
Որի համար լոկ մեր յուշն է տանար ու տուն:

Քանզի երբ որ Մասեաց վարքի մէջ վեհական
Արդէն սուզուել էր գնացքիդ սոյլը երկար,
Ինչպէս վերջին թինդը ցուպի քաջին Հայկայ՝
Դու կանգ չառար,
Լցրիր աչքերդ, ինչպէս ճոխ ներկապնակ,
Որ յաւերժի հայեացքն հագած
Քո զոհերի աչքերն ագահ
Բաց չմնան:

Բայց ո՞վ կարող է վերծանել
Ճակատագրի մեհենագրերը ուրիշի:
Քեզ լռութեան ու գորովի նժարն էր պէտք,
Բայց մերթ ձայներ
Քո դէմ իրենց պրկուն պարսաւը պարզեցին,
Իբրեւ կշիռ:

Հոգիներում դոնդողադող սարսափն հանուր,
Դէմքն իր ծածկած բաց լրագրով, ուր անողորմ
Իր հայեացքն էր հայեացքների դէմ յեսանում
Ընչացքների խոլոր մի մորմ՝
Ցագնապների տարտարոսիդ ի արձագանգ

digitised by A.R.A.R.@

Աչքի գունտերն էր գալարում, որպէս Սփինքս,
Եւ իր խոհեմ զգուշանքը բացարձակած,
Շշնջում էր, փայլեցնելով այտի ապին.
— Տասնըհինգ թի՞ւ... Դէր-Զօ՞ր... Եղե՞ռն...
Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ... Այդպիսի բան չի՛ էլ եղել...

Սակայն «եղա՛ւ» էր քեզ հծծում մէն մի ծաղիկ,
Հնչեցնելով հունտով լեցուն յուշի բոժոժ,
Երբ, հալածուած յաւերժելու քո կենցաղից,
Մագլում էիր սարերն ի վեր
Կրոտ, փոշոտ:

Իջնում էիր ձոր ու հովիտ,
Եւ, անպայման, բազկատարած, ինչպէս «մեղա՛յ»,
Աղօթում էր մի վանք՝ «եղա՛ւ»:

Գեղարդն՝ «եղա՛ւ»,
Երասխն՝ «եղա՛ւ»,
«Եղա՛ւ, եղա՛ւ, եղա՛ւ, եղա՛ւ» —
Կռունկների եռանկիւնի
Կտիկտիւններն ու կղկղան:

Ու մանաւանդ երբ ռեւէ բնորդի դէմ,
Ինչպէս տախտակը տեսիլի դէմ մաշտոցեան,
Շուշանափայլ իր մազաղաթն էր մարմարում
Ամէն կտաւ,
Դու գիտէիր, թէ քիչ յետոյ քեզ կը դիտեն
Աչքերի սուգն ու սկիհները թախծուքեան,
Հաւաստելով քեզ իսկ՝ եղա՛ւ...

Օ՛, արուեստի ճառագայթները ռենտգենեան,
Հոգիների շրջոնք-շիտակն ի բաց բերող...
Էլ քեզ ի՛նչ փոյթ,
Թէ ամէնուր մարդ-մեքենան
Իր դիմակներն էր հովհարում ձիգ ծափերով:

Ի՛նչ փոյթ, եթէ իւրաքանչիւր պատկերակալ
Ցուցադրում էր մի թերթային,
Բայց կիսաւարտ դիմանկար,
Որը իսկոյն սուրբ Մեսրոպայ կամ Սահակայ
Կ'այլափոխուէր, երբ այցելուն փողոց դուրս գար:

Էլ քեզ ի՛նչ փոյթ շեփորի փայլը հոսանուտ:
Դու գիտէիր, թէ անողորմ
Իր հայեացքն է հոգիների դէմ յեսանում
Ընչացքների խոլոր մի մորմ...

digitised by A.R.A.R.@

Եւ ուղեղիդ մէջ մագանօթ դարձած բոլոր
Մեռելներիդ կարօտների ահագնութեամբ
Առած մուրճ ու կապարալար, հագար բանշոր,
Որ նկարչի աչքաչափիդ վահագնութեամբ
Փորես հիմքեր, որմեր շարես՝
Քեզ համար տուն ու զոհերիդ՝ վկայարան:
Ի՜նչ փոյթ. թող քո վրձնի վրայ, ինչպէս շրէշ,
Զորանային իւղերն առժամ,
Ներկը հարուէր.
— Ի սկզբան է տունն, եւ տունն է արուեստ...

Ի՜նչ մանրամասն սիրտհատնում, ի՜նչ մտմտուք
Ու հաւատքի ի՜նչ հայութիւն, ի՜նչ հայ հսկում,
Մինչեւ մի օր ծեփը տամուկ
Խնկաբուրեց դեռ նոր կքած կաթի հանգոյն,
Եւ ծեփի մէջ շողկտալով,
Կտաւներում մի նոր Սեւան գտաւ Զանգուն:
Մինչեւ բուսան քո այգու մէջ քո՛ «անկենդան»
Բնութիւններն աշաւէտող դեղձ ու ծիրան,
Մինչեւ դարձաւ բակդ բուրեան արուեստանոց,
Եւ ի լրումն հայրենի տան երանութեան
Եւ քո՛ քիւի լոյսերի տակ
Երկաթագիր փայլեց՝
Քողոց Մեսրոպ Մաշտոց:

Կարծես ցփսոտ մի ճգնաւոր
Մասունքների բեկոր գտաւ անապատում
Եւ յարութեան շարականները քաղելով,
Դրեց սրբոց նշխարատուփ:
Կարծես ամբողջ մի որբանոց,
Ցանկարծօրէն որբանալով իր որբերից,
Կեանքի մայթին լսեց նրանց բիւր ներբանով
Հնչող յաղթերգն անպարագիծ,
Ուր կար արցունք՝ գթութիւնն իր բարեբանող:
Կարծես տարմեր արագիլի ու կտցարի
Ովկիանոսներ անցան անեղծ ու անկորուստ,
Եւ անխտիր՝ ամէն քերթող թէ նկարիչ
Մի տան շնորհն էլ ժառանգեց կարծես վերուստ,
Որպէս անսուտ առհաւատչեան իր քանքարի:

Ու այդ տարին,
Երբ ծառերիդ կարնաբազուկ խաչակնքմամբ
Խաղաղուեցին ոգիներից խորշ ու անկիւն,
Եւ ամէն մի պաստառ, ինչպէս ջրաւոյզ լամպ,
Լուսաւորեց տունդ ներքուստ՝
Ծաղկեց «գարունը քո այգում»:
Քո դրան էլ ծալեց ուղտը խորշակահար

digitised by A.R.A.R.@

Կոշտուկաւոր ծունկ ու դնդեր,
Քանզի, ինչպէս ծառերից–ծառ
Հորիզոնները ուռկանող սարդոստայններ,
Հարաւ հողմեր պոկել էին ու ձարձատել
Հոգիների հոյահասակ ցարասուտում
Երկիւղների առէջք ու թել:
Պոկել էին ու ձարձատել,
Որ հիացման ու սիրոյ լոյսը պոռթկալէն
Մեծ սպասմանց հետ նաեւ քեզ, քե՛զ կաղանդէր,
Դրուագելով Երեւանի սրտում՝ «Կալենց,
Անհատական ցուցահանդէս...»

Ու չարենցեան
Զարմանալի աշնան այդ օր
Տեսայ ես քեզ, զարմանալի՜ իմ բարեկամ:
Տասնեւվեց տարիների վարք ու պայտով
Դուիեց անցեալը, նահանջեց, եւ մի վայրկեան
Ես յիշեցի, ճանաչեցի
Ամբողջ դէմքդ շողապատող
Ժպիտը քո...
Այդ նա, նա՛ էր,
Որ անժպիտ քո օրերի քամուկներից
Մասնիկ–մասնիկ գոյանալով,
Հայրենադարձ նաւի վրայ ինձ էր նայել:
Այդ նա, նա՛ էր քո քիրերում,
Երբ գրկելու պէս հայրենի լեռ ու հովիտ,
Դու՝ բոկոտն, վազում էիր, շնչում, սուրում,
Խտուտ ծաղկի պէս մխացող մագերդ հովին:

Եւ այդ օր նա, նա՛ էր ահա,
Տարիների տարապայման տենդից յետոյ
Նա՝ ինքն իրեն, իր ծնունդը մտքում պահած
Երանաւէտ ժպիտը քո,
Որ կոպերիդ բացխփման տակ
Ցրցքնելով քո դէմքն ի վար լոյսդ շռայլ,
Կարծես հծծում էր, թէ օրերդ բովանդակ
Եղել են լոկ դէպի երկիր վերադարձի
Մշտանորոգ մի արբշռանք:

Ցանկարծ ինչքա՜ն ճոճիմ, մանրիկ, ի՜նչ չքոտի
Թուացին ինձ տագնապներս, տենդերս համակ,
Իմ սէրերը, կոտտանքները իմ կարոտի,
Ձախողանքներ, դրժման թոռած վիհ ու ամայք:
Ինչքա՜ն փցուն էին նրանք
Նկարչի տան դահլիճներից դուրս դէպի սեմ,
Դէպի փողոց մայրու խէժի բոյրի պէս բարկ
Ուղխահոսող կամքիդ կայտառուն կոհակի դէմ:

digitised by A.R.A.R.@

Ու մի անգամ էլ նայեցի «Փուսիկ» մանկան
Արարչական հեզությամբ լի հեզ աչքերին.
Նրանք լայնեզրը գլխարկի տակից անձայն
Հայցում էին.
«Պէտք չէ, քեռի՛...»

Եւ լուսոռոգ դահլիճներում
Արցունքօրէն հայց էր ամէն աչք ու բերան,
Խոնարհությեան աղապատանք՝ ամէ՛ն կտաւ:
Քեզ ո՞վ բաշխեց անչարությեան այսքա՞ն եռանդ
Ու քնքշությեան այսքա՞ն մերան
Այդ ո՞վ, ո՞վ քեզ թողեց կտակ:

Կարծես կեանքիդ ծմակում լոկ սիւքն էր փչել,
Կարծես, ինչպէս մանուկ Մոնտէյն,
Հօր ջուրակի օրորի տակ
Մտել էիր ամէն օր քուն,
Եւ զարթնելուդ պէս նարինջի հիւթ ու պնեղ
Պարզել էին շրթներիդ դէմ
Մայրդ, նաժիշտն ու ստնտուն:

Մինչդեռ սիւք չէ, սո՛ւզն էր փչել քեզ ամէնուստ,
Ջուրակի տեղ թա՛կն էր «զարթիք» երգել միայն,
Եւ նարինջի հիւթի փոխան
Անէծքների մուր ու խայծղան
Թափել էին անրծությեան վրայ եռգուդ
«Մայրիկներդ» որբանոցեան...

Ես խորհում եմ ժողովրդիս
Տառապանքի բաւիզներում թափառայած
Մերկ մաքրությեան այն շրջմոլիկ հրի մասին,
Որ կայծ առ կայծ, բջիջ-բջիջ
Ու մեղրահաց առ մեղրահաց
Մեր բնությունը փեթակեց, դարձաւ ոգին
Եւ որ ահա, սեւանածին խիճի պէս ջինջ,
Մրրիկների խորությունների իր մէջ պահած՝
Բաշխելու է նկարներիդ մէն մի խոկին:

Ես խորհում եմ վշտի վտակ քո վեհությեան,
Քո բարությեան մասին՝ սահա՞նք ամենազօր,
Որոնք քո մէջ, ինչպէս գութան,
Դաժանությեան կորդ են հերկել, ցաւի խոզան,
Սոսկումների Սոդոմ-Գոմոր:

Ու խորհում եմ
(Եւ հերքուածս զանգն է միայն ա՛յս մտածման),
Թէ այդ Սոդոմ-Գոմորի դէմ

digitised by A.R.A.R.@

Մենք էլ Ղովտի կնոջ նման
Կը դառնայինք աղէ արձան,
Եթէ, աբբշիռ, ինչպէս օրօր,
Շոգենաւի սոյրերի մէջ
Զմտնէինք քեզ հետ այդ օր,
Դու մի սնդուկ պաստառ առած,
Իսկ ես՝ դողով ու շտապով
Նախափորձի մրոտ քոթի մէջ ծրարած
Գրքոյկների մի թոյլ կապոց...

Պատկերացրո՛ւ: Ես չե՞մ կարող:
Մեզ համար չէր լինի երբեք (ինչպէ՞ս, երբե՞ք)
Ամենակուլ այնքա՞ն կարօտ,
Որ մեր նաւի փաթանիւի նոպանի պէս
Ճռնչում էր ու ճարճատում մեր յօդերում
Ցայգ ու ցերեկ:
Չէր լինի նաւ՝ կարծես կղզին էր Սեւանայ,
Չէր լինի երգ՝ յիշո՞ւմ ես դու «Ա՛յ, քաքաւա՛ն»,
Չէր լինի ծափ, որ սրտերից մեր թեւանար
Ու Բաքումի ափին թնդար հայրենաձայն:

Պատկերացրո՛ւ: Ես չե՞մ կարող:
Չէին լինի մեզ, մե՛զ համար
Մեր յոյզի պէս հող բուրվառող,
Մեր կոկորդին կծիկ դարձած հողի համով
Վագոնները ապրանքատար:
Չէր լինի մեր լեռ կարօտի ծանրութեան տակ
Ցունցը նրանց, ընթացքն անօգ,
Ինչպէս մամոնտ:

Չէր լինի մեր անքնութիւնը տրոփուն,
(Թէեւ, գիտե՛նք, կաս–կարմիր ես, հո՛ղ հայրենի),
Քո գանգրահեր սոյրը, նման գարնան քամուն,
Կը հաւատա՞ս, չէ՞ր լինի:
Չէր լինի մեր երեւանը՝ դուռ ինքնութեան,
Մեր Մասիսը՝ գոյացութեանց տապան–ռատրէն,
Հացէդ, հացես, ուր օրերի ոսկի շղթան
Հայերէն է հնչում, մարում է հայօրէն:

Ա՞հ, արդարեւ,
Չէր լինի ո՛չ մի հայօրէն:
Ուստի եւ մե՛նք:
Պատկերացրո՛ւ:
Ես անզո՞ր եմ...

Ասա՛, կալե՛նց՝
Հայաստանի Մոդիլեանի,

digitised by A.R.A.R.@

Քո այս թախիծը բարեմիտ ո՞վ կ'ընկալէր:
Այդ ո՞ր, այդ ո՞ր, ո՞ր Սարեանի
Ծերունական դողդոջ ցուպը դահլիճ մտած՝
Կ'առաջանար, կը գրկէր քեզ
Եւ թախտի պէս բարձրանալով դէպի կտաւ,
Կ'ասէր՝ «Կայե՛նց, լաւ է, գիտե՞ս,
Իւրուրոյն ես գոյնը գտած»:
Փարիզների արուեստի նաւ
Այդ ո՞ր ներհուն էիրենբուրգի
Հիացքը՝ յարկ, հիացքը՝ որմ, գի՛ք կը դառնար
Փառքիդ համար, փառքիդ բուրգի:

Ա՜հ, արուեստի հրաշք հրա՛յրք,
Որ, գոլացած իր ընդերքի տաքուկ սերմում՝
Հիացագին յայտնըւում է երկրի վրայ,
Ինչպէս տուփի զնգուն զանգուած, ինչպէս ջերմուկ:
Խորք խորանի հնչայնութեանը մատնըւած,
Կը խունանար քո պատարագը գունեղէն.
Նա մեր հաւատքն ունի որպէս փոխ ու նուագ
Եւ ձայնասփիւռ՝ մեր բնութեան կաթողիկէն:

Դու՝ լռանիստ մի մազարմատ,
Կպած կոճղին կիլիկեան կոյս նկարչութեան,
Որի գուցէ, ցոլուն, ինչպէս մանկան զարմանք,
Մի հրեշտակն էր ձեռագրում ձեր տոհմական
Դարձրրել քեզ երանգների երկրպագուն
Ծնընդավայր քո քաղաքում:

Օ՛, հաւատում եմ ես վաղուց ի տէր հանգած
Հոգիների տեղափոխմանը սրբնթաց:
Անտարակոյս դու մի պահիկ Ռոսլին էիր,
Երբ «խմարան» էր քո հանդէպ, «Պլիսեցկայան»,
Երբ «Փուսիկի», «Անահիտի» ու «Շաքէի»
Տխրութիւնը, գիշերներիդ դիմակայած,
Քաւարան էր, լոյս ի լուսոյ, պատկեր արեան:

Յայտնութեան պէս, յանկարծակի,
Առանց քո մէջ գերզգալու գէթ մէկ վայրկեան
Տարօնեցու թէ Պիծակի
Հոգիները, որպէս հաղորդ առհաւութեան՝
Այդ դու ինչպէ՞ս, ինչպէ՞ս թէկուզ
Սեւանայ սուրբ Կարապետի վերեւ ցայտած
Աղօթք ամպիկը կ'ամպէիր մեր յանդիման
Ու դէպի լուռ երթերն հոգուս,
Իբրեւ կապոյտ ձիւնը Մասեաց:
Ա՜հ, այդ ամպիկը վաղորդեան...

digitised by A.R.A.R.@

Իսկ Սուրբ Գրքի խիտ, սոսկակոծ անտառներում
Ծաղկածփիկ բացատների պէս անստուեր
Լուսանցքների քիւր թռչնագրերը ոլորուն,
Որ դէմքեր են, ծաղկողների նակատագրեր՝
Այդ նրանք չե՞ն, նրանց գալարքը գեղբնական,
Որ յուշել են քեզ ի ծնէ
Ներքին քաղցած կինին անգամ
Մի շիթ ներկի բնահիւթով
Ի կուշտ սնել:

Եւ դու ներկի ու կտաւի հանդէպ իբօք
Եղար ժլատ, ինչպէս Սեզան,
Որ նուանեց Փարիզն ամբողջ մէ՛կ խնձորով,
Պիրկ, ճարճատուն, ինչպէս աչքը մի կռուազան,
Անկուտ եզան:

Շռայլօրէն եղար ժլատ, ինչպէս Սեզան,
Բայց փարիզեան փառքի վրայ ի սկզբան
Աչք չունեցար բնաւ, ինչպէս, արդարօրէն,
Մի Պօլ Գոգէն կամ Պիսարօ,
Քանզի աչքդ մանկուց արդէն
Բերնէ-բերան լեցուն էր քո հեռու երկրով
Ու բիլ սարով:
«Փոխադրեցէ՛ք ձեր այդ Փարիզը երեւան,
Հասնելուս պէս ծունկի բերեմ...»
Պատասխանիդ մէջ կար ցասում հոմերական
Փարիզահան այն մարդու դէմ,
Որ, նաւ ելած, փորձել էր քեզ վերջին անգամ
Արուեստների այդ պչրուհու
Խոստումների խայծով դիւթել:

Ու ահա դու
Ամէն մէկը Երեւանի մայթերն ի վար
Լուսասիւնի պէս թափանցիկ քնով թղթու
Տերեւի չափ փոքրիկ «խնձոր»-նկարներով
Կեանքից ի մահ եկար-անցար,
Դաժան կեանքում անգամ կեանքին
Լոկ բարութեան բոյր խառնելով:

Փոքրամարմին, պրկուն, ինչպէս
Նշանին նոր խփած մի նետ,
Որ դողդողում է տակաւին,
Քանզի կարծես
Չի սպառել ամբողջովին
Թափն ու սլացքը լայնալին իր աղեղի, —
Ահա այսպէ՛ս ես վարսրւել՝ ջլուտ, ուղիղ,
Թիրախի մէջ իմ ուղեղի:

digitised by A.R.A.R.@

Աչքերդ՝ զոյգ զարմանք ու կամք,
Որ քնորդի դէմ յանդիման
Ցանկարծ նչում էին կարծես.
«Մենք արուեստի հմայական երկրէն կու գանք,
Իսկ դու, ասա՛, ուսկի՞ց բուսար,
Ինչացո՞ւ ես...»
Եւ անյապաղ, սեւեռելով լոկ մի վայրկեան,
Քո տառապանքը դարձրած գուշակ մի քուրմ՝
Սուզում էին, ինչպէս անձրեւը ապրիլեան
Այգեստանի մթար միգում
Ու վրձինի ծայրով լոյսին հանում իսկոյն
Կեանքերի գիրքը յայտնութեան:

Եւ արդէն իսկ քո այս նայուածքը կորովի,
Ինչպէս կորիզը միջուկի մէջ հաղարջի,
Ցոլցլում է պաստառների թարմ կեղեւից
Մեր որմերին եւ շեմքերին մուտք ու դրան,
Եթէ նոյնիսկ նկարչութեան
Նորընծաները աղարծի
Փողոցներով կապկապած են տանում դրանք:

Նայուածք չէր նա,
Այլ անաստուած արտասուքի ոգի նստուածք,
Որ չմաշուեց, այլ լլկանքի տարափի տակ
Կրաղիւսի պէս ժամ առ ժամ կարծրանալով,
Քո կոթողի համար դարձաւ
Մարմարիոնի տոկուն զանգուած:

Ու այդ զանգուածը, տեսնում եմ, իմ բարեկա՛մ,
Ամէն օրուայ մուրճի արդար հարուածի տակ
Քո ձեւերն է հագնում տակաւ
Քո կերպարանքը իսկական,
Որ ես իբրեւ գերագոյն բախտ ու երազանք,
Իմ աչքերի մէջ սեղմել եմ ու գուրգուրել
Ամէնուրեք:

Տեսնում եմ ես:
Տեսայ՝ ինչպէ՜ս
Քո յետմահու տիրական երքը մոսկովեան
Հիացքների, հառաչների հատիչներով
Քո սրտանիստ այդ զանգուածում
Բխեցրեց նոր ձեւերիդ ազնուութեան
Դաշնութիւնը հոգեխռով,
Դէմքիդ համար որպէս տիպար դաւանելով
Քո՛ իսկ տիպարը՝ Հայաստան:

digitised by A.R.A.R.@

Քո կեանքն ամբողջ՝ մանրամասն հարցաքննիկ,
Ամէն երգչի ու նկարչի դէմ առկախուած,
Եւ օրերիդ դրուագումներն իրենց հերթին՝
Հայապատում տարեգրքից
Մէկ-մէկ քաղուածք:

«Զարմանալի՜ Կալենց» ճչաց պսպղալէն
Իւրաքանչիւր օտար հայեացք,
Որ պարուրեց քեզնով հողը դ նախավկայ,
Բայց զարմանքից մեծանալու համար արդէն
Մեր աչքերի մէջ տեղ չկայ:

Դարուց ի դարս գերմարդկայինն է ամէն ժամ
Մեր ոգու դէմ փորձուքեան գուրգը արձակած,
Ուստի երբ որ Դաւթի նման,
Ցաղքահարած՝ ասել ենք «կա՛նք»,
Գատուհասի զարմանահար
Աչքն է չռուել, ինչպէս ձագար.
Մեր կոպերին չի դողացել թարթիչ անգամ:

Եւ թւում է, թէ շրթունքներն են անցեալի
Մեր ներկայի հասակն ի վեր
Սաղմոսում՝ «Ո՜, զարմանալի···»

Զարմանալի,
Որ երբ, ինչպէս կոփուն գեղց,
Խուժն ու դուժը, ներխուժելով,
Զորսհերձել են մեզ անխտիր՝
Դեռ դպրութիւն ունենք, դպրոց
Եւ դպրութեան ոսկեծղի քանի՜ դպիր:

Թող օտարի քիրեր ճչան պսպղալէն
Ու պարուրեն քեզնով հողը դ նախավկայ,
Կոչելով քեզ զարմանալի, հրա՛շք Կալենց:
Ա՜հ, զարմանքից մեծանալու համար արդէն
Մեր աչքերի մէջ տեղ չկայ
Հայ սխրանքի հանքին ի տես:

Դու՝ մեր հողում լեռ-քա՛ռքէն իմանալի,
Մասի՛սքէն նախախնամեալ ու բնական:
Տառապանքի աչքերը թաց շա՛տ աւելի
Լայնաբաց են, քան թէ կոպերը ապշութեան:

Դու՝ պանդուխտի նաւակատիք
Ու հաւատիք ինքնահաստատ,
Թէ անգամ որբ, ինքնուս, անօգ ու աներդիք՝
Կանանների հիմք ու երդիք ենք լոկ հաստած,
Թէ եղել ենք առասպելի մանչուկը այն,

digitised by A.R.A.R.@

Որ յիշելու եւ գտնելու համար ենրէն
Արահետը հայրենի տան
Բոլոր թափառ ճամբաներում, որպէս ցորեն,
Իր պաղպաջուն սէրն է ցրել:

Դու եւ՝ լոյսի բնոյթի պէս բազմահոլով
Երաշխի՛ֆը խորհուրդ խորին այն խորհուրդի,
Որով, դարի թաթառներում դարձդարձելով
Եւ խլուելով երդ ու ուրդից՝
Շկտհիւնը մեր շէներում շաչող սրի
Դարձըրել ենք երգ ու սրինգ,
Աւերանքը վերածել ենք Այրիվանքի,
Եղծած քաղցուն՝ Նարեկացու,
Վերափոխել ենք գիշերները խաւարչտին
Բիւրականի փառքն աւետող «լոյս զուարթի»
Եւ հասկաթուռ ու հրկիզուն
Մեր կալերի մոծիրներից իսկ երկնաչու
Փիւնիկօրէն կալսել ենք մենք լոկ յարութիւն,
Լոկ բարութի՛ւն կալենց հոգու:

. . . . . .

Ծաղկամանիս եղրեւանին,
Որ թօշնում էր, թափւում յուշիկ,
Քո օրերի թերթումների հանած սիւֆից
Կարծես տակաւ ուղղեց տերեւ, շափրակ ու շիւ:

Բայց ես վաղը, իմ բարեկա՛մ,
Պիտի պարտէզ իջնեմ ենրէն, մտնեմ այգի,
Պիտի քաղեմ մանուտ մրգեր, վարդ ու կալլեր,
Որոնց դոյզն ծալքում անգամ,
Ինչպէս ծայրին ասեղնագործ թաշկինակի,
Նոյն ու նման երկու անուան
Սկզբնատառն ես դու ծալել՝
Կեանք եւ Կալենց:

Ա. ԱԼԻՔԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ՍԵՒ ԶԳԵՍՏՈՎ ԿԻՆԸ

Սէրից, կարօտից, իր սիրուհուն վայրկեան առաջ տեսնելու անհուն ցանկութիւնից, նա ասոիճաններով այնքան արագ էր վեր ելնում, որ հագիւ վար չէր ընկնում։

Աշխարհը նա իր ոտքերի տակ էր զգում։

***

Նրա գանդի վրայ, գուրը բացից ամբողջովին սեւեր հագած, ալացիկ մարմնով ու գեղեցիկ դէմքով, երիտասարդ այրին։

Եկուոր պարոնն անմիջապէս նկատեց, որ նա նիհարել է, որ դէմքով աւելի է հասունացել ու լրջացել, որ նրա գեղեցիկ մուգ աչքերն արցունքից աւելի են մթնել, եւ որ նա իր ունեցած գեղեցկութեանն այժմ խառնել է ինչ-որ խորհրդաւորութիւն եւ աւելի գեղեցկացել։

— Ինչպէ՞ս ես, — հարցրեց նա եւ բռնելով երիտասարդ կնոջ ձեռքը, մեծ նուիրումով խոնարհուեց վրան ու համբուրեց։

— Ա՛հ..., — փղձկաց տիկինը եւ իր ձեռքը հանելով նրա ձեռքից, թեւնոցի միջից հանեց թաշկինակը եւ այն տարաւ աչքերին։

— Մենա՞կ ես, — հարցրեց եկուորը, զարմանքից բաց բերանով, նրա լացը դիտելով։

Այրին գլուխն օրօրեց բացասաբար։ Թաշկինակը նորից պահելով իր թեւնոցում, նա ասաց լացակումած.

— Հարեւանուհիներից մէկն ինձ մօտ է... Ներս եկ...

Պարոնի դէմքն անմիջապէս ուրիշ դարձաւ։ Զուարթութիւնն անցաւ եւ նրա փոխարէն տխրութիւն ելաւ։ Հառաչեց, քիչ-քիչ ծռեց մէջքն ու ոտքերի ծայրի վրայ, ինչպէս որ պատչաճ է մի սգատան, հետեւեց տանտիրուհուն։

Ընդունարանում, սրճի ցածրադիր սեղանի առջեւ, բազմոցի վրայ, մի երիտասարդ կին էր նստել ու գինի էր խմում։

digitised by A.R.A.R.@

Այրին եկուորին ներկայացրեց նրան եւ ապա առաջարկեց նստել, ինքը նստելով կնոջ կողքին։

Եկուոր պարոնը նստեց նրանց դիմացը, ցածրաձիր սեղանից մի քիչ հեռու դրուած, մի բազկաթոռի վրայ եւ դլխարկը դրեց ծնկերին։

Ամէնքը լուռ էին, երբ հարեւան տիկինը մի բաժակ դինի պարզելով նրան, հարցրեց.

— Դինի սիրո՞ւմ էք...

Նա ժպտաց նրան շնորհակալ, եւ տեղից ելնելով վերցրեց բաժակը։

Սենեակում երկար ժամանակ լռութիւն էր, երբ եկուորը դինու բաժակը կում-կում խմելով, դիմեց տանտիրուհուն.

— Ինդրում եմ ներել ինձ, որ յուղարկաւորութեանը չկարողացայ հասնել։ Հեռագիրը եկել էր այն հասցէով, որտեղից ես հեռացել էի արդէն...

Հարեւան կինը, որ նրանից աչք չէր կտրում, հարցրեց.

— Դուք ազգականնե՞ր էք։

— Ոչ, տիկին, — պատասխանեց նա, — հանդուցեալը եւ ես նախկին դասընկերներ էինք, միմեանց կապուած... Համարեա՝ միասին մեծացած մտերիմներ...

— Ա՛հ, — թեւերը բացեց հարեւան կինը, — ես երեւակայում եմ, թէ ինչքան մեծ է այժմ ձեր վիշտը։ Ա՛հ, ա՛հ, ա՛հ...

— Այո, — հառաչեց նա։ Ելաւ տեղից, դինու բաժակը տարաւ դրեց ցածրաձիր սեղանին, եւ վերադառնալով իր զահաւորակին, ուզեց լաց լինել։

— Ո՛չ, ո՛չ, — խնդրեց հարեւան կինը, — դուք մի՛ արէք այդ... Դուք ողջամտի էք...

Սակայն, պարոնը չլսեց այդ կնոջ խորհուրդը։ Նա լայն թաշկինակով ծածկեց քիթն ու աչքերը, եւ լացող ձայնով շշնջաց.

— Ինձ համար չատ ծանր է այդ կորուստը... Շա՛տ-շա՛տ ծանր... Ա՛հ, ա՛հ, ա՛հ...

Երիտասարդ այրին, որ դիտում էր նրա խաղացած ներկայացումը, դէմքը շրջեց զղուանքով։

«Մի՞թէ կարող է մէկն այդքան կեղծ լինել», — մտածեց նա։

— Երեւում է, որ դուք ձեր ընկերոջը շատ էք սիրել, — ասաց հարեւան կինը։

Նա աչքերը սրբեց։ Աղմուկով խնշեց թաշկինակում եւ այն պահելով ծոցի դրպանում, դլուխն շարժեց հաստատական։ Յետոյ մերթ տանտիրուհուն դիմելով, եւ մերթ հարեւան կնոջը, հարցրեց.

— Հեռագրում այնքան էլ շատ բան չէր ասուած։ Ինդրում եմ ասել, թէ ինչպէ՛ս պատահեց այդ դժբախտութիւնը...

— Ինքնաշարժային ծանր արկած..., — ասաց հարեւանուհին։

— Ո՞վ էր մեղաւոր, — հարցրեց նա, մտքում հիանալով աղէտի այդ վայրկեանով, եւ օրհնելով բուն մեղաւորին։

— Ա՛հ, — գժգոհեց հարեւան կինը, — մի՞թէ դուք էք մէկին խփողը... Միշտ էլ ուրիշն է ձեզ խփողը։ Դուք վարում էք ձեր մեքենան եւ մէկ էլ բո՛ւմ, եւ դուք այն միւս աշխարհն էք դնում... Այն տարին իմ տարբախտ...

digitised by A.R.A.R.@

— Մահն ինչի՞ց առաջացաւ, — այրուն դիտելով, հարեւան կնոջն ընդհատեց պարոնը։

Հարեւան կինը ձեռքը սրտին դրեց, ցոյց տալու համար, թէ շատ դըժուար է իրեն այդ մասին խօսել, բայց անմիջապէս ասաց խանդավառութեամբ.

— Երկու ինքնաշարժներն միմեանց այնպէսի մոլեգնութեամբ էին բախուել, որ կարծես իւրաքանչիւրը ցանկացել էր դիմացինին սրբել երկրի երեսից...

— Իսկ ի՞նչ վիճակում է խփողը...

— Նոյնպէս... Նրան այդպէս էլ ոչէաք էր, — վճիռ արձակեց հարեւան կինը։

Հեռախօսի սեղանի վրայ դրնգաց զանգը։

Տանտիրուհին ուզեց ելնել տեղից, բայց հարեւան կինը հոգատարութեամբ ձեռքը նրա ուսին դրեց, եւ ինքը տեղից ելնելով վերցրեց լսափողը։ Մէկ րոպէից նա յետ եկաւ եւ դիմեց պարոնին.

— Ամուսինս տուն է եկել, եւ ինչպէս բոլոր ամուսիններն, ուտել է ուզում։ Ես գնում եմ։ Դուք մի քիչ մնացէք։ Չի կարելի մենակ թողնել այդ ազաւոր ղեղեցկուհուն։ Մխիթարեցէք...

— Անշուշտ, — ներքուստ ուրախացաւ պարոնը։

— Տե՛ս, լաց չլինես, — գլուխը տանտիրուհու վրայ օրօրեց հարեւան կինը, ապա խմեց իր բաժակում մնացած մի քանի կաթիլ գինին եւ հեռացաւ։

— Ձե՞ս կարծում, որ դուռը պէտք է փակել, — հարեւան կնոջ հեռանալուց յետոյ, իրենց համար խորհրդաւոր եւ հասկանալի, առնտիրուհուն ժպտաց պարոնը։

Տանտիրուհին չպատասխանեց։ Թուաց, թէ չլսեց։

Եկուոր պարոնը սիրային ժպիտն իր դէմքին, յուսալից խանդավառութեամբ ելաւ տեղից եւ դնաց նստեց երիտասարդ այրու կողքին.

— Լաւ կը լինի...

— Ի՞նչը, — հարցրեց երիտասարդ կինը ծնկերին նայելով։

— Ամէն ինչ, սիրելիս...

— Ձեմ հասկանում — յամառեց տանտիրուհին, չոր, ցամաք ու անտարբեր ձայնով։

Պարոնը բռնեց նրա ծնօտը եւ նրա գեղեցիկ ու տխուր դէմքը դարձրեց դէպի իրեն.

— Խօսքը մեր մասին է, սէրս...

«Սէ՞րս»։ Գեղեցկուհին ցնցուեց եւ ծնօտը հանելով նրա ափից, ասաց կամացուկ.

— Թող...

Երեք տարի այդ կանոնաւոր դիմագծերով երիտասարդը նրա սիրեկանն էր եղել։ Երեք տարի չարունակ այդ պարոնը փայփայել էր նրան, գուրգուրացել եւ այդ բառը դործածել հազարաւոր անգամ եւ նա ընդունել էր, որպէս անհրաժեշտութիւն, որպէս հաղորդակցութեան միջոց։ Ընդունել էր եւ լաւօրէն հասկացել, որ այդ բառը նշանակում էր իրարհասկացողութիւն, փոխադարձութիւն, մարմնական կապ եւ միատեղութեան զդացում։ Սակայն, այժմ այդ բառը զզուանք բերեց նրա մէջ։

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց նա, իր սիրուհու պաղ վերաբերմունքից շփոթուած։

digitised by A.R.A.R.@

— Մենք պէտք է յարգենք նրա յիշատակը, — ասաց երիտասարդ այրին։

— Անշուշտ, — առանց հիմքի, առանց պատճառի ծիծաղեց նա, — թէեւ իրականութեան մէջ դու իմ կինն ես եղել, բայց նա էր քո ամուսինը... Վերջապէս մի յարկի տակ էք ապրում եւ նոյն անունը կրում։

— Խնդրում եմ, — շշնջաց երիտասարդ կինը, — խնդրում եմ չխօսես անցեալի մեր կապի մասին։

Կապը բաւական այրեց նրան։ Նա ուզեց գրկել նրան, համբուրել նրան, եւ պառկեցնել այդ բազմոցի վրայ, ինչպէս առաջներում։ Բայց միայն բաւարարուեց իր ծունկը կպցնելով նրա ծնկանը, որը նա անում էր միշտ ծածկօրէն, երբ նա տենչում էր նրան, եւ երբ նրանք առանձին չէին լինում...

— Հասկանալի է, — ասաց նա զուարթութեամբ, — պէտք է, որ դու տխուր երեւաս... Բայց մենք հիմա մենակ ենք...

— Այդպէս չէ, — ասաց երիտասարդ կինը, ծունկը հեռացնելով նրա ծնկից, — իմ վիշտն անկեղծ է եւ քեզ համար անհասկանալի...

— Ես հասկանում եմ քեզ, — ասաց պարոնը, եւ նորից ծունկը կպցրեց նրա ծնկանը։

— Ո՛չ։ Միանգամայն ոչ, — ասաց այրին։

— Լաւ։ Ինչքա՞ն ժամանակ է քեզ պէտք ամուսնու համար այդ վիշտը, — հարցրեց նա։

— Այդ ինչո՞ւ համար է, — նրան չնչտակի նայեց երիտասարդ կինը։

— Մեզ համար, սէրս... Քեզ եւ ինձ համար։ Մենք կը գնանք այստեղից։ Ո՛ւր ոք ցանկանաս, այնտեղ էլ կը գնանք։ Կարող ենք աշխարհաշուրջ ճամբորդութիւն կատարել։ Կարող ենք Աֆրիկա գնալ առիւծ որսալու։ Կանայք երբ առիւծ են ապանում, այլեւս մէնեռից չեն վախենում... Ուզո՞ւմ ես։ Նիւթականի վախ չկայ։ Գիտես, որ այնքան կայ, ինչքան որ կարիք չկայ ունենալու... Պէտք է ծախսել այդ դրամները։ Քեզ համար ես ոչինչ չեմ կարող խնայել։ Գիտես, որ խենթ եմ քեզ համար։

Գեղեցկուհին զարմանքով էր լսում նրան։ Նրա առածները վիրաւորական էին թւում նրան, երբ պէտք էր, որ հակառակը լինէին։

— Խնդրում եմ չխօսել այդ մասին։

Կնոջ նուրբ ծնկից եկած ծանօթ ջերմութիւնը ողողել էր նրան, իսկ նրա պաղ վերաբերմունքը զրգռում էր նրան, գլխապտոյտ առաջ բերելու չափ։

— Չխօսե՞լ, — զարմացաւ նա, — ինչո՞ւ ոչ, երբ պէտք է ծրագրել մեր ապագան...

— Մեր ապագան ծրագրելու համար նախ պէտք է ճշդել մեր փոխադարձ զգացումները...

— Բա՛հ։ Այդ ե՞րբ է եղել, որ երեք տարուայ սիրահարները նոր նըստել են ու իրենց զգացումները ճշդել, — զարմացաւ նա։

— Խնդրում եմ մեր սիրահարութեան մասին չխօսել։

— Չնչե՞լ մեր սրտերից, — կատակով հարցրեց նա։

— Ինչպէս որ ուզում ես, — սառը պատասխանեց գեղեցկուհին։

— Բայց այն փաստ է, — լռեցաւ նա, — երեք տարի ես հաւատարիմ եմ մնացել քեզ եւ դու էլ ինձ...

— Ո՛չ։ Ես երեք տարի խաբել եմ ամուսնուս։

— Դու չէիր սիրում նրան։ Սիրո՞ւմ էիր։

— Չգիտեմ։

digitised by A.R.A.R.@

— Ես գիտեմ, թէ դու ինչի՞ ես ձգտում...

— Ինչի՞, — տարտամօրէն հարցրեց այրին։

— Մեր ամուսնութեան։

— Ցեռո՞յ։

— Այն կը լինի։ Որ օրը դու ասես, այն օրն էլ այն կը լինի։

— Ես ամուսնութեան մասին չեմ մտածում։

— Ոչ հիմա, անշուշտ։ Բայց դու՝ քանդրհինդ տարեկան համաշխարհային դեղեցկուհիդ չես կարող ամբողջ կեանքդ սեւ հագուստով անցկացնել։

— Ես ամուսնութեան մասին չեմ մտածում, — կրկնեց տանտիրուհին։

— Նոյնիսկ ի՞նձ հետ։

— Այո՛...

— Չեմ հաւատում, — ծիծաղեց պարոնը։

Բայց նա հաւատում էր։ «Ես պիտի մի օր վերամուսնանամ անշուշտ, բայց ոչ այս պարոնի հետ, որն երեք տարի իմ սիրեկանն է եղել։ Եթէ մեր նախկին կապը չլինէր, եթէ այս պարոնի հետ նոր ծանօթացած լինէի, թերեւս ամուսնանայի նրա հետ։ Բայց անցեալի մեր ունեցած պատմութեան պատճառով չպիտի ամուսնանամ նրա հետ, եւ այդ հաստատ է», — մտածում էր նա։

— Ինչո՞ւ», — զարմացած հարցրեց նա ինքն իրեն եւ անմիջապէս զգաց հոգեկան այն ծանրութիւնը, այն անկերպարանք ճնշումը, որն նա զգում էր այդ պարոնի հետ ունեցած կապի պատճառով, ամուսնու մահից յետոյ։

Երիտասարդ կինը նրան նայեց չեչտակի.

— Խնդրում եմ գնաս...

Նա ականջներին չհաւատաց.

— Ի՞նչ ասացիր...

— Խնդրում եմ գնաս...

Երիտասարդը նրան նայեց եւ հասկացաւ, որ նա լուրջ է, որ իր ներկայութիւնը ճնշում է նրան եւ միջին ճանապարհը ընտրեց.

— Ե՞րբ դամ։

— Երբ ուզում ես։

— Վաղը կէսօրից յետոյ։

— Վաղը կէսօրից յետոյ իմ ընկերուհիներից մէկն ինձ իր մօտ է տանում։

— Միւս օրը։

— Ես նրանց մօտ երկար եմ մնալու։

— Ինչքա՞ն երկար։

— Չգիտեմ։

Նա զգաց, որ կորցրել է նրան կամ կորցնելու վրայ է, երբ սիրում է նրան։ Նա ո՛չ միայն այդ քաղաքի առաջին գեղեցկուհիներից էր, այլեւ ամէնից շատ ուշադրաւ կանանցից մէկը։ Խելացի էր ու իմացական։ Նրա հետ ծանօթացող ամէն մէկը անմիջապէս զգում էր նրա մեծութիւնը, որ գալիս էր, նրա գեղեցկութիւնից, բնականութիւնից եւ կարեւորը, նրա հազուագիւտ կանացիութիւնից։ Կորցնել նրան նշանակում էր շատ բան կորցնել։

Նա յիշեց իրենց կապի առաջին գիշերը եւ սարսափեց այն մտայլ ապագայից, որ այդ այլեւս չի կրկնուելու։ Ուշ էր արդէն, երբ նա հասկացաւ, որ սխալ գործեց, երբ բաժանեց վար սահեց եւ դրկեց երիտասարդ կնոջ չքեղ սրունքները.

digitised by A.R.A.R.@

— Ինդրում եմ ինձ չմերժել...

Գեղեցկուհին արգահատանքով նայեց նրան եւ ոտքի ելաւ.

— Ինդրում եմ դնալ այստեղից։

Նա ոտքի ելաւ, վերցրեց դլխարկը եւ ասաց չփոթուած.

— Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում։ Արդեօք դու ինձ կասկածո՞ւմ ես անհաւատարմութեան մէջ։

— Ոչ։ Բայց այդ քո գործն է, — պաղ ու ապանիչ անտարբերութեամբ ասաց երիտասարդ կինը։

Նա չէր ուզում այդ հարցնել։ Բայց հարցրեց, ենթադրելով, որ ժրխտական պատասխան կը ստանայ.

— Չեմ կարծում, որ այդ մեր կապերի խզում է նշանակում։

Նա սպասում էր, նա իրեն շատ երջանիկ պիտի զգար, եթէ կինն ասէր ոչ։

— Այո, — ասաց կինը եւ դնաց նստեց։

Նա զղջաց իր այդ հարցումի համար։ Կապերի վերջնական խզման մասին կինը պէտք էր ասէր, եւ ոչ թէ ինքը հարցնէր։

— Այդ ինձ համար ծայրայեղ դժբախտութիւն է նշանակում, — կործանուած ձայնով ասաց նա։

Թուաց, թէ կինը չլսեց նրան եւ եթէ լսեց էլ, ոչ մի ուշադրութիւն չդարձրեց։

— Դուք ինձ ծաղրում էք, — ասաց նա։

Կինը նորից լաւ մնաց։

Նա պէտք էր, որ այլեւս դնար, բայց ասաց.

— Բայց եւ այնպէս ես կը հեռախօսեմ քեզ։

Կինը ոտքի ելաւ, եւ քայլեց դէպի դուռը.

— Ինչու ոչ։ Չէ՞ որ մենք ծանօթներ ենք...

— Ծանօթնե՞ր ենք, — հարցրեց նա հեռուելով նրան, — մի՞թէ մենք միայն ծանօթներ ենք...

Կինը չպատասխանեց։ Բացեց դուռը եւ կողքի քաշուելով նրան ճանապարհ տուեց դուրս դնալու։

Նա մէկ ակնթարթ վարանեց, յետոյ դուռը ծածկեց եւ շրջուելով դէպի իր նախկին սիրուհին, հարցրեց.

— Ինչո՞ւ...

Կինը դէպի դուռն էր նայում, չտեսնող եւ չհասկացող հայեացքով։

— Ես չպատանեցի քո ամուսնուն, — շարունակեց խօսել պարոնը։

Երիտասարդ կինը հազիւ շարժեց իր շրթունքները.

— Այո։ Բայց դու ուզում էիր, որ այդ այդպէս լինէր։ Ուզում էիր, չէ՞։

— Ես ուզում էի, որ դու նրանից բաժանուէիր։ Դու էլ էիր ուզում։ Ցիչո՞ւմ ես։

— Բայց դու հիմա ուրախ ես նրա մահով։ Ասա՛, ուրախ չե՞ս, — ուրիշ բան ասաց կինը։

— Ես ուրախ եմ, որ դու ազատ ես հիմա։

Կինը բարկացաւ.

— Ազատ եմ իմ ամուսնու մահո՞վ։

— Դու չէիր սիրում նրան։

— Դու չես, որ պիտի ճշդես իմ զգացումները։

— Կար ժամանակ...

digitised by A.R.A.R.@

— Չխօսել այդ ժամանակի մասին, — նրան ընդհատեց գեղեցկուհին։

Նա արձակեց իր քունքերը եւ հարցրեց.

— Արդեօք մենք երազո՞ւմ ենք գտնուում։ Ես շատ երջանիկ կը զգամ ինձ, եթէ ասես այո։ Ես ոչինչ չեմ հասկանում։ Ոչի՛նչ։ Սա, որ ես երազում եմ...

Կինը չրջեց դէմքը, եւ յոգնակի խօսեց.

— Գնացէ՛ք։ Պահանջո՛ւմ եմ, որ գնաք։

Պարոնը նայեց նրա ծոծրակի խաւնիխուռն մազերին եւ նորից հառաչեց։ Այդ մազերը միշտ էլ նրա մէջ ապրումներ էին առաջացնում։

— Թերեւս, ես խենթանամ։ Ասում են մարդիկ խենթանում են երեւոյթների անհասկանալիութիւնից, — ասաց նա։

Իր ծոծրակի վրայ զգալով նրա հայեացքը, կինը դէմքը չրջեց նրա կողմը։ Նրա դէմքը կարմրել էր, իսկ հայեացքը չոր էր ու անհաղորդ.

— Ես սպասում եմ, որ դուռը փակեմ, պարոն...

Զգալով, որ իր նախկին սիրուհուն հասկանալու եւ նրա հետ հաղորդման մէջ մտնելու իր ջանքերը ի դուր են անցնում, նա դէշ զգաց իրեն։ Շատ դէշ։

— Դու ինձ դուրս ես անում, — ասաց նա, — նորից եմ հարցնում։ Ինչո՞ւ։ Ի՞նչ եմ արել ես...

Սակայն, թւում էր, թէ սեւ զգեստով կինը նրան չէր լսում։ Կանգնել էր եւ դէպի դուռն էր նայում անհամբեր։

— Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում, — ասաց պարոնը եւ ապա դուրս գնաց։

Նա հաղիւ էր դուռը ծածկել, երբ լսեց, թէ ինչպէս ներսից բանալին դարձաւ դրան կղպանքում։

Նոյն վայրկեանին, վերջին երկու ժամուայ ընթացքում նա առաջին անգամ լինելով հասկացաւ, որ ամէն ինչ վերջացաւ այդ կնոջ եւ իր միջեւ եւ ամայութիւն զգաց իր մէջ։ Նրանից հեռացաւ ինքնավստահութիւնն ու ինքնագոհութիւնը եւ նա անհունօրէն խեղճացաւ։ Խեղճացաւ այնքան, որ չնայած այն բանին, որ ինքը մի մեծ հարստութեան ժառանգորդ էր, իրեն այնպէս թուաց, որ երբ փողոց դուրս գայ, գլխարկը պիտի բռնի եւ անցորդներից ողորմութիւն պիտի խնդրի։

ՍՈՒՐԻՆ ՍԱՆԻՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՒՐԻԶԵԱՆ

«ԵՒ ԵՂԵՒ ԽԱՒԱՐ...»

Յուսկեան խոհեր...

Ճակատագրուած էր ծնիմ այսպէս,
Զանախչի գիւղին մէջն այս հեռաւոր,
Ուր բնութիւնը՝ մօր մը ձեռքին պէս՝
Կը շոյէր հոգւոյս խոհերը մոլոր...
Հայրենի՛ յուշեր, հայրենի՛ ցաւեր,
Ձիս մահէս եռքն իսկ հանգիստ չէ՛ք ձգեր...

Հայրենի՛ յուշեր, հայրենի՛ ցաւեր,
Կը ճայիմ հիմա ձեզ՝ ...այս հեռաւոր
Եւ խաւարակուռ աշխարհէն հեռու,
Մահուա՛ն գնտանէն...
Այս մութ աշխարհէն կը ճայիմ հեռո՛ւ,
Իմ անցեա՛լ կեանքին եւ չե՛մ հաւատար,
Թէ իմ կեանքը ե՞րբ, ո՞ւր կորսնցուցի,
Ո՞ր խենթ մարտին մէջ,
Կամ անհաւասար
Ո՞ր խենթ գուպարին մէջը սնամէջ...

Եւ ձե՛զ՝ հայրենի սարեր ու հովեր,
Ցումպէտոս վատնուած արիւնիս դիմաց,
Ի՞նչ վճարուեցաւ իբրեւ արեան գին.
Հայրենի՛ երկիր... իմ միա՛կ անգին...

digitised by A.R.A.R.@

Հայրենի՜ եզերք...
Իջած է եիմա վարագոյր ու փեղկ
Եւ իրենց ետին՝
Ծածկած են խելառ պատկերներ ու տեսք,
Փշչ-ուած զանկեր, ոսկորներ ու դե՜կ,
Հայրենի՜ եզերք...

Հայրենի՜ եզերք...
Ամէն երեկոյ, երբ խաւարին մութ
Վերմակին ներքեւ ճիրեան կ'ըլլաս դուն,
Կը վերադառնամ ուխտաւորավայրէս,
Եւ փողոցներուդ ամայութեան մէջ
Կը շրջիմ տխուր՝
Գլխահակ ու լուռ,
Թէ չըլլայ խելառ քամիներ անգութ
Փչեն վերստին՝ քիրտ ու վայրահակ,
Եւ իրենց արնոտ ներքաններուն տակ,
Ձեզմեն մատղաշ կեանքեր ոորածաղկ,
Հայրենի՜ եզե՛րք...
Հայրենի՜ եզե՜րք...

Ապա վիրաւոր կողս սեղմելով՝
Ջարդուա՛ծ ափով,
Ուր վէրք մ'է ծաղկեր վարդի՝ պէս կարմիր,
Ո՛ւր վէրք մ'է բուսեր դրօշի՛դ պէս հիր,
Կոտրած սրունքով կը շրջիմ անծիր
Դաշտ ու ձորերդ ապառաժակուռ,
Եւ մարմինիս պէս աւերա՛կ, ջարդուա՛ծ,
Տանարներուդ մէջ կը ծնրադրեմ լուռ,
Եւ պաղատագին կ'աղօթեմ տխուր,
Որ ա՛լ թողութիւն տրուի քմահաճ՝
Արկածներուն զուր,
Թողութի՛ւն տրուի թող ստրկահաճ՝
Արկածներ հիւսող սեւ ձեռքերուն քիւր,
Եւ սակայն բա՛ւ է, զինո՛վ, քի՛րտ Աստուած,
Մութ արկածներուն այլեւս վե՛րջ տուր...
Եւ հաշուեփակը այս խե՛նթ պայքարին՝
Թող որ ե՛ս ըլլամ ու զո՛նը վերջին...

«Տէ՛ր ամենակալ... Աստուա՛ծ արարիչ»,
Մարէ՛ հոգիներն քու ձեռակերտիդ,
Ա՛լ բաւ է ըլլայ մարդը զրպարտիչ
Եւ որոգայթի մասնագէտ մը ենգ,
Նախանձն ու ոխը թող որ ալ երբեք՝

digitised by A.R.A.R.@

Զբլլաց առաջնորդ խոհերուն խառվ,
Եւ խաւարակուռ հոգիներուն մուք,
Իսկ արկածները քմայքով անգութ՝
Հինգեն կեանքեր մուրն ու մանգաղով...

«Տէ՛ր ամենակալ... Աստուա՛ծ արարիչ»
Ա՛լ բաւ է բլլայ մարդը գրպարտիչ...

Եւ այնուհետեւ կ'ընթանամ ապա
Դէպի հեռաւոր իմ գիւղի ճամբան,
Ուրտեղ իմ կեանքը մտաւ գերեզման՝
Ժպի՛տ մը դէմքին,
Հարցման նշան մը շրթներուն վրայ,
Եւ քմծիծա՛ղ մը անհաւատութեան...
Արկածավայրի ամայութեան մէջ
Կանգնած հարց կու տամ.
— Հո՞ս... ա՞յս վայրին մէջ քարդուեցար, գա՛նկ,
Օ՛, միթէ փխրուն
Ընկո՞յզ էիր դուն՝
Թէ ոչ խաւաճարտ,
Որ փշրուեցար դուն այսպէ՞ս արագ,
Ախորժակներէ նե՛նգ, թի՛րտ ու վայրագ,
Այս հարթավայրին մէջն իսկ տափարակ...

Հարցման նշան մը կը թառի դէմքիս
Եւ ապա հեգնող ու նոյնքան լկիչ,
Սպանո՛ղ, անգո՛ւթ,
Քմծիծաղ մը չար դալուկ շրթունքիս...

Կը փչէ քամին...
Օ՛, իմ «կարօտած» հայրենի՛ քամին
Իր ընդարմացած, սառած մատներով
Կը շոյէ հոգւոյս խոհերը խառվ...

Արկածավայրն ու
Տանարներն ետիս լքելով ապա,
Որպէսզի Աստուած սրբազրէ ինքզինք,
Եւ ձեռակերտին նենգութիւնը բիրտ,
Կը վերադառնամ քե՛զ... ո՛վ հեռակայ
Պապենակա՛ն տուն,
Ի՛մ ծննդավա՛յր՝, իմ Զանախչի՛ գիւղ,
Եւ տանս շեմին կը ծնրադրեմ լուռ
Ու պաղատագին կը հայցեմ տրտում՝

digitised by A.R.A.R.@

— Դուն դալա՛ր մնաս, իմ Ջանախչի՛ գիւղ,
Եւ մնաս ամա՛ւր,
Հողմերուն դէմ բիւր,
Թող որ ե՛ս ըլլամ քու զոհը վերջին,
Դուն ծլարձակէ եւ ամէ՛ն գարնան
Սեւակնե՛ր տուր բիւր...
Կոյր ստրկութեամբ չհնձե՛ն սակայն՝
Արկածներն այսպէս քմայքով անգութ,
Կարմի՛ր, արիւնռուշտ ձեռքերով վարձկան —:

Ջանախչի գիւղին աչքերուն առջեւ,
Նետուած է մռայլ հողակոյտ մը սեւ:
Գերեզմա՛նս է այդ՝
Կամ ապացոյցը մարդո՛ց մեղապարտ:
Կը կանգնիմ ապա շիրիմիս վերեւ,
Ուր իմ մարմինս է նետուած հողին տակ՝
Իրրեւ խորտակուած ու անշունչ դիակ:
Դիակիս կողքին կը հանգչի տխուր
Ոգեբզօրքիւն մը մթամոգ ու լուռ:
Լռութիւններ կան, որ կը մեղանչեն,
Ճշմարտութիւնը բանտած կը տանջեն:
Թարմ է տակաւին հողակոյտը իմ,
Նետուած են որուն վրայ ցան ու ցիր
Ծաղիկներ գունեղ եւ վարդեր կարմիր:
Ամբոխ մը հանուր՝
Բարեկամներ բիւր,
Եւ կեղծ մարդերու վոհմակ մը դժխեմ
Մահուան .քարափին այս փոսին առջեւ՝
Հոգիներով սեւ,
Ոգեբեր են մաղթած,
Չիս ծաղկեփունջով ճամբու են դրած:
Անոնցմէ ոմանք՝
Նե՛ղ ու խորամանկ,
Իրենց հոգիին թոյնը թափցուցած,
Ծաղիկներով են իմ մահուան ճամբան
Պենա՛ծ, զարդարա՛ծ,
Եւ ծախած են զիս Ցուդայի նման
Համբոյրներով տաք...

Ու մոլեգնօրէն՝
Ինչպէս գազազած մարդ մը անօրէն
Կը սկսիմ փորել հողակոյտը իմ:
Տրորուած վարդեր մատներուս միջեւ՝
Մեղմիւ կ'արիւնին,
Եւ կը դատարկուի հողակոյտս սեւ:
Ահա պառկած եմ շիրիմին ներքեւ...

digitised by A.R.A.R.@

Եւ ապա կ'առնեմ զանկս ափիս մէջ,
Ինչպէս անցեալին առած էի խեղճ
«Մարդը ափի մէջ»։
Հիմա դարձեր եմ եւ ես իմ կարգին
Խաղալի՛ֆ՝ ...մարդոց սեւ ափերուն մէջ։
Եւ յանկարծ, հրա՞շք, իմ ափերը սեւ
Կը ճերմկին իսկոյն՝
Մարդոց արիւնռուշտ ափերուն առջեւ։
Գա՛նկս ափիս մէջ՝ ...մարդկութեան մե՞ղքը
Սեւ ափերուս մէջ։
Կը ճայիմ զանկիս լուռ ու շուարուն,
Ապա փշրուած կուրծքիս վանդակին,
Եւ տարտղնուած վէրքերուս բոսոր։
Կ'ազօթէ շուրջս լռութիւն մը խոր...
Եւ քնծիծաղ մը դալուկ շրթունքիս։

Կանգնած է մահը ստուերիս ներքեւ։
Ու կը սեւեռեմ աչքերս ուղի՛ղ
Մահուան աչքերուն։
Մահը գլխահակ
Ու ամօթանքով կը թոթովէ մեղմ.
— Ես չգտա՛յ քեզ,
Այլ դո՛ւն գտար զիս —։

Ոչո՞յն քեզի, հո՛գ,
Որ կը ծածկես քու լաչակիդ ներքեւ՝
Մարդոց դաւերն ու ոճիրները սեւ...

● Ես կ'ուզեմ ըլլալ այսօր գրպարտիչ,
Նե՛նգ գրպարտութեամբ ըսելու համար,
Թէ աշխարհի մէջ չկան մարդիկ չար՝
Իմ անձէս բացի.
Քանզի չկրցայ ըլլալ անարդար.
Եւ մոլեգնօրէն,
Պախարակելի՛ն՝ պախարակեցի՛,
Քննադատելի՛ն՝ քննադատեցի՛,
Մինչեւ ստացայ կեանքիս աքացի՛...

● Ես կ'ուզեմ ըլլալ այսօր փաստաբան,
Փաստելու համար,
Թէ աշխարհի մէջ սեւ ձեռքեր չկան
Եւ չկան արեան մէջ խեղդուած խիղճեր։
Միայն ու միայն ի՛մ ձեռքերս են սեւ։
Ուրեմն, բա՛ւ է եւ ա՛լ մի ցեղէք,

digitised by A.R.A.R.@

Մարդոց խելագար արշաւին առջեւ,
Գնում քամբասանք եւ խօսքէ խիներ:
Հանգիստ ձգեցէք մարդիկը սակայն,
Իրենց մոլորած խիղճերուն առջեւ:
Եւ ունակութեամբ մի՛ միջամտէք
Իրե՛նց եւ իրենց խիղճերուն միջեւ:
Միայն ներեցէք անձիս, որ ըսեմ՝
Անոնց խիղճերը դիմակ կը կրեն:

● Ներեցէք, որ ես ըլլամ լուստես
Եւ ո՛չ յոռետես...
Ու չմոլորիմ ես ալ ձեզի պէս՝
Կասկածանքի ու
Կեանքի եւ մահուան խռիներուն մէջ մուք,
Որքան ալ շուրջս տիրէ ապշամուղջ,
Եւ լույսը խեղդուի մէգին մէջ տղմուտ...
Անա թէ ինչու,
(Օ՜, հաւատացէք քայց եթէ կրնամ)
Գրիչս մնաց այդ նիւթերէն դուրս,
Եւ սակայն նոյնպէս
— Ո՜վ ոգեւորութիւն — կեանքս՝ ...ինձմէ դուրս:
Ո՜վ Սոկրատ, զուր չէր, որ ազատեցիր՝
Լո՜յս... ու միա՛յն լոյս:

● Ես կ'ուզեմ ըլլալ այսօր մասնագէտ,
Ցոյց տալու համար,
Թէ հարթավայրին մէջն իսկ տափարակ
Կը շրջին կառքեր,
Եւ մահը անվոյթ կը հնձէ կեանքեր...
Սակայն, ո՜վ կատակ,
Խիղճեր չե՜ն մեռնիր այդ կառքերուն տակ:
Այլ կառքերուն մէջ՝
Կը շիջին մարդիկ եւ կեանքեր անշէջ...

● Ես կ'ուզեմ ըլլալ՝ այսօր խեղկատակ,
Ես կ'ուզեմ ըլլալ՝ այսօր ծաղրածու,
Ես կ'ուզեմ ըլլալ՝ պարզ ու հասարակ,
Ես կ'ուզեմ ըլլալ դեռ աւելածու,
Եւ ալե՛լ մարդոց հոգիներէն դուրս,
Արդարութի՛ւնը՝ ազրի՛ վերածուած,
Եւ ալե՛լ մարդոց հոգիներէն դուրս՝
Վատութեան մուրը՝ հոգին խաւարած,
Որպէսզի մարդուն սիրտը աւերակ,
Մնայ սպիտա՛կ, անաղարտ ու կոյս:
Եւ երբ որ անոր այցի գայ Աստուած,

digitised by A.R.A.R.@

Զզոչայ կերտած իր ձեռակերտին,
Այլ ապրի՛ կրկին խաչկանքը խորին,
Կրկնելով պատիր յանկերգը նախկին.
— Գուշակութիւնս չանցաւ ապարդիւն,
Զուր չէր, երբ ըսի՝
Մարդ արարածի սիրտը ու հոգին,
Հայելիներն են՝
Իմ դիմագծին եւ ներաշխարհին —:

Սակայն դուն, ա՜խ,
Որ կը մաքրես միշտ մարդուն սիրտը սեւ,
Ե՛ւ Աստուծոյ իսկ դուն կը պարգեւես
Մութ խաչկանքներու փախուստի ճամբայ՝
Ընդմիշտ հարթելով ճամբաներն անել,
Մնա՛ յարատեւ՝
Մարդոց ժանգոտած փակ սրտին ետեւ,
Քու այդ սրբազան պաշտօնիդ վրայ...

● Ես կ'ուզեմ ըլլալ այսօր հաշտարար՝
Արդարութեան եւ Աստուծոյ միջեւ,
Որ արդարութիւնն Աստուծոյ վրայ,
Քննադատութեամբ ա՛լ չբռնաճայ:
Եւ կ'ուզեմ ըսել ես արդարութեան.
— Նոր չէ որ սակայն
Աշխարհը փուն է ու կեանքը ունայն:
Նոր չէ որ սակայն
Արդարութիւնը կը հիւծի դաժան,
Ներքաններուն տակ բռնակալութեան:
Այս կշիռները ժանգոտած էին,
Թուականներէն հինաւուրական:
Բայց քառորդ դարու լռութենէն ետք,
Անոնք ասպարէզ իջան վերստին,
Արձանագրելով նուաճման վերելք —:

Եւ կ'ուզեմ ըսել խե՜ղճ արդարութեան,
— Ո՜վ արդարութիւն,
Ներքինիացած ոգի՛ ապստամբ,
Սիրելինե՛ր՝
Կը մեռնին իրենց սիրելեաց ձեռամբ —:
Փարատէ՛, ո՛վ ամպ...

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՒՐԻԶԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՕՐԱԳՐԷՍ

ԽՈՋԵՐՔ, ԱՆ, ԵՒ ԱՅԳ ՄԻՍՏԵՐՔ

ԱՐԱՔՍԻ Ն. ՋԱՐԽՈՒՏԵԱՆ

5 Յունուար, Փարիզ

Մինակդ կը քալես Սէն Միշէլի երկայնքին. բազմութեան չես նայիր. անոնք չկան. անմբեւը կը թրջէ գուլպաներդ, հագուստներուդ մէկ մասը, քիչ մըն ալ սիրտդ. դանդաղ քայլերով Հիւչէթէն կ'անցնիս Սէնի կողմերը... Երկա՞ր կը չնչես. խոզերը հեռու են այլեւս, մղոններո՞վ, տիեզերքներո՞վ, աշխարհներո՞վ հեռու են այդ պարարտ, չտաղտոյն, վարդագոյն խողերը, որոնց ամէն մէկ ատինքը բոպէներու պէս սահուն, մարմինդ կը կչռէ...

Գրպաններդ պարապ են եւ արեւ չը կայ. ցուպի մը վրայ յենած՝ սեւամորթ ծեր մը գինի կը փսխէ եւ կը հայհոյէ...

Երկա՞ր կը չնչես, Ակնէս. հեռու են անոնք. սակայն կը զգաս կրակը. գեհենը չես սիրեր. սակայն կը սիրես կրակը... կը զգաս, որ ծիծերդ կ'ուռին, կ'ուռին յանկարծ անոր անունով... Եթէ քովդ ըլլար հիմա, մատները դնէր վզիդ, թեւերուդ, ատինքներուդ խրախճանքէ զուրկ կրակին վրայ... պրկէր ջիղերդ, սպաննէր մանիշակագոյն միսերուդ ամեհի աղաղակը, բերանդ առնէր արիւնով լեցուն շրթունքներուն ներքեւ, եւ զգայիր, որ կաս, կեանքի մը մատներուն առանցքին՝ կաս...

Այս առաւօտ անգլիացի բարեկամուհիդ մեկնեցաւ, նաեւ իր ամուսինը. անոնց լիճի նման աչքերուն մէջ նշմարեցիր արցունք, բարբարոս, ցայտող, հնացող արցունք. ինչո՞ւ լացին այդպէս, փոքրիկ, մոայլ երեխաներու նման. չէ՞ որ քաջ էին, քեզ կը սիրէին... Այպէոն ու Անտրէն չկան հիմա, սակայն ան կայ. հեռու է, մղոններով, հեծեծանքներով, ծաղիկներով եւ վէրքերով հեռու. խոզերուն քոմն է ան. տկար են անոր ուսերը, տկար՝ ճակտին բոցը, սակայն անոր սեւ

digitised by A.R.A.R.@

աչքերը կատաղի են՝ պռաւոյող երկինքներու նման...

— Ա՜հ, դարձեալ խոցեր, — մէկը չի լսեր քեզ, եւ ճակատդ կը պռաի վիշապի պէս վայրագ ցուրտէն. սրունքներդ գեղցիկն են, սակայն մէկը չկայ անոնց նայող... «Գացէ՛ք», պռաւցիր ամէնուն. լսեցիր օրէնքներու փչրուիլը, նեռուիլը, ներիլը. լսեցիր անպատկառ քրքիշներ ակռաներու ասկէն սպրդած. սակայն մահը տեսնել չուզեցիր. մահ չկար դեռ, Ակնէս, որովհետեւ կար իղձը. իղձը, որ կ'ամբարուէր սրտիդ դուիրին տակ, որ տակաւ կը պատռէր կուրծքիդ թաղանդը...

Բիրերդ կը լողան ջուրին մէջ. մարմնիդ ճերմակ մխսերը կ'երերան անոր հետ. հեռուն՝ թշնամիի ուժգնութեամբ կը մոնչէ վայրագ ան. կը քալես ձեռքերդ դրպաններուդ. սոինքներդ հեռզհետէ կը պաղին. երազի պէս մութ էր օդը. երկինք չկայ. եւ ան հեռու է. ան, յոյն աղան, առաջինը, որ չ'ըղձար քեզ. կուլ կու տաս թուրդ. իղձդ ջուրին մէջն է եւ սիրտդ չի ցաւիր այլեւս. ոչ ալ՝ կրակի պէս մկաններդ. ցաւդ ինկաւ ջուրին յատակը. Սէնին ջուրը կը պղտիկնայ, կ'ըլլայ բաժակ մը ջուր եւ անոր մէջ անոր դէմքը. շրթները, թոքերու պէս վարդագոյն շրթները, կ'երերան. սակայն երկու ամիսի, հսկայ, կիզիչ խոցեր կաշկանդած են անոր մարմինը... չես տեսներ անոր մխսերը, սակայն գիտես, որ ան կը ճզմուի հեռզհետէ եւ կ'ըլլայ զանգուած մը միս... եւ կ'իյնայ թուղթի մը պէս... թուղթի մը պէս կ'իյնայ պարապին մէջ... կը կորսուի...

Օրերը պիտի համբե՞ս այլեւս...

9 Փետրուար, Փարիզ

Ակնէ՛ս, Սէնը մութ է այսօր, անոր աչքերուն պէս. սակայն կը տեսնես զայն կրկին, ջուրերուն վրայ։ Անոր դէմքը ջուրերուն մէջն է...

Գովդ կեցած է հիմա զմբեւը, որուն գեղին մազերը կը զարդարեն ճակտին պղտոր գեղինը։

— Դուն բարի ես, — կ'ըսէ քեզի տղան. կը նայիս իրեն. անոր երեսարդ կուրծքը կը դողայ բիբերուդ ճոին չէն։ Ի՞ուրեմն պռաւլ, պռաւ՞լ գոյութիւնդդ. սակայն՝

— Գիտե՛մ, — կ'ըսես ականջին չառ կամաց։

— Այսօր գերեզմանոց գայի, — կը շարունակէ տղան դանդաղ, — աղջկանս գերեզմանը այցելելու. մէկը չկար գերեզմանատան մէջ. ծաղիկներն ալ չկային. ամէն տեղ աւերակ էր. այդ գեղեցիկ վարդերը, զորս դուն տարած էիր՝ չկային... միայն հողէ ամանի մը մէջ քիչ մը ջուր տեսայ։

— Ո՞ր ծաղիկները, — կ'ըսես. մոռցա՞ծ էիր...

— Որքա՜ն զաւակս ուրախացաւ գաղիս մէջէն վարդերուդ համար. որքա՜ն... կը զգայի պաղած շրթունքներուն մանուկի իր ժպիտը...

Ալպէ՜ռ, Ալպէ՜ռ. ինչո՞ւ այդպէս տխուր ես. մի տխրիր, տղայ. մղձաւանջը մեռցուր ակռաներովդ. այլեւս մի սիրեր, մի՛ սիրեր մեռելները...

— Գիտե՞ս, կարդացի ֆրանսերէնով գրած վէպդ. այդ բանաստեղծ տղան ո՞վ է... Իրապէս կ'ապրի՞... գոյութիւն ունի՞... ըսէ՛։

— Ան երազ մը չալկած կողին՝ կը ննջէ խոցերուն մօտ... եթէ գիտնաս... Երբե՛ք չըղձայ զիս... Տարինե՛ր առաջ էր...

Ալպէռ կը թարթէ երիտասարդ աչքերը, կանաչ նայուածքը կը խառնուի ջուրին. կը սառի... կը...

— Կը հաւատա՞ս պատերազմին եւ ... առաքինութեան...

— Հեղ մը միայն խօսած էի իրեն հետ... կը յիշեմ այդ օրը...

— Գիտե՞ս, Ակնէս, առաքինութիւն բառը չատ գործածողները կամ սառնասիրտ քահանաներ կ'ըլլան եւ կամ... պոռնիկներ... ուստ ընկերուհի մը ունէի ա-

Գովդ կեցած է հիմա զմբեւը, որուն գեղին մազերը կը զարդարեն ճակտին պղտոր գեղինը։

— Դուն բարի ես, — կ'ըսէ քեզի տղան. կը նայիս իրեն. անոր երեսարդ կուրծքը կը դողայ բիբերուդ ճոին չէն։ Ի՞ուրեմն պռաւլ, պռաւ՞լ գոյութիւնդդ. սակայն՝

— Գիտե՛մ, — կ'ըսես ականջին չառ կամաց։

— Այսօր գերեզմանոց գայի, — կը շարունակէ տղան դանդաղ, — աղջկանս գերեզմանը այցելելու. մէկը չկար գերեզմանատան մէջ. ծաղիկներն ալ չկային. ամէն տեղ աւերակ էր. այդ գեղեցիկ վարդերը, զորս դուն տարած էիր՝ չկային... միայն հողէ ամանի մը մէջ քիչ մը ջուր տեսայ։

— Ո՞ր ծաղիկները, — կ'ըսես. մոռցա՞ծ էիր...

— Որքա՜ն զաւակս ուրախացաւ գաղիս մէջէն վարդերուդ համար. որքա՜ն... կը զգայի պաղած շրթունքներուն մանուկի իր ժպիտը...

Ալպէ՜ռ, Ալպէ՜ռ. ինչո՞ւ այդպէս տխուր ես. մի տխրիր, տղայ. մղձաւանջը մեռցուր ակռաներովդ. այլեւս մի սիրեր, մի՛ սիրեր մեռելները...

— Գիտե՞ս, կարդացի ֆրանսերէնով գրած վէպդ. այդ բանաստեղծ տղան ո՞վ է... Իրապէս կ'ապրի՞... գոյութիւն ունի՞... ըսէ՛։

— Ան երազ մը չալկած կողին՝ կը ննջէ խոցերուն մօտ... եթէ գիտնաս... Երբե՛ք չըղձայ զիս... Տարինե՛ր առաջ էր...

Ալպէռ կը թարթէ երիտասարդ աչքերը, կանաչ նայուածքը կը խառնուի ջուրին. կը սառի... կը...

— Կը հաւատա՞ս պատերազմին եւ ... առաքինութեան...

— Հեղ մը միայն խօսած էի իրեն հետ... կը յիշեմ այդ օրը...

— Գիտե՞ս, Ակնէս, առաքինութիւն բառը չատ գործածողները կամ սառնասիրտ քահանաներ կ'ըլլան եւ կամ... պոռնիկներ... ուստ ընկերուհի մը ունէի ա-

digitised by A.R.A.R.@

տենին... կը վճարէի ճաշերը, հագուստները, գիշերները... այդ բառը յաճախ կը գործածէր... կը կարծէի, որ առաքինի է... յետոյ՝ հասկցայ... կոնակէս, գազոնի, բարեկամներէս բոլորին հետ ալ պառկած էր... ստախօսը...

— Ցանցանք գոյութիւն չունի երբ չ'երեւիր... յանցանքը հրապարակին թշնամին է... Գալով պատերազմին... ա՜հ, պատերազմը, Ալպէռ, ուրիշ բան է այդ, ուրի՜շ բան, կը հասկնա՞ս...

Տղան շուարած կը նայի շրթունքիդ, ճակտի՛դ, վզի՛դ... անոր կանաչ աչքերը բոցեր կ'արձակեն, կարմի՜ր բոցեր։

— Այդ բանաստեղծ տղան կը սիրե՞ս, — կ'ըսէ յանկարծ եւ կը սպասէ զայրոյթ ովկիանոսի՜ նման անհուն բոպէին...

— Ո՛չ, — քրքիջդ կ'իյնայ ջուրին մէջ, եւ կը մեռնի յանկարծ, — այդ բառը չկայ։

— Ի՞նչ կ'ուզես իրմէ, ի՛նչ կը սպասես իրմէ։

— Կ'ուզեմ կեանքս խեղդէ բազուկներուն մէջ... Կ'ուզեմ մխերս այրէ՛... այրէ... մեռնիմ իր բազուկներուն մէջ...

Սէնը կը շարժի, Ալպէռ դաւաթ մը ջուրին քովն է. բիրերը կը ճեղքուին, կ'ելլան կլոր վէրքեր. անոր աչքերը մէկական վէրքեր են եւ անոնցմէ արիւն կը կաթի, սեւ արիւն մը, որ կու լայ...

— Գիտե՞ս որքան կը սիրէի զայն։

— Զո՞վ։

— Կինս։ Ան՝ որ մեռաւ, ազգականս մայրը, անոր մահէն հաք ան ալ մեռաւ...

— Դուն, Ակնէս, դո՛ւն, չորս տարիներէ ի վեր դուն կաս. մի՛այն։

— Ե՞ս, — կ'ըսես խնդալով, — ի՞ս... ի՞ս..., — յետոյ, — ինչո՞ւ ես, ես, որ կը կրեմ... ծանրօրէն կը կրեմ այդ... Ձեռքերդ խոնաւ են, — Ալպէռ կը հպի մատներուդ։

— Կը մոռնես շրթայիդ մասին, չէ՞...

— Շրթա՞ն... միշտ կը մոռնեմ... Շրթան կը նմանի անոր. այդ շրթան, որ օր մը եկաւ ծալելու մարմինս... որքա՞ն չարչարուեցայ... միսերս ցաւեցան... մէկը չեկաւ... պահ մը նշմարեցի բռնութիւնը, որ, ձեռքերը կարկառած՝ ինծի կու գար... Փախայ... անոնց դէմքին վրայ տեսած էի Խոզի կեղծիքը... ժպիտը։

— Ակնէս, մի՛ խօսիր... մի՛ խօսիր...

— Շրթան ծալեց վիզս... ձեռքերս սկսան դողալ. փշրել ուզեցի այդ հաւատքի նման ամուր շրթան. փարոսը չտեսայ. լոյսերը մարած էին, խոզերը հեշտանքով կը գալարուէին հրճուանքէն. ուրախ էին... անոնք կը սիրեն չարչարանքը դիտել... ուրիշի՞ն չարչարանքը...

Ալպէռին բերանը կը դողայ ազօթքի մը բառերուն նման... անոր աչքերէն կը ժայթքէ մոլեգին, մեռազեայ աղաղակ մը.

— Մի՛ խօսիր, — կ'ըսէ քեզի, — ո՞վ բերաւ քեզի այդ շրթան, ո՞վ... ըսէ՛. ո՞վ... ես պիտի պատուեմ անոնց երակները... Է՛ս... պիտի թքնեմ իրենց երեսին...

— Անոնք, որոնք ծնած օրէս տեսայ... Առաջին խոզերը... Ալպէռ... ո՛չ մէկը ձեռք երկարեց. Անարէն, որուն հետ կ'ապրէի, մեկնեցաւ... Շրթան չէր փչրուեր... Ցասումով ուժի կանգնեցայ։ Շրթան առի պողպատի պէս հոգիիս խորերը... եւ փշրել ուզեցի. սակայն շրթան փշրելու տեղ՝ փշրեցի հոգիէս մաս մը. այդ մասը ինկաւ... խոզերը ծռեցան, ախորժակով կերան հոգիիս թանկագին այդ կտորը... Դառնութիւնը արեանս մէջ դարձաւ արիւնի, որ արեան դոյն չունէր... արդանդս պրկուեցաւ ցաւագար կնոջ մը բերնին պէս. սակայն շրթան ամրացուց ժպիտս... ներքին ժպիտս...

— Գեղեցի՜կ ես, — կ'ըսէ Ալպէռ եւ կը համբուրէ վզէդ։ Ա՜հ, ո՛չ, չես ուզեր այդ համբոյրը... այդ համբոյրը չես ուզեր. Ջիղերդ վագրերու պէս կը խենթանան... Ան՞ը, անոր համբոյրը կ'ըզձաս... զայն կ'ըզձաս...

digitised by A.R.A.R.@

— Ցեռոյ, յեռոյ, Ալպէ՛ռ, կը լռե՞ս... երբ չկրցայ փչրել այդ ահռելի շղթան... երբ ուժասպառ, աղերսով լեցուն՝ ինկայ, նայեցայ չորս դիս... շղթան ալ տարփանքով ինձի կը նայէր... Ինչո՞ւ, ինչո՞ւ փչրէի զայն... մօտեցայ... գգուեցի անոր օղակները... խոզերը վայնասիւններ արձակելով փախա՛ն... փախա՛ն... ասի շղթան... ինք ալ դիս առաւ...

— Դուն մնացիր շղթային ձեռքերուն մէջ, չէ՞, — կ'ըսէ Ալպէռ մատներուդ ծայրերը համբուրելով, — չէ՞, սիրելի՛ս...

— .....

Լռութիւնը պահ մը աղմուկ կը ստեղծէ մէջդ։ Անոնք չեն տեսներ յաղթանակը. ժամանակը մչուշին մէջէն կը հեռացնէ տեսիլքդ. կատուի պէս նենգ վայրկեանները կը լիզեն մխերդ. հնչուն բառեր կը հոսին վզդ.

— Մինակ չես, Ակնէս, գիտե՞ս որոնք մինակ են. անոնք, որոնք խենթ չեն։ Մահէն չվախցար, ո՛չ ալ շղթային. օր մը կ'իյնաս (այն անկումով, զոր խոզերը կը հասկնան) անօթի պիտի մնաս. սակայն պիտի ըլլաս։ Առասպել է այս բոլորը. կը հաւատանք, որովհետեւ կ'ուզենք հաւատալ. կ'ըզմանք՝ կ'ուզենք ըզմալ...։ Կ'ուզե՞նք մեռնիլ...։ Կա՛նք, Ակնէս, կա՛նք. տեղերքը մենք ենք. ես, դո՛ւն, ա՛ն, որ թերեւս օր մը ըլլայ. անոնք, որոնք կը պայքարին, կ'իյնան դաշտերու վրայ... զաղափարի համար. անոնք, որոնց կզակէն արիւն կը հոսի. անոնք, որոնց սրտերը կը ճաթին սուտերու արհաւիրքէն... անոնք, որոնք կը սպաննեն արդարութեան համար. անոնք, որոնք փողոցներու, մայթերու վրայ, ղլուխնին բաց կը պոռան իրենց արդաւանդ զաղափարները... Անո՛նք...

*
**

Միասին կը քալէք հիւրէթէն. կը մտնէք յունական ճաշարանը. կը յիշես միւսը. ան, որ մօտդ չէ այլեւս...

— Միշտ քու մասին կը մտածէի, — կ'ըսէ Ալպէռ, մատներդ բռնելով, — երբ գաղաւանդէի, դէմքդ առիւծներու ուժով կու գար աչքերուս առջեւ. կը սխրէի... որքա՞ն սիրտս կը պարէր, երբ կարդայի նամակներդ...

— Ի՞նչ կ'ըսէ այս ազան, Ակնէ՛սդուն կը մտածես անոր մասին... Ալպէռ կը շոյէ կուրծքդ... կը սիրէ քեզ... երիտասարդ բերանը կը գողայ կատաղանքէն... կը խօսի երկա՛ր, ընկերներուն մասին։

— Տասնըհինգ օր Զուիցերիա պիտի երթամ, — կ'ըսէ վզէդ կախուելով, — հե՛տս եկուր...

— Չեմ կրնար, — կ'ըսես իրեն, — չեմ կրնար...

— Պիտի գրե՞ս։

— Թերեւս գրեմ, թերեւս Սէնի շուրջ պտըտի՛մ երկար, ջուրերուն մէջ ղինք փնտռեմ...

Փետր. 19, Փարիզ

Սէնը կը ճչայ մանուկի մը նման։

Ինչո՞ւ չես լար. Ակնէս. ի՞նչ եղաւ լացը քեզի համար. կորսուեցա՞ւ... ի՞նչ եղաւ... «Հայրդդ զէմդ է հիմա. անոր բարի աչքերը, խաբուած, լքուա՛ծ մարդու ժանգոտած բիբերը ատրուկներու նման գամուած են մէկ տեղ...

Մայրդ եւ քոյրդ Անտրէին հետ են, վերը, միասին. դուն, Ակնէս, կը գրես, կը գրես անդադար... Հայրդ մինակ է. դուն՝ թուղթը ունիս... իսկ վերը ուրախ քրքիջներ կը ճեղքեն մթնոլորտը... սիրտդ...

Տարիները... այդ տարիները ո՞վ շուտով տապալեց... Ո՞ր հսկայ տիտանը տապալեց այդ տարիները...

— Երբեք մէկը ատա՞ծ ես՝, — կ'ըսէ Ալպէռ՝ մէջքդ ամուր բռնելով։

— Չեմ գիտեր ատել... չատեցի հոյնիսկ երբ քոյրս կը պատռէր գրածներդս... կատակի մը համար. ատի՞ֆը...

— Ինչո՞ւ էր, թէ ոչ...

digitised by A.R.A.R.@

— Խենթը ե՛ս էի... երբ մանուկ էի փոշի ցանեց աչքերուս մէջ... չարչարուեցայ երկա՛ր. «Ազատ՛ա», պոռացի երեսին. երբեք չմոռցաւ այդ բառը, սկըսաւ պատռել ինչ որ ունէի. դիր, ուզեղ, իղձ, երբեք չմոռցաւ «ազատուը»...

— Ցպիթե՞ց վերջը...

— Գիտէր հաւատացնել... կը խօսէր հանդարտ... Անունն իսկ օգնեց իրեն. մարդիկ հաւատացին ամէն մէկ բառին, չրջապատեցին զինք... կը խօսէր հանդարտ... մոռցած էր մեր մանկութիւնը, սակայն մոռցած չէր «ազատուը»... մեծցանք... չտեսնցի զայն... մինակ էի. մինակ չէր... զոհեցայ կեղտին... չտեսնցի... գրեցի... գործ տուի... մարդիկ զարմացան...

— Այն ընկերութիւնը, որուն մէջ ապրեցար... չե՞ս կարծեր, որ...

— Հիւանդ էր... կը կարծէին, որ ես էի «հիւանդը»։ Օր մը բժիշկ բերին... բժիշկը փոխաւ... «խենթ չէ», ըսաւ... գիտէի, որ խենթ էի... սակայն չհասկրցաւ... չհասկցաւ ի՞նչ էր խենթութիւնս... լաւ բժիշկ մը չէր ան...

Ալպէռ քահ-քահ կը խնդայ... կը մոռնայ գերեզմանը, աշակերտները, Զըւիցերիան, կը խնդա՛յ... երկար... իր «ընկերութեան» մէջ «ազատութիւնը» սեռային գործարան չեն կարծեր, ա՛չ ալ ծախուելիք միս... հասկցած էր «խենթութիւնս»...

— Ակնէս, չես սիրեր... չես ատեր... ի՞նչ կ'ուզես սակայն այս բոլորէն, — կ'ըսէ Ալպէռ յանկարծ լրջացած...

— Կ'ըղձամ տիեզերքը... անհունը... ես ըղձալ գիտեմ... ես կ'ըղձամ զայն... կ'ըղձամ անոր տիեզերքի նման գոյութիւնը... չե՞ս հասկնար, Ալպէռ, չե՞ս հասկնար ինչ է այս ինձի համար...

Սէնի շուրջ մարդիկ կը քալեն. ջուրին չեն նայիր անոնք. սեւ ջուրը, որ կը շարժի. անոնք զբաղուած են. կը մտածեն, կը քալեն եւ կը մտածեն Վիեթնամի մասին, կը մտածեն գործարանի ժամերուն մասին. կը մտածեն գործադուլներու մասին. կը մտածեն իրենց «բարեկամուհի»ին մասին, որ կը սպասէ bistrotի մը մէջ...։ Անոնք սեւ ջուրէն կը վախնան... կը վախնան...։ Դուն կը տեսնես «հայրդ», որ կ'անհետանայ. «Դուն փիզ ես», ըսած էր քեզի օր մը մայրը... կը ժպտիս... կը տեսնես անոնք, որոնք օր մը քեզի ձեռք երկարեցին. խօսք մը ըսին. կը տեսնես անոնք, որոնք օր մը եկան ճակատդ շոյելու... կը տեսնես «մեւսնները», որոնք «մենք բարեկամ ենք քեզի», ըսին օր մը... «մենք ընկերներդ ենք», ըսին օր մը, երբ արեւ չկար դեռ... սակայն բարեկամ չէին անոնք... Տղա՛յ, հեռաւոր տղայ. արդեօք ո՞ւր ես հիմա. կը տեսնեմ սիրտդ հեռուէն... սաւանի մը պէս գունատ է սիրտդ...։ Դուն ա՛լ չես լար... չես սիրեր լալ...։ Բիծը կը մեծնայ. կ'ըլլայ հսկայ սեւ շրջանակ մը. այդ շրջանակին մէջ կը տեսնեմ բիբերու պարը։

— Կ'երգե՛մ, — կ'ըսէ անոնցմէ մէկը։

— Ես մոխիրները սիրեցի, — կ'ըսէ միւսը։

— Ես ապատութիւնս գնեցի չղթայով... ձեռքերս, սիրտս, հոգիս արիւնեցան... ես ապատ մատծել կ'ուզեմ հողիս վրան... ապա՛տ չարժիլ կ'ուզեմ... ապատ բլլալու համար ամէն բոպէ շրջաքայլին ծանրութիւնը կը կրեմ մխսերուս վրայ... կ'արիւնի՛մ անոր համար...

Դո՛ւն կաս այս բիբերուն շառաչիւնին մէջ...

Մարտ 9, Փարիզ

— Ալպէռ։

— Կրկի՞ն ան։

— Ոչ։

— Հապա ի՞նչ, — կ'ըսէ շոյելով քազուկդ։

— Պատմութիւնը պիտի չարունակեմ. չորրորդ հատոր մը ալ պիտի գրեմ. պիտի գրեմ, թէ խոզերը ինչպէ՞ս կը գողնան, կը ստեն, կը պոռնկանան, սակայն գազանի... եւ ինչպէ՞ս առաքինու-

digitised by A.R.A.R.@

թիւն պոռալով եկեղեցի կը մտնեն... պիտի նկարագրեմ անոնց եկեղեցին.

— Ձե՞ս աղօթեր դուն, Ակնէ՛ս, — կ'ըսէ Ալպէռ ուռած աչքերով, — չե՞ս աղօթեր:

Արեւը կը մեծնայ. դուն կաս. արեւ կայ հիմա. կը մեծնայ սիրահար աղուն մը արտին պէս կարմիր: Արեւը, որ չըկար, կայ, եւ կ'ուզի...

— Ես պիտի ըղձամ աղօթելու տեղ:

— Իսկ աղօ՞թքը:

— Կը ձգեմ անոնց, որոնք յանցանք չունին. ես յանցաւոր եմ... ես երբեք ունիմ. կիրք ունիմ, ես մե՛ղք ունիմ... ես փողոցներու վրայ մոռցած եմ... ես սիրած եմ փողոցը... սիրած եմ իզձը... չղթան... արդարութիւնը... անասունները... Սէնը խոշոր է այսօր Ալպէռին աչքերուն կանանչին չափ. ան կը խրնդայ... մոռցած է ամէն ինչ, պատերազմը, կինը, զաւակը... ամէնը...

— Ես երկիր մը ունիմ, — կ'ըսես իրեն...: «Ընկերութիւն» մը՝ ազգը չէ... ո՛չ ալ ազգը՝ ընկերութիւնը...: Հոգ ունիմ... ես հոգն իսկ ըղձալ գիտեմ... համբուրել գիտեմ... շահիլ գիտեմ... ես այդ հոգին համը կը սիրեմ...

Սէնը խոշոր է այսօր. անոր մէջ կը տեսնես կեանքը, կուրծքեր, անդամներ, բեւեռներու պէս սառած աչքեր...

Ան կը ցցուի դէմդ ոճիրի պէս, կատազի.

— Պիտի չըղձամ քեզ երբե՛ք, — կ'ըսէ քեզի...

Կը քալես՝ ձեռքերդ դրպանիդ. Սէնը խոշոր է. եւ անոր մէջ կը տեսնես՝ զայն,

Դէմքը տակաւ կը բզկտուի ջուրերուն յանկարծական տարափէն. այտերը կը ճեղքուին, մաս-մաս կ'ըլլան... պատռուած երեսի պէս. մազերը ալիքներուն մէջէն կը հալոցուին սեւ ճրագներու լոյսերուն պէս...

Բերանը կը սեւնայ յանկարծ...

— Պիտի չըղձամ քեզ, որովհետեւ մեր ընկերութեան չես պատկանիր... ո՛չ թէ որովհետեւ... սառած էի քեզի... սառա՛ծ... կը հասկնա՞ս, սառած... ես սառը կը սիրեմ... ես դիմակը կը սիրեմ...

Անոր ատամներու պէս գեղեցիկ դէմքը կը կորսուի տակաւ... կը կորսուի հիւանդի մը բազկերակին դարկին պէս...

Նեւակորոյս կը ծռիս, Ակնէս. կը ծռիս. պիտի կորսուի՞... պիտի կորսուի՞ ան. ու պատկերը կը սուզուի. կը սուզուի տակաւ. աչխարհները, հսկայ զանգուածներու պէս ահարկու, որոտումներ կ'արձակեն.

— Փոթորիկ չկայ, — կ'ըսէ մէկը:

— Դուն մի սիրեր:

— Մեռելները մի՛ ըղձար երբեք...

— Ան պիտի մեռնի...

— Զի՛ մեռնիր, — կը փսփսաս եւ կը ծռիս ջուրին վրայ...

Ա. Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒԱԳ

Կասկածները՝ աչքերուդ կածաններուն կը ճամբորդեն
Եւ աչքերուդ մարգերուն մէջ յաւերժական ճամբորդութեան
ժամանակը կը լուծուի
Եւ դուն՝
իբրեւ առասպելեան հեռագնաց մեղեդի՝
կը մնաս անհաս...

Վհուկաձայն ծառերն ահա գիշերուան սեւ թմբուկները կը յուզեն,
Քնացած վախը կ'արթննայ ու կը դառնայ ինքն իր վրայ՝
Ինչպէս հուրին շուրջը պարող երազներու հրեղէն ձի:

ԵՍ ԵՌՈՒ ՄԸՆ ԵՄ ԱՆՏԵՐԵԻ, ՄՏԱՄՈԼՈՐ ԱՂՄՈՒԿԻՆ ՄԷՋ ԱՆՏԱՌԻ

Ըսին,
Կ'ըսեն,
Գուցէ նաեւ
դուն ալ ըսես,
օր մը, այսպէս,
թափառական ծառն այս անծիլ
ժամանակի արգանդի խոր լռութենէն
պիտի յառնէ,
տերեւներով իր տկար
Ու մայթերուն՝ երգէ վէրքը անմեղեղի վէրքերուն...

Ըսին...
Մինչ ես կ'ըսեմ,
Թէ կը լսեմ
Կասկածներէն վերադարձող հեռագնաց համանուագը անտառին...

Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

WEEKEND

Հմայիակ Տէր Ներսէսեանի տղան, պարոն Ղուկասը, որ զատ տուն վարձած էր ամուսնանալէն ետք, շատ կը սիրէր Կիրակի առաւօտները սենեկազգեստով պատշգամ նստիլ ու սուրճ խմել, ու այդ սովորութիւնը կը շարունակէր տարիներով։ Տիկնոջ մեծկակ գաւաթ մը գնել տուած էր, քանի որ սովորական սուրճի գաւաթները չէին յագեցներ զինք։

Առօք-փառօք կը նստէր աթոռին. սուրճը կու գար, ու ինք տեսարանը դիտելով՝ ումպ-ումպ կը խմէր։

Ողորմած հոգի էր կնոջ մեռնելէն ետք՝ ան շարունակեց այդ սովորութիւնը, սակայն անիկա առաջուան չափ հաճելի չէր թուեր իրեն։ Ինք կ'եփէր սուրճը ու մինչեւ երթալ նստէր, ախորժակը կը փախէր։

Այդ Կիրակի, կանուխ արթնցաւ։ Ելաւ անկողնէն ու կայնեցաւ պատշգամի ապակիէ դրան առաջ, քանի մը վայրկեան դուրսը դիտելու համար։ Սուրճ խմելու ախորժակ չունէր։ Կ'ուզէր նորէն երթալ ու պառկիլ։ Տակաւին կը տատամսէր որոշում մը տալու, երբ դլուխ մը տեսաւ ջոկի պատշգամին վրայ, որ տակաւ առ տակաւ սկսաւ հասակ առնել։ Ծեր դրացուհին էր, կարծես իրեն կը սպասէր։ Սոխպուէցաւ բարեւել. չէր ախորժեր անէկ, ծեր էր, կորաքամակ, խօսելու առեն ալ աչքերը կ'արցունքոտէին. շատ նիհար էր ու մարմնը դեղին գոյն մը ունէր, կարծես արիւն չկար մարմնին մէջ։

Բայց այդ օր, կինը այնպէս նայեցաւ, որ կարծես պատմելիք մը ունէր։

Ղուկասը պատշգամ ելաւ։

— Այսօր սուրճ չե՞ս խմեր, — հարցուց կինը, ու աւելցուց՝ — եփեմ, խըմէ։

Ու նստաւ աթոռին։ Սպասեց։

Քանի մը վայրկեանէն կինը սուրճը բերաւ, ինքն ալ նստաւ. սկսան խմել։ Համով էր։ Մարդը դիտեց կինը, որ լուռ-լուռ կ'ըմպէր սուրճը, յետոյ՝ թախանձող նայուածքով մը նայեցաւ Ղուկասին։

— Ինչպէ՞ս ես, — հարցուց Ղուկաս։

— Լաւ եմ, — ըսաւ կինը, ու աւելցուց, — շատ առանձին կը զգամ. կարծես տան մէջ աւելորդ առարկայ մըն եմ, ամբողջ կեանքս տառապանքով անցընելս չէր բաւեր, եւ ահա այս առանձնութիւնը կը սպաննէ զիս։

Ու նորէն արցունքոտեցան աչքերը։

Ղուկաս ձանձրոյթ զգաց, աջ ոտքը ձախին վրայ դրաւ, իջեցուց. միւս ոտքը աջին վրայ դրաւ. պատրուակ մը բռնելով՝ պիտի երթար ներս, բայց մեղքցաւ կնոջ։

Կինը վերջին ուժը առնելէ ետք՝ շարունակեց.

— Դիտե՞ս, ես Պէթիին մեծ մայրն եմ. մայրը սրտի տագնապէ մեռաւ, երբ Պէթին չորս տարեկան էր. ամուսինս ալ նոյն ձեւով մեռած է։ Պէթին եւ մեծ եղբայրը ես մեծցուցի, որովհետեւ անոնց հայրը ձգեց զիրենք եւ ուրիշի մը հետ ամուսնացաւ։ Ան առաւ կինը եւ ուրիշ

digitised by A.R.A.R.@

նահանգ մը մեկնեցան. սկիզբը դրամ կը ղրկէր զաւակներուն։ Յետոյ բանակ ղրկուեցաւ ու հոն ալ մեռաւ։ Գէթին եղբայրը քսանութ տարեկանին՝ ինքն ալ սրտի տագնապ ունեցաւ ու մեռաւ։ Մընացինք ես ու Գէթին։ Ան ալ, ինչպէս գիտես, ամուսնացաւ, բայց երկու տարին չանցած՝ ամուսնալուծուեցաւ. հիմա նորէն միասին կ'ապրինք, բայց...

Կինը կեցաւ, գլուխը շարժեց։

— Հիմա, ի՞նչ կ'ընէ Գէթին, — հարցուց Ղուկաս։

— Կը քնանայ։

— Կ'երեւի գիշերը ուշ եկաւ։

— Այո, ժամը չորսին, — ըսաւ կինը այնպիսի ձեւով, որ կարծես ըսել կ'ուզէր՝ հիշդ մատդ վէրքիս վրայ դրիր։

— Պարոն Ղուկաս, ա՛լ կ'ամչնամ, — ըսաւ կինը, — գրեթէ ամէն օր դուրս կ'ելլէ։

Յետոյ շարունակեց.

— Մենք ամուսնացանք եւ ամուսինը, գիտե՞ս, շատ լուրջ մարդ էր, սիրուած ու յարգուած, բայց մեռաւ. ի՞նչ ընենք, այդ ալ մեր գլխուն եկաւ։ Գէթին եւ ամուսինը, ակիզբը սիրեր են զիրար, բայց եւ՝ նայեր են, որ իրարու յարմար զոյգ չեն։ Մէյ մըն ալ թոռնուհիս եկաւ, ու ըսաւ.

— Մեծ մամա, տիվորս եղայ։

Կարծես թէ մէկը խոշոր փայտով գլխուս զարկաւ։ Նայեցայ Գէթիին։ Ամէն բան բնական կը թուէր անոր, բայց ես կը դողայի։

— Գիտես, որ ես ալ ամերիկացի եմ։ Հազարներով ասանկ դէպքեր լսած եմ, բայց մենք այդ ընտանիքներէն չէինք։ Հիմակուան աղջիկներն ու տղաքը տարբեր են, պարոն, պզտիկ բանէ մը կը խրտչին, եւ ահա, մատանին կը հանեն, եւ կու տան ու ալ չեն ուզեր իրարու հետ ապրիլ։

Տարիներ առաջ էր, Ուրբաթ իրիկուն մը, երբ Ղուկաս թերթին յայտարարութիւններու բաժնին մէջ պարապ յարկաբաժինի մը համար կը նայէր՝ այս տան յայտարարութիւնը ուշադրութիւնը գրաւած էր։ Յաջորդ առտու կանուխ, առաջին գործը եղած էր փնտռել տունը։ Գրաւաւ, նայեցաւ, սիրեց, վարձեց։

Այս կնոջ կը պատկանէր տունը, որ անշուշտ ապագային պիտի փոխանցուէր թոռանը։ Բայց հիմակուընէ իսկ, աղջիկն էր, որ տանտիրուհի պէս էր. իսկ ծերը բանտարկեալ մը իր իսկ տան մէջ։ Անոր դուրս ելլելը միայն շուկայ երթալ էր. կը դնէր տան պէտք եղածը ու կու գար, յետոյ տան մաքրութիւնը կ'ընէր, ամանները կը լուար, իսկ մնացած ժամերուն կը նստէր պատուհանին քովի աթոռին, թեթեւ մը կ'օրօրուէր, կամ դուրսէն արագ-արագ անցնող ինքնաշարժները կը դիտէր։

Երբ օդը տաք ըլլար, աթոռը պատշգամ կը դնէր եւ հոն նստած կը մնար մինչեւ ուշ գիշեր։

Ղուկաս կը տեսնէր այս բոլորը. կը մեղքնար կնկան, որ այդպէս ժամերով լուռ կը նստէր։ Երբ աղջիկը գար, ան կ'ելլէր ու սեղանը կը պատրաստէր, յետոյ՝ ամանները կը լուար ու նորէն կը նստէր։

Քիչ ետք, դուռը կը զարնուէր, աղջիկը կը բանար դուռը, տղայ մը ներս կը մտնէր ու կ'անցնէր աղջկան սենեակը. կինը գլուխը կ'երկնցնէր կատուի պէս, կը դիտէր եկողը, յետոյ նորէն նախկին կերպարանքը կ'առնէր։

— Մա՞մ, մենք կ'երթանք, — կ'ըսէր աղջիկը, — ու կ'երթային։

Ո՞ւր կ'երթային, չէր գիտեր, չէր ալ հարցներ. աւելի հիշդ՝ չէր կրնար հարցնել։ Անոնց երթալէն ետք, կ'երթար ու կը պառկէր, վերմակը մինչեւ ականջները քաշած։

Ղուկաս առիթ չէր ունենար տեսնելու աղջիկը։ Ամսէ ամիս ամսավճարը տալու առեն հաղիւ հասակը կը տեսնէր։ Մարդամօտ աղջիկ կ'երեւէր, բայց այնքան զրաւած էր, որ նոյնիսկ հետը բառ մը փոխանակելու ժամանակ չէր ըլլար։

Աղջկան վերաբերումէն ջղայնացած՝ կ'որոշէր յաջորդ անգամ չերթալ, այլ նամակատան մինչոցաւ զրկել, բայց ամէն

digitised by A.R.A.R.@

ամու գլխուն չէիր կը գրէր ու անձամբ կ'երթար վճարելու։ Դուռը կը զարնէր։

— Ո՞վ է, — կը լսուէր ներսէն։

— Ես եմ, Ղուկաս Տէր Ներսէսեան։

Աղջիկը կը բանար դուռը, չէիր կ'առնէր, ներս կ'երթար։ Ղուկաս հինգ վայրկեան կը սպասէր դուրսը։ Աղջիկը կուգար եւ սաստպիրը կու տար Ղուկասին։

«Շունին մէկն է», կ'ըսէր Ղուկաս մտքէն։ Ու քիչ ետք՝ պատուհանէն կը դիտէր անոր տղու մը հետ դուրս ելլելը։

Ամուսնալուծումը ոչ մէկ ազդեցութիւն գործած էր իր կեանքին ու կենցաղին վրայ։ Կը շարունակէր ապրիլ աւելի ազատ։ Տխրելու ոչ մէկ պատճառ ունէր, եւ ինչո՞ւ պիտի տխրէր։

Ու Ղուկաս կը հաշուէր։ Ուրեմն իւրաքանչիւր նահանջ տարուան Փետրուար 29ը իր օրն էր, պայմանաւ, որ նախապէս ժամադրուած ըլլար։

Անգամ մը, անոնք նորէն գացած էին ռիֆէնոը վայելելու։ Ինք, Շաբաթ օր, յաւելեալ ժամով պիտի աշխատէր։ Գրնայ գործի, կէսօրին, երբ առն եկաւ բազմութիւն մը հաւաքուած էր իր չէնքին մուտքին։ Ճամբուն եզերքը ինքնաշարժ մը կեցած էր, երկու ոստիկանական կառքեր։ Մէկը պառկած էր մայթին վրայ, շիտակ։ սաւանով մը ծածկած էին մարմինը։ Հետաքրքրուեցաւ ու հասկըցաւ։ Ծերուկն էր, գացած էր դիմացի նըպարավաճառին, բան մը գնած։ Վերադարձին՝ ինքնաշարժ մը զարկած էր զինք ու սպաննած տեղն ու տեղը։ Գետինը արիւնի հետքեր կային, զարմացաւ, երբ արիւն տեսաւ։ «Օ՛, արիւն», ըսաւ ինքն իրեն, իրապէս անակնկալ մըն էր ծերուկին արիւն ունենալը։ յետոյ անդրադարձաւ, որ ամէն մարդ արիւն կ'ունենայ։ Բայց զարմանալիօրէն, երբեք մտքէն չէր անցուցած, որ այդ ծերուկը կրնայ արիւն ունենալ։ Այնքան անարիւն էր ու դեղին։

Սիրտը նեղուեցաւ, հառաչեց։ Հիւանդատար կառքը սկսաւ սուրալ, մեռելը կը տանէր։

Տխուր-տխուր սկսաւ տան կողմը յառաջանալ։ Գէշ կին չէր, մտածեց, բարի էր, աստուածավախ։ բայց աղջիկը անառակին մէկն էր, ու այդ բաւէն ետք՝ զօրաւոր կերպով թքեց գետին։

Բայց միայն ա՞յս աղջիկը այդպէս էր, ամբողջ քաղաքը, նահանգը այդպէս էր։

Կը յիշէր, երբ նոր եկած էր Ամերիկա ու քաղաքին փողոցները կը չափէր, յանկարծ պատի մը վրայ կարդաց երկու բառ. Թափէս-պաթրմէս։

— Թափէսը հասկցանք, — ըսաւ իւրովի, — դլուխը ծակ կը նշանակէ, այսինքն՝ վերնատունը պարապ, բայց պաթրմէ՞սը ինչ է։

Անկապ խօսք մը թուեցաւ իրեն։ Ինչպէ՞ս մէկու մը վարի մասը պարապ կըրնայ ըլլալ։

Ցետոյ՝ ուրիշներ բացատրեցին, թէ ինչ կը նշանակէին անոնք։

— Թո՛ւ, — ըսաւ, — ուրեմն այսքա՞ն ապակեանած միջավայրի մը մէջ եկած ենք ապրելու։

Աշխատած գործարանին մէջ հսկայ մեքենաներ կային, որոնք բերուած էին զանազան նահանգներէ։ Կիրակի օրերը, պատկերասփիւռ կը բանար, յայտնի քարոզիչներուն պատգամները մտիկ ընելու։ Անոնք, ամէնքն ալ, ուրիշ նահանգներէ էին։ իսկ Լոս Անճելըսի մէջ միայն արթիսթներ կային, բոցեր, թափէխներ, պաթրմէխներ, բայց զարմանալին այն էր, որ քաղաքին անունը Լոս Անճելըս էր, հրեշտակներու քաղաք։ Զղայնացաւ ու ձայնը բարձրացնելով, ըսաւ.

— Ասիկա Լոս Անճելը՞ս չէ, այլ՝ Լո՛սթ Անճելըս։

Դեռ գրգռուած էր. ո՞ւր էր աղջիկը, որո՞ւ դիրկն էր։ Զղայնութենէն չէր գիտեր ինչ ընէր, դուռը շրխկացնելով՝ ինքզինք դուրս նետեց։

Կիրակի էր, գիշեր, բայց աղջիկը դեռ չէր եկած։

Երկուշաբթի օր, գործէն ետք, երբ սափրիչէն կը վերադառնար, աղջիկը դէմը ելաւ.

— Գիտէ՞ք, մեծ մամաս արկածի զոհ

digitised by A.R.A.R.@

գնաց. այսօր ֆիւնրրլ եռմ գացի, ան-սայ։ Վաղը պիտի թաղենք։

— Գնա՛, թաղէ, — ըսաւ Ղուկաս սրտնեղած։

Յաջորդ օր, գործէն եռք, Ղուկաս պատշգամ նստաւ։ Աղջիկը դեռ չէր եկած։ Փորձեց հասկնալ, թէ ինք ինչո՛ւ այդքան կը տարուէր աղջկան մտածումով, ինչո՛ւ կը հետաքրքրուէր անով։ Ան ազատ չէ՞ր ուզածին պէս ապրելու։ Կարծես ինք կը հետապնդէր աղջիկը։ Ինքն իրեն նիւթ կ'ընէր անոր դուրս ելլելն ու ներս մտնելը։ Գիշերները, յաճախ կը կայնէր խոհանոցի պատուհանին առջեւ, ու դրան առջեւի խոյսին կը նայէր, որովհետեւ աղջիկը ամէն դուրս ելլելուն՝ լոյսը վառած կը ձգէր։ Կ'ուզէր չհետաքրքրքրուիլ, բայց չէր կրնար։

— Ահա եկան, — ըսաւ յանկարծ, ու չակուեցաւ։

Աղջիկը վերադարձեր էր թաղումէն, բարեկամին հետ։ Քիչ ետք, տղան ու աղջիկը լուացուելիք հագուստներ չտեսան՝ դէմի լուացարանը գացին։ Տղան կարծես աղջկան սպասաւորն էր. այդպէս ըսաւ Ղուկաս մտքէն։ Թաղո՛ւմ ու լուացք։ Հոս Ամերիկա էր։ Կը քալէին միասին։

Գիշերը տղան աղջկան տունը մնաց։

Ղուկաս հառաչեց։ Տարիներ առաջ կորսնցուցած էր կինը։ Սկիզբները, ծանօթներ խորհուրդ տուած էին «դուրս ելլել»։ Փորձած էր, բայց չէր բաւարարուած։ Անոնք միայն տզրուկի նման քսակ կը ծակէին։ Ըրածը յիմարութիւն էր, որ անգամ մը ալ չէր գացած։ Հիմա դարձեալ սիրտը կ'ուզէր։ Խորհեցաւ տան ամասվճարը տուած առեն մօտիկութիւն ցոյց տալ աղջկան, բայց ան բնաւ երես չէր տուած իրեն։

— Օ հէյ, — կ'ըսէր ու կու տար ստացագիրը։

Աղջկան այդ ընթացքին ի՛տես՝ սիրտը աւելի կը նեղուէր, չէր ուզեր անոր երեսը տեսնել։

Զմեռ գիշեր մը, Ղուկաս երազին մէջ տեսաւ աղջիկը։ Սիրալիր զրոյց մը կ'ունենային։ Արթնցաւ, սիրեց երազը, լաւ էր. ու ահա քանի մը օր չէր անցած, երբ դուռը զարնուեցաւ։ Անունը լսեց, ճանչցաւ ձայնը. ան էր, տանտիրուհին։ Բացաւ դուռը։ Աղջիկը հետը խոշոր մոմլաթ մը ունէր։ Բերած էր առժամապէս դնելու համար պատշգամի ճեղքերուն, որպէսզի անձրեւաջուրը ներս չգայ։ Անձրեւները սկսած էին, մա՛նաւանդ քանի մը օր առաջ սաստիկ անձրեւած էր։ Աղջիկը խոստացաւ քանի մը օր ետք՝ ամբողջովին նորոգել պատերը։

Ղուկաս գարեջուր հրամցուց։ Աղջիկը խմեց, գոհ մնաց, խօսեցան, խնդացին։ Ղուկաս պատմեց երազը ու ցոյց աւաւ իրենց նստած տեղը։

— Հոս նստած էինք, — ըսաւ, — լաւ սիրիճ վրայ։

Աղջկան աչքերը պճլտացին.

— Իրա՞ւ, — յետոյ ի՞նչ ըրինք, բաներ մը ըրի՞նք։

— Հա, — պատասխանեց Ղուկաս, — գրկուեցանք, համբուրուեցանք, յետոյ...

— Իրա՞ւ, — կրկնեց աղջիկը, ու նայեցաւ Ղուկասի աչքերուն։

— Համակրելի կ'երեւաք, — ըսաւ։

Ղուկաս շոկուեցաւ, կարծես ըսել կ'ուզէր. ի՞նչ կարծեցիր դիս։

Սիրալիր խօսակցութիւնը աւելի խորացաւ։ Աղջիկը գլուխը կը շարժէր. մինչեւ հիմա ինչպէ՞ս ուշադրութիւն չէր ըրած. մօտէն դիտելով՝ շատ երիտասարդ կ'երեւէր, շատ համակրելի։

Աղջկան նայուածքը հիմա իջած էր վար, ուրիշ բան կ'որոնէր։ Արտայայտութիւնն ալ այդպէս էր, կարծես յանկարծ պիտի բռնէր, շօշափէր, զննէր անոր մարմնին զանազան մասերը, գլուխը, մարմինը, ամէն, ամէ՛ն բաները...

Ղուկաս արթնցաւ։

Այլեւս ի՞նչ պատճառ կար տնտնալու. առաւ տանտիրուհին ծոցին մէջ...

Գիշերը տնտնք ծրագիրներ մշակեցին յաջորդ ռիֆէնտը միասին անցընելու...

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՆԻ ՔԷՆՏԻՐՃԵԱՆ

ԴՈՒՌԸ

Մարալ երկար, շա՛տ երկար նայեցաւ բանալիին, եւ երկաթէ այդ փոքրիկ կտորը կոնոնաւորապէս գործածած ըլլալու իրողութիւնը սարսափեցուց զինք. դեղնած էր բանալին, յոգնած էր, ծանրացած:

Մայրը գործէն չէր վերադարձած ու Մարալ չսիրեց անոր քացակայութիւնը. սպասեց փիչ մը. եղբայրը եկաւ եւ ուղիղ իր սենեակը վազեց. գուլպաները փոխեց, նոյն գոյնով շապիկ մը հագաւ, օձիքը ազատ ձգեց, մազն ու մօրուքը՝ անխնամ, հայելիին նայեցաւ եւ առանձնութեան մէջ անկեղծօրէն դիտեց ինքզինք. ծպտեցաւ փիչ մը. սիրեց հայելին, մօտեցաւ անոր եւ համբուրեց իր շրթները: Լեզուին տակէն անգոյն ծամոցը ցուցադրեց, կոշտ ձեռքերով մազերը խառնշտկեց, մօրուքը շոյեց եւ իր շատ երիտասարդ աչքերը փոդոցի կարօտով փայլեցան:

Այդ օր, երկար մնացած էր ներս: Չափազանց երկար դիտած էր ինքզինք: Դուռը բացաւ եւ փողոց վազեց:

Մարալ դիտեց այդ բոլորը եւ ծիծաղեցաւ: Ամէն բան դիտելու, լաւ հասկնալու փափաք մը ունէր այդ օր: Նայեցաւ սեղանին, ատեց գիրքերը: Նայեցաւ աթոռին, ատեց հիւրերը: Մօտեցաւ պատուհանին եւ փողոցը դիտեց: Սիրեց անցորդները իրենց երթեւեկի վիճակին մէջ, եւ խորհեցաւ, թէ մարդիկ տուներէն ներս ալ անցորդներու կը նմանին:

Անցորդները դէմքեր սերտելով կը ճանչնան զիրար: Կը ծպտին մտերմաբար. իրար կ'ատեն երբեմն: Անցորդները կը սիրահարուին երբեմն եւ անկիւնադարձին՝ սիրահարները կը մոռնան զիրար:

Մարալ սիրեց իր եղբօր բնակավայրը: Եղբայրը անցորդ եղած էր միշտ: Առաջին անգամ ըլլալով՝ նախանձեցաւ եղբօրը եւ կարօտցաւ անոր:

Փողոցին մէջ ոգեղ ոգչիկ մը փորձեց գեղեցկանալ եւ անշնչար անցաւ:

digitised by A.R.A.R.@

Կաղ մը փորձեց ուղղել իր ոտքերը եւ ծիծաղելի դարձաւ:

Մարդիկ ծիծաղելի են, երբ բնական են:

Մարդիկ տկար են, երբ բնական են:

Մարդիկ թերի են, երբ բնական են:

Մարդիկ ինչո՞ւ կը փորձեն մօտենալ բնականին: Մարդիկ ինչո՞ւ կ'ուզեն ծիծաղելի դառնալ:

Կեղծ ցերեկ մը կաթկթեցաւ լոյսի սիւներուն տակ:

Մարալ փողոցի ինքնաշարժները դիտեց, եւ կարծեց, թէ մարդիկ շատ կը նմանին այդ ինքնաշարժներուն:

Մարալ սիրեց ինքնաշարժները և փափաքեցաւ ունենալ հատ մը· վերադարձած էր փոքր ինքնաշարժը եւ կը սպասէր մեկնումի··· Ինքնաշարժները գիշերով կը վերադառնան միայն այդ փողոցով· մարդիկ կը վերադառնան միայն այդ ժամուն:

Բոլորը վերադարձան:

Մարալ նայեցաւ լոյսերուն եւ յօրանջեց: Մայրը չեկաւ:

Գոցեց պատուհանը, վարագոյրը, եւ դիտեց դուռը: Զբաղուեցաւ անիկա:

Սրճագոյն էր դուռը, պզտիկ: Մարալ չսիրեց իրենց դուռը: Համր էր անիկա· կարճ եւ տգեղ· թերեւս հիւրեր վախնային իրենց դուռնէն· թերեւս հիւրեր մերժուէին իրենց դուռնէն· թերեւս հիւրեր ամչնային իրենց դուռնէն: Մարալի մայրը այս վերջինները էր: Ան կ'ամչնար իր տան դուռէն· կ'ամչնար, որովհետեւ կ'ուշանար: Ութ ժամ կ'աշխատէր ապակիի գործարանէ մը ներս: Ինքներդդ ժամուն ի՞նչ կ'ընէր, ո՞ւր կ'երթար: Աղջիկը կը սպասէր: Մայրը կ'ուշանար· եղբայրը չէր գար: Ի՞նչ ընէր տան մէջ: Մարալ կ'ատէր իր մօր դիւրաթեկ աշխատանքը: Պատուհանը: Դաւաթը: Հայելին··· Մայրը չեկաւ:

Երկա՞ր տարիներ հօր մը կարօտը կը տանջէր զինք· հայրը այսքան անխիղճ չէր կրնար ըլլալ, հայրը պէտք էր սիրէր զինք: Ինչո՞ւ մեռաւ· ինչո՞ւ:

Մարալ չկրցաւ հանդուրժել առանձնութիւնը· խռհանոց գնաց եւ ապակեղէնները մէկիկ-մէկիկ փշրեց: Մայրը չէր կրնար շինել զանոնք: Ծաղկամանը մեղքցաւ· ժամացոյցը կոտրեց եւ պատրաստուեցաւ մեկնելու:

Դուռը գոցեց եւ բանալին խղճմտանքով պարտէզ նետեց: Համբուրեց դուռը: Սրբեց արցունքները··· Ոտքի ձայներ լսեց· մէկ կողմ քաշուեցաւ: Սպասեց:

Մայրը անձայն դուռը բացաւ, ներս մտաւ, եւ յաջորդ առտու գործի չգնաց: Ինք գոցեց դուռը, փողոց գնաց, եւ յաջորդ առտու չվերադարձաւ:

ԱՆԻ ՔԷՆՏԻՐՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԿՈՒ ԲԵՒԵՌ

●

Ես չեմ կասկածիր,
Որ պիտ՝ կրկնուին
Այն պահերն ադուտ, վայրկեանները ամէն,
Որոնք ինչ պիտի մղեն շտապով
Զիս ունենալու
Շունչ առնելու պատեհութիւնն իսկ խլելով քու շրթներէդ,
Աչք թարթելու երանութիւնն օդակելով քու կոպերուն:

Կը կրկնուին այդ պահերը յար-յարաժամ,
Ուրիշի մը աչքերուն մէջ երբոր նայիս,
Երբոր լսես ոտնաձայներ անծանօթ:

Այս բոլորը ես կը տեսնեմ
Երազներուն իմ ցանցին մէջ,
Եւ կամ կը զգամ
Զիրերուս հուր հոսանքին հետ.
Մինչ կը փախչիս, կը լուծուիս դուն:

Այսպէս եղաւ կեանքը մեր:

Որովհետեւ,
Երկրագունտը մեր այս կլոր,
Ունի երկու իրարամերժ ցուրտ բեւեռներ,
Անբակտելի, անհատնելի զոյգ հանգոյցներ,
Եւ երկուքս
Կը մօտենանք նոյն աստղերուն, կը հեռանանք նոյն երկնքէն՝
Կէս-օրուան մը տարբերութեամբ:

Սակայն ես հոս,
Կիսագունտիս ծալքերուն մէջ
Կ'որոնեմ նոր, ճամբայ մը, որ
Փոխադրէ զիս բեւեռներու ճիշդ առանցքին,
Խորտակելու համար ուժգին
Նոյն առանցքը,
Որ այլեւս բեւեռները ձգտին իրար,
Կազմեն մէկ կէտ,
Որպէսզի մեր կիսագունտերն
Կորսնցնեն ընթացքն իրենց
Եւ փոխադրեն սրտերը մեր նոյն ափերուն:

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Իմաստական Շարժում

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ



Դեկտեմբեր 27ին, Երևանի մէջ հոգին յանձնեցաւ Նոր-կայ Հայաստանի գրականութեան ամէնէն ուժեղ գէմքերէն մէկը, որ երեսունին չհասած հայ գրականութեան ընծայեց իր տաղանդը միանգամայն նուիրագործող երկ մը՝ «Հեղեղաբաղիւնը»։

Մահարիի բացառութեամբ՝ մահացու պատմաններու մէջ ու մինչեւ մահ իրարու հաւասարիմ մնացած գրական գաղափարակիցին կրտսեր անդամն էր Մկրտիչ Արմէն, Զարինեանի, Բակունցի, Մահարիի մտերիմը։

Այս քառեակը, որ, չհաշուած Թոքմաճեանը, հասակ ունեցաւ միայնակը՝ հասակակից ամբողջ սերունդին մէջ։ Միւսները, թէ՝ «յայտնի անյայտութիւնը» ճանչցան վիրաւորները եւ թէ յայտնի մարգասպանին շնորհքին արժանացածները, յաւաք, «կիրցան «մէջհասակիցներ» վեր բարձրանալ։

Հոչակաւոր գաղափարակիցին տարիքով կրտսեր ու նաեւ մահուան մէջ կրտսեր անդամը, Մկրտիչ Արմէն, «յայտնի անյայտութիւնը» ճանչնալէ առաջ անգամ բարձունքներ նուաճած դէմք էր եւ սահմանիցուցիչ հետուներէն վերագտնելէ ետք իր հին վարիը չմոռնար բնաւ, այլ «Զատուիրեցին յանձնել ձեզ» պատմուածքներու հատորով եւ «Ժիրայր Գլենց» վէպով նոր որակ մը բարգեց հինին վրայ։

Տաղանդաւոր գրող մը մեռաւ, հայ գրականութեան կատարելով տաղանդաւոր գործերու նոր փայլ մը։

digitised by A.R.A.R.@

Հարգելի բարեկամներ

Սառցա՛ ձեր նամակը, սակայն, որոշ ուշացումով, որովհետև ես բացակայում էի Երևանից։ Ամենից առաջ ջերմ շնորհակալություն ձեր ողջույնների համար ինձ և իմ սիրելի Գյումրիին։ Փոխադարձաբար իմ ջերմ բարևները ձեզ և Բեյրութի հայկական կոլեժին։ Համոզված եմ, որ երբևէ առիթ կունենամ անձամբ ողջունել ձեզ որևէ այցելության ժամանակ։

Հաղորդում եք, որ կրկին կարդացել և այս պնդամ մանրամասնորեն ուսումնասիրել եք իմ «Հնոնար աղբյուր» վիպակը և նույն օրերին առիթ եք ունեցել դիտելու շարժանկարը։

Շարժանկարը, անշուշտ, ունի իր լավ կողմերը,—չարձարվեցա խոզ ուստա Մկրտչի և Երանոսի դերակատարների և մի քանի այլոց։ Գյումրու տեսարանները և այլն, սակայն շարժանկարն իրքև ամբողջություն ինձ չի գոհացնում։ Ի՞սի և խոսքը մատնավորացնենք վիպակի վրա։

Գրում եք, որ ձեր մեջ վեճ է առաջացել այն մասին, թե արդյոք Երանոսն ինքնասպանություն է գործել, թե՞ նրան սպանել է Վարոսը։

Իմ վիպակի առաջին հրատարակության տպագրությունից ի վեր, այսինքն էրեստունյորը տարի, հարյուրավոր և հարյուրավոր անգամներ ընթերցողները դիմել են ինձ նույն հարցով,—վիպակի մեջ տարակարծություն առաջացնող այդ միակ հարցով։ Եվ դրա պատճառը, անշուշտ, ոչ թե ընթերցողների անուշադրությունն է, այլ իմ հեղինակի «մեղքը», որ այդ հարցի վրայով անցել եմ շատ նուրբ, թեկուզև հատակ որոշակիությամբ։

Իհարկե, ես կարող էի, եթե ուզենայի, վիպակի հետագա հրատարակությունների մեջ ավելի ևս ցայտուն և աչքի զարկող դարձնել իրավա նությունը։ Բայց ես դա չեմ արել և չեմ էլ ուզեցել անել, քանի որ հարցը, իրոք, նուրբ է և նրբությամբ էլ հարկավոր էր շոշափել այն։

Երանոսին, ինչ խոսք, սպանել է Վարոսը։ Վիպակի մեջ այդ քանը հաստատող երկու որոշակի ցուցումներ կան։ Առաջինը—աղբյուրի «հրաշքին», մոտ «մեղա»—ի գալու ժամանակ Վարոսն ասում է՝ «Բողոքում քեզի, հեղնար, որ մեր գիշերամ էկար ու մարդասպանության գործն ընդի արվեցուցիր»։ Եվ ապա, երկրորդ, երբ Երանոսի կրտսեր եղբայր Գեղամն ուզում էր սպանել Վարոսին, «Մկրտիչը բռնեց վրիժառուի ձեռքը»։ Իսկ «վրեժ» է դա, եթե ոչ իր ավագ եղբոր վրեժը։

Այնպես որ, վիպակի մեջ բավարար որոշակիությամբ ասված է ամեն ինչ, և եթե վեճ է առաջանում, ապա պատճառը, կրկնում եմ, հեղինակի «թեթևամիտ» անցնելն է, թեև, որքան էլ արդարացնեմ ընթերցողին, ամենամեծայնիվ կա այստեղ նաև նրա անուշադրությունը։

Իսկ ինչո՞ւ հանձն եմ ես «թեթևամի» անցնելու այդ կարևոր հանգամանքի վրայով։

Ինչպես հայտնի է, «Հնոնար աղբյուր» վիպակի մեջ չկա ոչ մի քանա-

digitised by A.R.A.R.@

սակայն հերոս, քանզի դրված են, չունի լավ մարդիկ, հետամուտ հաստատ ներքի գոհերու։ Դրված են նաև, ինչ խոսք, հեղնարն ու վարասը։ Բայց վարասը, թեկուզև դրված հերոս, կատարել է ծանր հանցանք, մարդ է սպանել։ Հեղնարը, իհարկե, ուղղակի իմաստով չէ, որ «մարդասպանության գործը տրվեցուցեր», է վարասին։ Պիտի ենթադրել, որ նա միայն այն է ասել իր սիրեցյալին, թե մեր գաղտնիքը հայտնի է քանջարանցական Երանոսին։ Այդքանով հեղնարը ազատվեցավ, ինքն էլ լիմանելով այդ մասին, մեղադրանքից է դարձել Երանոսի մահվան։

Կարո՞ղ էի իմ հերոսների, իմ գլխավոր հերոսների այդ արարքը դարձնել այնքան ցցուն, որ աչք ծակեր ընթերցողի։ Ոչ, իհարկե։

Ինչ կարող՞եք հարց տալ։ Իսկ չէ՞ի կարող արդյոք ընտրել նրանց այդ արարքը, եթե՞ դուք եք առաջարկել ձեր հերոսներին և գրիչը ձեր ձեռքումն է։

Այդ քայլը հեշտ կարող։ Ես ուզեցի, որպես հեղինակ, իմ հերոսներին սիրող անձնավորություն, շատ կուզենայի, որ նրանք կատարած չլինեին այդ քայլը, քայլ անցած իրականության և անցյալ մարդկանց վերաբերյալ հեղինակային իմ ներքին համոզմունքը, համարյա քնազդը, ասում էր, որ նրանք չէին կարող չկատարել այդ քայլը և ես անկարող եմ գրչի մի հարվածով ջնջել գա։

Ինչ մի՞թե ուտա Մկրտիչը պակաս սիրելի անձնավորություն է թե հեղինակի համար, և թե, հույս ունեմ, ընթերցողի համար։ Եվ մի՞թե ուտա Մկրտիչը ես, չի տպաւում իր կին հեղնարին։ Ոչ միայն այն իմաստով, որ նա ներա մտավ հաբիբայի տունը և հեղնարը նրան տեսնելով հանկարծամահ եղավ, այլև, ամենից առաջ այն իմաստով, որ ուտա Մկրտչի և նրա սերնդի ստեղծած հին հասկացողություններն էին կաշկանդել ու անաանելի դարձրել հեղնարի կյանքը, ի վերջո այդ հասկացողություններն էին, որ ընդհատեցին այդ կյանքը։

Իմ վիպակի մեջ շատ բան այնպես չէ, ինչպես որ ընթերցողը կուզենար, որ լիներ։ Դրա պատճառն այն է, որ վիպակիս մեջ նկարագրված ժամանակաշրջանում ես, հին գյուղում եմ, շատ բան այնպես չէր, ինչպես որ մենք կուզենայինք։ Եզրակացություն-պոնե այժմ տարենք այնպես, ինչպես որ առավելապես լավ է, չարժանանալու համար իմ վիպակի հերոսների և հերոսուհու ճակատագրին։

Ահա այն ամենը, սիրելի ընթերցողներ, որ կարող էի ասել իմ վիպակի և մասնավորապես ձեզ հետաքրքրող հարցի մասին։

— — —

Լավագույն ցանկություններով

Մկրտիչ Աբեղյան

Մ. Աբեղյան

9 ապրիլի 72 թ., Սոչի

digitised by A.R.A.R.@

Գրական անխառն վաստակի մը կողքին՝ Նիկողոս Մարաֆեան ունի նաեւ մամուլին մէջ ցրուած վերլուծական շարք մը գրութիւններ, որոնք իր բանաստեղծութիւններուն պէս խորք ունին դարձեալ եւ արձակին պէս՝ չունչ, ու գրուած են խոր ապրումով, ինչպէս կ'ըլլան ի վերուստ սահմանեալ առաքելով աշխարհ եկած ընտիրներուն բոլոր գրութիւնները։

Մարդուն կացութեամբ խորապէս շահագրգիռ եւ գրագէտի մեծ խղճմտանք մը մատնող գրութիւն է մեր դարը եւ իր հոգերը բազմանկիւն քննութեան մը ենթարկող հեռադիտակ ծաւալուն յօդուածը, որ, հակառակ քանեմեայ իր կեանքին՝ կը պահէ առաջին օրերու իր թարմութիւնը։

Գրական եւ խմբագրական ամբողջ շարժումի մը անգրաւարձող ուժեղ այս խօսքը կը յանձնարարենք մանաւանդ մեր երիտասարդներուն, այն մաղթանքով, որ հրապարակ եկող բերանաբաց նորութեան անմիջապէս անձնատուր չըլլան, այլ վարուին Մարաֆեանի պէս, ծաւալին՝ ճանաչումներով, խորանան՝ ժառանգական ապրումներու ակռով, հաստատեն կամ հակադրեն՝ անհատականութեան յոլովով։ Ըլլան՝ Մարաֆեանի պէս։

■

Ֆրանսական վերջին քառորդ դարու գրականութիւնը, ըլլալով հանդերձ պարտական օտարին, կը ներկայանայ նոյն ատեն ազգային իմաստութեամբ։

■

Ֆրանսական գոյապաշտութիւն կ'ըսեմ ո՛չ միայն անոր համար որ զանազանութիւն մը կ'ուզեմ դնել գերմանականին եւ ֆրանսականին միջեւ, այլ որովհետեւ այս վերջինը կ'արտայայտէ նաեւ ցեղին մեծ մասին հոգեվիճակը։

■

Մեր գիտակցութիւնը երբեմ չի կրնար ծերբազատուիլ բոլորովին մեր ներաշխարհին խուզերէն, աներեւոյթ, ժառանգական եւ ազգական տարրերուն զօրութենէն։

■

...Այս է մարդկային ներկայացիրը ոմնկասկած։ Տրամ մըն է։ Բայց տրամին վրայ տրամ մըն է նաեւ ոճերեցութեան սէրը, երբ այդ սէրը մասնաւորապէս կը պանծացնէ գեղեցկութիւնները։ Մարդը կեղտերը չսիրելով է, որ կրնայ արդարանալ մասամբ։

■

Հայը, գինանալով հանդերձ կեանքին ունայնութիւնը, կը սիրէ զայն եւ կ'ապրի անոնցմէ յոյսի մը շնորհիւ, ինչ փոյթ, թէ այդերը շատ «բաց» չեն։

digitised by A.R.A.R.@

Ն. ՍԱՐՍՖԵԱՆ

ՄԵՐ ԴԱՐԸ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ,

Ֆրանսական Գրականութեան մէջ

★

Մեծութիւն մըն է մեր դարը եւ խառնակութիւն։ Ցառաջդիմութիւն է եւ աւերակներ ձգելով կ'առաջանայ. իմացական բացառիկ զարթնում՝ եւ քայքայում մտքի ու հոգիի։ Գիւտերը՝ գիւտերուն յաջորդեցին, ստեղծագործեցան արուեստական սրտեր, հաշուող, զգայուն մեքենաներ եւ հրէշի մը առջեւ ինք, որ անպարարի մը պէս, կրնայ անհետացնել իսկոյն հսկայական քաղաքներն ու մարդերը, երկրագունդը փշրել թաթին մէջ եւ ցրուել դայն յաւիտենական անհունն ի վար։ Պատերազմները՝ յաջորդեցին պատերազմներուն։ Մեր դարը պիտի յիշուի անոնցմով եւ վիթխարի յեղափոխութիւնով մը, ժողովուրդներու տեղահանութիւններով, ջարդերով, անհամար բանտարկեալներով, գնդակահարուածներով եւ միլիոնաւոր զինուորներու արիւնով։ Հաւատքներ բարձրացան ու ինկան։ Ու սեգանին վրայ են դարձեալ հարցերը, որ չեն լուծուիր, գաղափարները՝ անոնք, որ փորձուած եւ ձախողած են, անոնք որ պէտք է փորձուին։ Հսկայական յեղաշրջում է մեր դարը եւ անելի մատնուած մարդու տեղքայլ։ Տագնապ եւ անձկութիւն է դարձեալ եւ յոյս։ Պատուհասներու դարն է, որ կ'ապրինք եւ կը սպասենք յայտնութիւններու։ Դարերուն ամէնէն ողբերգականն է, ըլլալէ ետք ամէնէն արիւնոտն ու վայրագը, բայց ամէնէն հետաքրքրականը նաեւ։ Եկած է ժամանակը մեծ հաշուեյարգարի։ Պէտք է վճռուի մարդուն ճակատագիրը եւ այդ մարդն է օրակարգին գլխաւոր նիւթը։ Համամարդկային շունչ մը կը փչէ աշխարհի մէկ ծայրէն միւսը։ Ու աշխարհը բաժնուած է երկու վիթխարի ուժերու, որ իրար կը պարսաւեն այդ մարդուն անունով, կը պատրաստուին իրար տապալել։ Իրենց հուներէն դուրս նետուած, ալեկոծ տարրերուն դէմ են դարձեալ։

digitised by A.R.A.R.@

Այս բոլորը ներկայ են գրեթէ ֆրանսական գրականութեան մէջ։ Տագնապ, յուսահատութիւն, յոռետեսութիւն եւ լաւատեսութիւն կը խաչաձեւեն իրար, գրական զանազան հարցերու հետ։ Ֆրանսան Եւրոպայի միակ երկիրն է, որ իր ուժերուն տէրը կը մնայ դեռ քիչ թէ շատ։ Ներկայացուցիչն է դարաւոր քաղաքակրթութեան մը, հայրենիքը յեղափոխութեան եւ մարդ էակին ազատութեան։ Կը գտնուի Եւրոպական աւանդութիւն մը պաշտպանելու գիրքին մէջ եւ ինկած է ռուսական յեղափոխութեան լոյսին տակ։ Ֆառնարան մը ըն է՝ ուր քաղաքական վէճերը դատարան կը հասնին։ Իր վերջին տարիներու գրականութիւնը պատկերն է այս ալեկոծ վիճակին։

Գրողներէն ոմանք մղձաւանջը Արեւելքէն կը սպասեն, ոմանք Արեւմուտքէն, այսինքն՝ Ամերիկայէն։ Ցոյսը նոյնպէս։ Այսպէս, ոմանք չեն ուզեր ընդունիլ ռուսական յեղափոխութեան գաղափարական նկարագիրը։ Ֆառնարան մըն է՝ որուն ետին կայ զարհուրելի բռնակալութիւն մը՝ իր բանտերով եւ աքսորավայրերով։ Ուրիշներ կը մատնանշեն Եւրոպան շահագործող Ամերիկան՝ որուն միակ նպատակն է համաշխարհային երրորդ պատերազմ մը ստեղծել դարձեալ տիրանալու համար բոլոր շուկաներուն։ Կը յիշուին անհետացած հնդիկները եւ սեւամորթներուն քաշած տառապանքը։ Կը պաշտպանեն Արեւելքը, կ՚արդարացնեն Արեւմուտքին կեղեքիչ լուծը թօթուող արեւելեան երկիրներուն մղած կռիւները։ Դէմ են Էքսպանսիոնիսթ (expansionniste) պատերազմներուն, ինչպէս դէմ եղան Գերմանիոյ եւ Ճապոնին։

Այսպէս, գաղափարապաշտ երկրի մը մէջ ենք, որ կը ցնցուի իր հիմերէն՝ ճշմարտութեան հասնելու համար։ Ճշմարտասիրութեան երկրի մը մէջ ենք, ուր կեղծիքը ներկայ է ամէն բանի ետին։ Իր գրականութիւնը կը տառապի դարուն, համամարդկային, ազգային, ճշմարտութեան, փրկութեան եւ այլ հարցերով, որոնց կարգին նաեւ գալիք գրականութեան հոգը։

Դժուար է տալ նման գրականութեան մը համայնապատկերը քանի մը էջերով։ Բայց քանի մը ընդհանրական գիծեր կրնան ընթերցողը լծել մտքի աշխատանքի մը, որ կարեւոր է մեր ժողովուրդին կեանքին եւ մշակոյթին պաշտպանութեան համար։

Դժուար է տալ այդ գրականութիւնը մեր տառերով, այն պատճառներով նաեւ, որոնց մասին կը խօսի Օնիւսթ Անժըլէս։ Հիմա, կ՚ըսէ, ներշնչումէն աւելի կարեւորութիւն կը տրուի զգուշութեան. «Արտակարգօրէն ճարպիկ դարձած ենք բառերը կշռելու, անոնց կտրելիք ճամբան նախատեսելու, անոնց հարուածներն ու հակահարուածները հաշուելու մէջ»։ Բոլորն ալ հաւասարապէս մարդիկ են, բացի քանի մը գրողներէ, որ ծուռ կամ լիտակ, կ՚ըսեն իրենց ըսելիքը առանց վերապահութեան։

Որոշ ճշմարտութիւն մը կայ այս ըսուածին մէջ, բայց կարծուածէն աւելի շատ են անվերապահ արտայայտուողները, անոնք մանաւանդ, որ կը խորհին, թէ գրողին առաջին նպատակն է վկայութիւններ տալ, ինչպէս կ՚ըսէ Շարլ Փլիգնիէ եւ ի. Պիւլէ։

Այսպէս, եթէ չենք կրնար ապակիներ փշրել, կրնանք խօսիլ կարդ մը բաներու մասին՝ չէզոք վկայի մը սահմաններուն մէջ։

Անորոշութիւնը, անձկութիւնը, որոնց մէջ ինկած ենք ազգովին, Սփիւռքի եւ Հայրենիքի շուրջ, կը պահանջեն մենք կլուռել բոլոր վտանգները, որ կը սպառնան մեզի, ինչպէս եւ յոյսերը, նկատի առնել մեր դարուն բոլոր հարցերը, աշխարհին նայիլ բաղմաթիւ անկիւններէ։

Այս հոգը ունին նաեւ ֆրանսացիները։ Գրողը չի կրնար մեկուսացած ապրիլ, կ՚ըսէ Սարթր, լաւ է, որ քալէ իր դարաշրջանին հետ, որուն կը

digitised by A.R.A.R.@

պատկանի նաեւ ինք։ Գրողը պատասխանատու է նոյնպէս իր շրջանի մարդոց հանդէպ։ Մեղի հետ ապրող մարդոց համար կը գրենք եւ կ'ուզենք մեր դատը յանձնել այս աշխարհին վրայ եւ ոչ թէ մեր մահէն անդին։

Ֆրանսական գրականութեան մէջ, 1920էն ի վեր, յոռետեսութիւն մը կը տեսնենք, որ կ'ուզէ յոյսի վերածուիլ անպայման, ինչպէս կ'ըսէ Կ. Փիքոն(*)։ Այդպէս է գերիրապաշտութիւնը, ինչպէս եւ գոյապաշտութիւնը այսօր։ Այս երկու գլխաւոր շարժումները կու տան գրեթէ նկարագիրը ժողովուրդին եւ գրականութեան հոգերուն։ Լաւատես դառնութիւն մըն էր առաջինը։ Կ'ուզէր մարդը ձերբազատել հայրենասիրական, կրօնական, ընտանեկան, գիտական եւ գրական կեղծիքներէն։ Արեւմուտքը կը յայտարարէր փըտած, չէր եղած իր մեծ առաքելութեան տէրը։ Կը բաղձար անոր տապալումը։ Հակառակ էր բանականութեան՝ բանաստեղծութեան եւ կեանքին մէջ։ Զախողեցաւ։ Անոր գլխաւոր առաջնորդներէն Արակոն ու Էլիւարը դարձան համայնավար, խորհելով, թէ աշխարհը կարելի է յեղաշրջել միայն տնտեսական եւ քաղաքական միջոցներով, յեղափոխութիւնով։

Գոյապաշտութիւնը շատ հեռու չէ նաեւ համայնավարութենէն։ Աւելի մօտ է անոր, քան թէ քրիստոնէական գոյապաշտութեան, որ կը ճանչցուի Քիերքէկարտով։ Սարթրին վարդապետութիւնը աւելի աշխարհիկ է քնոյթով։ Հոս, դժգոհութիւնն ու յուսահատութիւնը ապրելու եւ ազատագրուելու ելք մը կը փնտռեն՝ բանականութեան, գիտակցութեան դիմելով։ Ֆրանսական գոյապաշտութիւնը կը մերժէ ամէն պատրանք։ Ան յուսահատութեան կ'առաջնորդէ մեզ, որպէսզի տեսնենք տգեղ ու գռեհիկ աշխարհը եւ տեսնելով, գիտակցութեան հասնելով վեր դանք անոնցմէ եւ մեր մէջ փնտռենք մեր փրկութեան ճամբան։ Մեր առաջին պարտականութիւնն է բաց պահել մեր աչքերը եւ չբլլալ կամաւոր կոյրեր այս անհեթեթ, գռեհիկ ու նոզկալի իրականութեան առջեւ։ Սարթր, այսպէս, ազատութեան եւ մաքրութեան կը ձգտի, կը մօտենայ քրիստոնէութեան եւ սակայն իր նպատակն է աշխարհիկ կեանքը միայն եւ հաւաքական բարօրութեան կը մտածէ, ազատութեան։ Կ'ուզէ, որ մարդը ազատագրուի կեանքին ճնշող պայմաններէն, ինքզինքէն նաեւ, իր անձկութիւններէն։ Կը թելադրէ մեղի չշփոթել այն անձկութիւնը ճեռրաստէնիին հետ։ Այսինքն՝ անվրէպ է անձկութիւնը, քանի որ մարդը կը կրէ իր ուսերուն մարդկութեան ճակատագիրը, եւ մանաւանդ, որ մինակ է այդ մարդը ինքն իր մէջ՝ իր ուժերուն վստահած միայն։ Մեր մեծութեան մաս կը կազմէ այդ վախը։

Ճարտար փիլիսոփայութեան մը առջեւ ենք անշուշտ, որ ոչինչ կը յուսայ եւ որ կը գատապարտէ յոյսը իբրեւ արգելք յառաջդիմութեան եւ ազատութիւն կը խոստանայ։ Մանօթ է անշուշտ բոլորին այս նոր փիլիսոփայութեան հիմնական միտքը։ Մարդը տարբեր է բոլոր էակներէն, ան ազատ է։ Իր գոյութեամբ է, որ կը կերտէ իր էութիւնը, մինչդեռ, երբ տուն մը կը շինենք, անոր պատկերը ունինք արդէն նախապէս մեր մտքին մէջ, այսինքն՝ էսանսը (essence) կու գայ էքզիսթանսէն (existence) առաջ, այս պարագային մէջ։ Հակառակն է մարդուն մէջ։ Մարդը ապրելով, կեանքին մէջ նետուելով, պայքարելով է, որ կը կերտէ ինքզինք։ («Faire et en faisant se faire et n'être rien que ce qu'il s'est fait»)։

Կարեւոր է նկատել, թէ եւրոպական միտքը, հակառակ Գերկոնին, որ անբաւարար յայտարարեց մարդկային ուղեղը, հակառակ Այնշթայնին եւ

(*) Panorama de la Nouvelle Littérature Française, G. Picon, 1949.

digitised by A.R.A.R.@

Ֆրէօյտին, չի կրնար հրաժարիլ մտածելէ։ Ու կ'ուզէ պայծառատես գիտակցութիւն մը, գիտնալով հանդերձ, թէ մարդ ու աշխարհ նպատակ չունին, անհեթեթ են։ Լուծում մը չէ, ի հարկէ։

Այս պարագան կարելի է նկատել Ֆրանսական հոգիի տրամին գլխաւոր դիծերէն մէկը։ Մտածող, զատող ժողովուրդը կը ներկայանայ այսօր մեզի յոգնած մտածելէ, ինքզինք անփութութեան զարկած, գրեթէ ինքնալքումի հասած՝ նոյնիսկ Սարթրի վարդապետութեան չուրին տակ, սխալ ըմբռնուած, ի հարկէ։ Բարոյալքում, վայելք, ուրախութիւն, սեռային ազատութիւն՝ փրկուելու համար արտաքին եւ ներքին ճնշումներէ։ Շատ հեռու չենք Արեւելքի ճակատագրապաշտութենէն։ Եւ ասիկա ազատութիւն մը չէ անշուշտ։

Գրականութեան մէջ, տագնապը, զարմեալ, անթիէնթելեքթիւալիզմ է (antiintellectualisme), կ'ըսէ Ժիւլիէն Գենտա։ Ու գերիրապաշտական ազդեցութիւնն է, որ կը շարունակուի դեռ, աւանդապաշտ գրականութեան կողքին։

Բայց ա՞յս է միայն։ Դայ հոգեբանական տագնապ մը նաեւ։ Մարդը, կորսնցնելով իր հաւատքները, զատրած է նաեւ հաւատալէ ինքզինքին։ Կը դղայ, թէ տէրը չէ իր արարքներուն եւ իր ինքնութեան մէջ կը հաստատէ ժառանգական տարրերէն զատ, հաւաքական ինքնութենէն անդին՝ անծանօթ ու անձկաբեր ուժ մը նաեւ։ Ժիւլիէն Կրին, Ժիտ, Քաֆքա, Փիրանտէլլօ վերոգովիչ լոյսեր են։

Իրապէս հակասութեան մէջ է մարդը, անելի մը առջեւ։ Անտարակոյս, մեծ բան է գիտակցութիւնը, բայց ան պատճառն է նաեւ ամլացման եւ վհատութեան, անձկութեան, որոնցմէ վեր կը կանչէ մեզ Սարթր։ Քանիներ կրնան հասնիլ։ Բոլորին համար չէ իր քարոզած ազատութիւնը։ Ճեւական վէճի առարկայ է Սարթր։ Եւ ըմբռնելի է այդ վէճը։ Մարդը կարծուածէն աւելի բարդ էակ մըն է եւ հակասական՝ իր խորքին մէջ։ Հաւաքական եւ անհատապաշտ։

Որքա՞ն թոյլատրելի է այդ գիտակցութիւնը համայնավար աշխարհին մէջ։ Եղածը ինքնալքում մըն է հոն ալ եւ ոչ թէ ուժեղ, ազատ եւ պայծառատես գիտակցութիւն մը։ Որովհեւեւ ինքնալքում մըն ալ կայ, որ կ'ըլլայ կոյր հաւատքով եւ խանդավառութեամբ։ Արեւելքն կը բողոքէ։

Համայնավար մարդը, կ'ըսէ, այն մարդն է, որ աշխարհը տեսնելէ ետք անդամ մը յատակօրէն, չի կրնար մոռնալ զայն։ Լուսաւորուած է եւ ոչ մէկ բան կը փոխէ այլեւս այդ լոյսին հետ։ Իր անմիջական եւ անձնական շահերէն վեր կը դասէ զայն։ Համայնավար մարդը այն է, որ ամէն բան կը պահանջէ մարդ էակին համար — երջանկութիւն, առողջութիւն, ապահովութիւն։ Անձնապաշտ չէ, ոչ ալ նիւթապաշտ՝ քանի որ ինքզինքին չի մտածեր, այլ ընդհանուրին։ Արեւելքն համայնավարութիւնը կը նկատէ ներկայացուցիչը մարդկային մեծութեան։ Համայնավարը զերծ է նաեւ քրիստոնեային յետմահու շահախնդրութենէն կամ սարսափէն։

Կայ երրորդ հոսանք մը եւս, կաթոլիկ, որուն ներկայացուցիչներէն մէկն է Մորուա, որ դէմ է թէ՛ գոյապաշտութեան եւ թէ համայնավարութեան։ Գոյապաշտութիւնը կը ներկայացնէ Սոդոմոնի օրերէն ի վեր ծանօթ բան մը եւ կը հալածէ համայնավարութիւնը։ Լուծում մը չի կրնար տալ ինքն ալ։ Խօսելով գոյապաշտ Ալպէր Քամիւի առթիւ, յոռետեսութիւն մը կը մատնէ, կ'ընդունի մարդուն սեզիմիասեան ճակատագիրը։ Բարձրանալ եւ իջնալ։ Գուրը միակ փրկարար միջոցն է իրեն համար։ Իր ձայնը կը խեղդուի ուրիշ ձայներու մէջ, որ կը դատապարտեն այդ գուրը իբրեւ ցլատիչ ազ-

digitised by A.R.A.R.@

դակ եւ կը պահանջեն կատարեալ արդարութիւն մը աշխարհին վրայ։ Այս գեանի վրայ ալ դէմ առ դէմ կը դտնենք գրողներ ինչպէս Մէրլօ–Փոնթի եւ Մոնդրոս արեւմտեան եւ Ֆ. Ռուսիոյ մէջ կիրարկուած արդարութեանց շուրջ. մեզաւոր՝ մէկը միւսին առջեւ։

Ահա ընդհանուր պատկերը այդ խառնարանին։ Գէտք է յիշել տակաւին անկուժէ (engagé) գրականութեան հարցը, վիճելի միշտ, վէճը արդիական բանաստեղծութեան շուրջ։ Ինդրոյ առարկայ են Ֆրանսական մշակոյթը, քաղաքականութիւնը, Եւրոպան եւ համայն մարդկութիւնը՝ ոգեկան եւ նիւթական բնոյթներով։ Եւ այս բոլորին նայողը կ'ըմբռնէ մեր դարուն մեծութիւնն ու ողբերգութիւնը։ Հակասանքներու, բիւզանդական վէճերու դար մը, վրդովիչ եւ նոյն ատեն յուսատու։

Այս ողբերգութիւնը չի վրիպիր Մալրոյի աչքէն։

«Շատ որոշ չէ, որ Եւրոպացին մեռած է, — կը գրէ ան, — բայց որոշ է, որ լքուած է եւ ան, իր կարգին, կը լքէ իր արժէքները եւ կը պատրաստուի մեռնիլ··· երբեմնի կայսրութեան մը պէս, որ ապրելու վճռակամութիւն չունի այլեւս»։

Անծանօթ աշխարհի մը առջեւ ենք, կ'ըսէ։ Մտահոգ է։ Կ'ըմբռնէ Եւրոպայի յողնութիւնը, բայց կը հաւատայ նաեւ այդ Եւրոպային, Ամերիկային եւ Ռուսիայէն աւելի կ'եղրակացնէ.— Անոնք, որ պիտի գան մենէ ետք, ապշութեամբ պիտի նային մեր ներկայ անձկութեան եւ Եւրոպային, որ կը յիշեցնէ իյնալու մօտ Բիւզանդիոնը, բայց այս խեղճութիւններուն քով, պիտի տեսնեն նաեւ մարդիկ, որ չափելով իրենց ընկճուած ողնայարը, ձգտած են համաշխարհային խառնակութիւնը լոյսի մը վերածել եւ վերստեղծել մարդը նորէն, նոր՝ կաւէն, այսինքն՝ ցեխէն, որ ներկայ աշխարհն է։

Կ'արժէ մանրամասնել այս բոլորը։

«Կարելի է ըսել, թէ ռոմանթիզմէն մինչեւ սիւրիալիզմ, գրականութիւնը կը ձգտէր ըլլալ զուտ գրականութենէն աւելի բան մը», կը գրէ Կ. Փիքոն։ Եւ, այս պատճառով, «գրականութիւնը գրականութենէն նուազ բան մը ըլլալու» մէջ է այսօր։ Այսինքն՝ գրողները գրաղեցան հոգեկան խորվքներով եւ մարդկային պայմաններով, ձգտեցան հետզհետէ թօթուել նաեւ հռետորութիւնը, ըլլալ նուազ «գրական» եւ գրականութիւնը աւելի քաղաքական եւ իմաստասիրական որոնում դարձաւ, քան թէ արուեստ։ Դարձաւ թանձր իրապաշտութիւն նաեւ։ Եւ արուեստական՝ բնական է։ Գոյապաշտութիւնը ցայտուն օրինակ մըն է։ Ասիկա կը ներկայանայ կէս դարու բաղձանքներու իրականացումով եւ թերութիւններով։

Ընդհանրացումները սխալ են միշտ. կէս դարէ ի վեր Ֆրանսական գրականութիւնը տուած է բացառիկ արժէքներ նաեւ։ Բայց որոշ իրողութիւն մը կայ Կ. Փիքոնի դիտողութեան մէջ, երբ կը նայինք խառվ ռոմանթիկներէն ի վեր կատարուած յեղաշրջումին։

Դառնութենէն ծնած գերիրապաշտութենէն ասդին, որ Ֆրէօյտի եւ Ֆ. Մարքսի ազդեցութեան տակ կը գտնուէր, Ֆրանսական մտքին յառաջապահ մասը, յուսահատ, դժգոհ, տագնապի մէջ, յեղափոխական, դէմ գրամատիրական աշխարհին՝ կը քալէ առուսական յեղափոխութեան հետ դուգընթաց։ Ֆրանսական համայնավար կուսակցութիւնը հիմնուեցաւ 1922ին՝ Լենինի եւ Մ. Գաշէնի միջեւ եղած տեսակցութենէն ետք եւ նպաստաւոր հող մը գտաւ իսկոյն։ Այս կուսակցութեան եւ անոր գրականութեան կողքին կամ դէմ՝ գրթթ քառորդ դարու ամբողջ գրականութիւնն է, որ կը գտնուի այդ յեղափոխութեան առջեւ։ Գոյապաշտութիւնը, շարժումներուն ամէնէն վերջինը, դէմ

digitised by A.R.A.R.@

նոյնպէս դրամատիրական աշխարհին, բայց զէմ նաեւ պրոլետարական բրոնատիրութեան, շատ աւելի մօտէն կը հետեւի Բ. Մարքսի վարդապետութեան, շրջելով հանդերձ համերաշխ անոր հետ։

Գոյապաշտութեան մէջ՝ կը տեսնենք դարձեալ մեծ համեմատութեամբ ծաւալումը գերմանական փիլիսոփայութեան։ Այս շարժումը, գերմանական արդէն ծագումով՝ բաժնուած հեթանոսական եւ քրիստոնէական երկու ճիւղերու, տուաւ գրական բազմաթիւ երկեր՝ Հայտեկէրի եւ Քիերքէկարտի հետեւողութեամբ։ Գոյապաշտութենէն առաջ՝ ծանօթ էին արդէն իրենց ազդեցութիւններով՝ Քանթը, Հեկէլը, Կէօթէն, Վակնէրը, Ֆրէյտը, Նիցշէն։ Պատերազմէն ասդին՝ գոյապաշտութեան եւ Քաֆքայի յայտնութեամբ, շատ աւելի զգալի է գերմանական ազդեցութիւնը(*)։

Այսպէս, կարելի է խորհիլ, թէ ֆրանսական գրականութիւնը՝ դիմելով քաղաքականութեան եւ իմաստասիրութեան, կը կորսնցնէ նաեւ իր ազգային բնոյթը։ Նման վարանումի մը առջեւ կը գտնուինք, երբ նկատի կ'առնենք Ֆրանսայի քաղաքական կացութիւնը։ Ֆրանսա, բաժնուած երկուքի, երեքի, չորսի, անձնատուր՝ բիւզանդական վէճերու, կը ներկայանայ վըտանգուած ինքնութիւնով մը։ Վտանգ մը Մոսկուան։ Վտանգ մը նաեւ Գերմանիան, որուն հետ ստիպուած է եղբայրանալ՝ յանուն Եւրոպայի փրկութեան։ Զգալի են այս հոսանքները։

Եւ սակայն, պէտք չէ մոռնալ, թէ մեծ մշակոյթի մը հետ է մեր գործը։

Ֆրանսական վերջին քառորդ դարու գրականութիւնը, ըլլալով հանդերձ պարտական օտարին, կը ներկայանայ նոյն ատեն ազգային ինքնութեամբ։ Կասկած չկայ, թէ Ֆրանսա ինքզինք կը գտնէ դուրսէն եկածին մէջ, այսինքն՝ իր ձգած ազդեցութեան արձագանգն է, որ կ'ընդունի։ Ռուսական յեղափոխութիւնը կարելի է համարել չարունակութիւնը ֆրանսական յեղափոխութեան եւ իրրեւ գոյապաշտ կարելի է ճանչնալ Փասքալն ու ուրիշներ՝ դանիացի Քիերքէկարտէն եւ Հայտեկէրէն առաջ։ Ու, վերջապէս, նկատի պէտք է առնել պահպանողական տարրը Ֆրանսայի գրականութեան՝ Վալէրի, Ժիրոտու, Քլոտէլ եւ ուրիշներ։ Ու Ֆրանսական միտքը կը պարզէ ինքնուրոյն մնալու կամք մը՝ ո՛չ միայն այդ աւանդապահներով, այլեւ նորութեան եւ արկածախնդրութեան սիրահար յառաջապահներով, որոնց գլխաւոր փափաքն է նաեւ մնալ միշտ աշխարհին գլուխը։

Փարիզ կեդրոնը չէ միայն կիներու հագուստի նորաձեւութեան։ Ֆրանսական են նաեւ գրական գրեթէ բոլոր դպրոցները։ Ու ասոնք առատ են այսօր, ինչպէս երէկ։ Համայնավար դպրոցէն, է. Մունիէի փերսոնալիզմէն (personnalisme) առաջ կրնանք իբր օրինակ տալ դարձեալ գոյապաշտութիւնը։ Ֆրանսայի մէջ՝ գերմանական այդ երկու ճիւղերը կը ճիւղաւորուին իրենց կարգին ու տարակարծութիւններու խաչաձեւում մը կը տեսնենք ամէն մէկուն մէջ։ Այսպէս, մեծ տարբերութիւն մը կայ Հայտեկէրի, այսինքն անատուած գոյապաշտութեան հետեւող Սարթրին եւ Քամիւին միջեւ։ Այդ դպրոցները, որ կու գան ու կ'անցնին նորաձեւութեան պէս, կը կրեն ազգային բնոյթ մը։ Ու ֆրանսական գոյապաշտութիւն կ'ըսենք ո՛չ միայն անոր համար որ զանազանութիւն մը կ'ուզենք դնել ֆրանսականին եւ գերմանականին միջեւ, այլ որովհետեւ այս վերջինը կ'արտայայտէ ցեղին մեծ մասին հոգեվիճակը։

Հասկնալի պիտի ըլլայ այս բոլորը, երբ ըսենք, թէ մարդ էակն է մաբ-

(*) Մեր Միքէլ գուրս եկ Ֆրանսական գրականութեան կրած մնացեալ ազդեցութիւնները։

digitised by A.R.A.R.@

դոց հոդը եւ այդ հոդը կը տեսնենք Փասքալէն սկսեալ՝ մանաւորապէս ռոմանթիկներուն եւ սիւրիալիսթներուն մէջ։ Հասկնալի պիտի ըլլան նաեւ մերձեցումն ու հակառակութիւնը երկու տեսակ գոյապաշտներու եւ մարքսականներուն միջեւ։ Անոնց երեքին ալ նպատակն է մարդը։ Անոնք երեքն ալ յաւակնութիւնը ունին այդ մարդը ներկայացնելու կատարեալ եւ ամբողջական, ու անկատար կը գտնեն իրար։

Հ. Լըֆէպրը կու տայ որոշ գաղափար մը այս մասին՝ «Մարքսիզմը ընդդէմ գոյապաշտութեան» գրութեան մէջ։ Անընդունելի կը գտնէ ան Նիցշէի գերմարդը, որ ներկայ է հեթանոսական գոյապաշտութեան ստեղծած մարդուն մէջ։ Անընդունելի՝ նոյնպէս «մարդկային»ը, որ վերացական է՝ իր բնազանցական հարցերով։ Անընդունելի վերջապէս այն, որ քրիստոնէամիտ ներքինիի պէս, կարեկցութեամբ կուլայ մարդկութեան վրայ։ Բայց գոյապաշտները, իրենց կարգին, վերացական ու անկատար կը գտնեն մարքսականը, որովհետեւ ան չի զբաղիր բնազանցական հարցերով։ Ու գոյապաշտներուն համար ամբողջական մարդը ան է, որ կը մտածէ թէ՛ մարմնին եւ թէ հոգիին։

Հեթանոսական եւ քրիստոնէական գոյապաշտները, համաձայն մինչեւ հոս իրարու հետ՝ դէմ առ դէմ կ'ելլեն, իրենց կարգին ըլլալով տարբեր բնազանցական ու բարոյական ըմբռնումներու մէջ։

Անտարակոյս, իր ուժերուն դիտակից դրիչը պիտի չփորձուէր մոլորիլ ինկերաբանական եւ իմաստասիրական այս հարցերուն մէջ, եթէ չներկայանային անոնք նոյն առեն գրական տարազով։ Գոյապաշտութիւնը առաւելապէս իր ռամկացած ձեւով է, որ հասկցուած ու քննադատուած է։ Ու այդ ռամկացման մէջ են կարծէք իր կարեւորութիւնն ու յաջողութիւնը, ինչպէս եւ իր ձախողանքին պատճառները(*)։

Ֆրանսական գոյապաշտութիւն ըսելով նկատի կ'առնենք ամէնէն առաջ Ժան-Փօլ Սարթրը, հեղինակը «Էութիւնն ու ոչնչութիւնը» (L'Etre et le Néant) հատորին։ «Բայց «էութիւնն ու ոչնչութիւնը» կարդալու պէտք չունիմ, — կ'ըսէր հակառակորդներէն մէկը, Լաս Վերկնաս, — հասկնալու համար, թէ ի՞նչ է գոյապաշտութիւնը»։ «Տղայական առաջարկներու առջեւ եմ, — կ'աւելցնէ ան, — երբ մէկ կողմ կը նետեմ իմաստակ եւ հակասական բարդոյթները, որ «ծանր են, ինչպէս բոլոր գերմանացիները եւ թարգմանութիւն կը հոտին տեղ-տեղ»(*)։

Արդարեւ, գոյապաշտութիւն ըսելով կարելի է հասկնալ զայն հառաբակ ու աչխարհի սկիզբէն ի վեր ծանօթ բանաձեւով մը. «Անհեթեթ է աշխարհը. ինչո՞ւ կ'ապրիմք։ Չեմք գիտեր։ Շան կեանք է, բայց ի՞նչ ընեմք, պէտք է ապրիմք»...

Ի հարկէ անարդար պիտի ըլլար այս խեղճութեան վերածել «Էութիւնն ու ոչնչութիւնը», պատկառելի համագումարը արեւմտեան փիլիսոփայութեան, եթէ անմատչելի այս լեռը, իրապէս պզտիկ չերեւար իր ռամկացած արդիւնքով։

Սարթր, ըլլալէ եաք այդ մեծ տեսարանը, գրած է նաեւ վէպեր եւ թատերգութիւններ, «Նոգկանիքը» (La Nausée), «Աղտոտ ձեռքերը» (Les mains

(*) «Անիկա կը յիշեցնէ Գերկոնի գտած յաջողութիւնը. ինչպէս եւ տատայիզմի եւ գերիրապաշտութեան ազդակաւոր ոճրոյթները», կը գրէ Տ. Ռոփ՝ յօդուածի մը մէջ, զոր Մ. Իշխան թարգմանած է («Ակօս», 1949-50, թիւ 4)։

(*) «Սարթրի պարագան», Բէմոն Լաս Վերկնաս։

digitised by A.R.A.R.@

sales), «Ճանճերը» (Les mouches), «Ցարգամնծար բոզը» (La putain respectueuse), «Պատը» (Le mur), «Ազատութեան ճամբաներ» (Les chemins de la liberté), եւայլն։ Իր տրամադրութեան տակ ունի պարբերական մը՝ «Արդի ժամանակները» (Les temps modernes), որուն շուրջ հաւաքուած կը տեսնենք բազմաթիւ դէմքեր, որոնց ամէնէն ծանօթներ են Սիմոն տը Պովուար եւ Մերլօ Փոնթի։ Շարժումը իր յաջողութեան մեծ մասը կը պարտի Սարթրի այդ հատորներուն, որոնց քով պէտք է դնել նաեւ Սիմոն տը Պովուարի «Հիւրիշներու արիւնը» (Le sang des autres) եւ Ալպէր Քամիւի «Օտարականը» (L'Etranger), «Սիզիֆի առասպելը» (Le mythe de Sisyphe) եւ «Ժանտախտը» (La peste)։

Ցաջողութիւն չէ շատերուն համար՝ վէպերով եւ թատերգութիւններով եղած այս յաջողութիւնը։ Ասոնք քննադատելի են իբրեւ գրականութիւն եւ անբարոյացում։ Այդ յաջողութիւնը կը վերագրուի մարդոց սնոպիզմին, եւ խմաստակներ, վաղահասօրէն ծերացած երիտասարդներ, թափթփած, անոպատակ եւ անիմաստ յուսահատներ, ախտաւորներ եւ վիժածներ կը տեսնուին այս շարժումին մէջ։

Գոյապաշտութեան հեթանոս այս ճիւղը կը ներկայանայ ախտագինորէն իրապաշտ եւ իմացական ամբարբութեան մեղադրանքին տակ։ «Ամէն օր, — կ'ըսէ Տէպրի, — անհերթութեան բեռնատար կառքերը գոյապաշտներու գործարանէրէն դուրս կու գան սեղմ շարքերով··· կ'ոգոդեն հրապարակը իրենց բարձուխով՝ մինչեւ օտար շուկաները։ Օրուան ամէնէն շահաբեր գործերէն մէկն է(*)։ Անտրէ Ժիտի կը վերագրէն հետեւեալը. «Նախորդ պատերազմէն ետք Տատա մը կար, այս պատերազմէն ետքն ալ բաբա (caca) մը»։ Ժ. Թիքսիէ տօնավաճառային խաբեբայութիւն մը կը տեսնէ եւ գոյապաշտութիւնը, որ կը ներկայացուի ողջ ջրանոյշի մը պէս, ուրիշ բան չէ, կ'ըսէ, եթէ ոչ ցեցերէն ծակծկուած կէսը ձուկ կէսը կին մոմէ արձան մը, այսինքն՝ հնութիւն մը։

Այս վէպերն ու թատերգութիւնները չեն տար շարժումին ամբողջ փիլիսոփայութիւնը, թէեւ գրուած են թեզի ձեւով։ Եւ սակայն անոնց մէջ է դարձեալ, որ գոյապաշտութիւնը կը գտնայ ըմբռնելի։ Ասոր գլխաւոր գաղափարներէն մէկը կը դտնենք Սարթրի «Ողկանք»ին մէջ (տպուած 1938ին։ Կ. Փիքոն նկատել կու տայ, թէ գոյապաշտութիւնը ծնած էր արդէն պատերազմէն առաջ եւ անոր նախակարապետներէն մէկն էր Գ. Ֆոնտան)։ Այս գիրքին հերոսը նողկանքով է, որ կը հասկնայ գոյութեան ինչ ըլլալը. «C'était la pâte même des choses»։ Անկասկած, ախտաձին էակի մը հետ է մեր գործը, որ տէր նոյն ատեն սուր իմացականութեան՝ կ'իյնայ արտակարգ հաճիճակի մը մէջ եւ ծառերուն, մարդոց, առուներուն եւ երկաթ որմերուն ետին, որ կ'անհետանան՝ կը տեսնէ միայն մէ՛րկ, մեղկ, հրէշային եւ նողկալի «խմոր» մը՝ այլազան գոյութիւններու։ Ասոնք անքատուած՝ իրենց արտաքին կերպարանքներէն, որ մակերեսային են, այսինքն՝ անհատականութենէն, որով կը զանազանուին իրարմէ, կ'երեւան իրենց ամբողջ մերկութեամբ՝ քովէ քով, իրարմէ նեղուած, կը շարժին, աւելորդ գալով իրենց ներկայութիւնը այս աշխարհին վրայ։ Հերոսը, որ կ'ունենայ այս տեսիլը, նոյն բանը կ'ըսէ նաեւ իր մասին. «Et moi veule, alangui, obstiné, ballottant des mornes pensées, moi aussi j'étais de trop... de trop pour l'éternité...»։

(**) Ամերիկա ճամբուած գոյապաշտ հատորները բոլոր ճարտարարուեստներէն աւելի շահ մը կ'ապահովեն Ֆրանսական կառավարութեան։

digitised by A.R.A.R.@

Սերմնային կամ սաղմնային աշխարհի մը մէջ ենք կարծէք։ Սարթրին նպատակը մեզի հասկցնել չէ, թէ մարդերն ու ծառերը կը պատկանին միեւնոյն նիւթին։ Այլ ըսել, թէ ահաւոր է այն, ինչ որ կը մնայ անգամ մը, որ մոռնանք կազմուած անձնականութիւնները, այնպէս, ինչպէս կարելի է երեւակայել երազային վիճակի մը մէջ։ Գոյութիւնը նողկալի է այդ աւելորդ անհատականութիւններուն եւին, սկսեալ իր ծագումէն։ Նողկալի՝ նաեւ երեխան, որ դուրս կու գայ մօրը արգանդէն։ Նողկալի՝ սէրը, որ պարտութիւն մըն է միշտ։ Ցուսահատական են մեր յարաբերութիւնները մարդոց հետ։ Գեղեցկութիւն չկայ, յոյս չկայ ոչ մէկ կողմ։

Սարթր այս մեծ յուսահատութիւններէն մեկնելով է, որ կը ձգտի յոյսին։ Ըլլալէ ետք ոչնչապաշտ մը, կը փորձէ եկեղեցի մը կերտել։ Ու կը խորհի, թէ մարդը ինքզինք յուսահատ, աւելորդ, անիմաստ, նողկալի զգալէ ետքն է միայն, որ կրնայ փրկուիլ ներքին եւ արտաքին ճնշումներէն, հերոսանալ եւ աստուածանալ։ Անհրաժեշտ կը դառնան հետեւաբար այդ յուսահատութիւնն ու նողկանքը։ Պէտք է ճանչնալ զանոնք եւ, փրկուելով պատրանքներէն, դառնալ ազատ՝ պայծառ գիտակցութեան մէջ։

Մինչեւ հոս՝ պիտի խորհիք, քայլ մը առաջ չենք անցած ինքզինք որբի հաւասար դասող քրիստոնեայէն եւ քրիստոնէութենէն, որ «ordonne à l'homme de reconnaître qu'il est vil, et même abominable, et lui ordonne de se vouloir semblable à Dieu» (Pascal, Pensées 103)։ Կամ՝ il faut des mouvements de bassesse, pour aller à la grandeur»։

Անշուշտ, եւ կը խորհինք, թէ «Նողկանք»ին հերոսը նման է միստիքներուն։ Անհատականութիւնը աւելորդ եւ մակերեսային չէ՞ նաեւ քրիստոնէութեան համար։ Սարթր Փասքալէն տարբեր բան չ'ըսեր, բառերն են, որ փոխուած են միայն։ Փասքալ fumu, հրէշային շփոթանք կ'ըսէ աշխարհին։ Սարթր նողկալի եւ անհեթեթ կը գտնէ զայն։ Իր ստեղծած մարդուն մէջ կը տեսնենք նաեւ Փասքալի մատնանշած երկու վտանգները — յուսահատութիւնն ու դոռոզութիւնը։ Բայց դիտենք, թէ Սարթր ինչով կը բաժնուի քրիստոնեայ գոյապաշտութենէն, որ շատ աւելի մօտ է Փասքալին։

Մինչ քրիստոնէական գոյապաշտութիւնը(*) կը խորհի մահէն անդին գտնել մեր անհեթեթ կեանքին լուծումը, սարթրիզմը, մերժելով երկնային ուժերու գոյութիւնն ու ազդեցութիւնը մեր վրայ, լքուած կը գտնէ մարդը, դատապարտուած անհեթեթ գոյութիւն մը ապրելու եւ անհետանալու։ Առաջինը, ուրեմն, կ'ընդունի հոգիի մը գոյութիւնը մեր մէջ եւ իմաստ մը կու տայ ի վերջոյ մեր կեանքին, քանի որ յարաբերութեան մէջ ենք երկնային ուժերուն հետ եւ մեր փրկութեան կը ձգտինք։ Սարթր, ընդհանրապէս, կը յայտարարէ, թէ մեր խելքը չի հասնիր կեանքէն անդին եղածին եւ լաւ է զբաղինք մեր գոյութեամբ միայն։ Ու յոռետես է ան մինչեւ վերջը, հոն իսկ, երբ ազատութեան մասին կը խօսի։ Ցիչենք իր նշանաւոր խօսքը. «Faire et en faisant se faire et n'être rien que ce qu'il s'est fait»։ Մարդը ստիպուած է ապրիլ, բան մը ընել եւ ընելով այդ բանը՝ ան կը կազմէ ինքզինք եւ ուրիշ բան չ'ըլլար, եթէ ոչ այն, ինչ որ ըրած է ինքզինք։ Այսինքն՝ մարդը, որ անձնականութիւն մը կը դառնայ ապրելով եւ մաքառելով, ազատ է միշտ այս կամ այն ճամբան առնելու ընտրութեան մէջ, այս կամ այն ըլլալու, եւ կ'ըլլայ այն միայն, ինչ որ ուզած է ըլլալ եւ չեղած բան մը կը ձգէ իր հետեւ։ Սարթր այս լինելութեան կարելիութիւնը կը բացատրէ անով, որ մարդը,

(*) Այս ճիւղին ծանօթ զրկավարն է Կապրիէլ Մարսէլ։

digitised by A.R.A.R.@

տարբեր բոլոր էակներէն՝ էկզիստանս մը է Էսանս մը ըլլալէ առաջ։ Այդ գոյութեան շնորհիւ է, որ կը կազմուի իր էութիւնը, որուն մասին ո՛չ ինք գաղափար ունի, երբ աշխարհ կու գայ, ոչ ալ ուրիշները։ Լինելութեան մէջ է այդ էութիւնը տակաւին կեանքի ընթացքին։ Եւ որոշ կարծիք մը չենք կրնար յայտնել հետեւաբար մարդու մը մասին՝ մինչեւ մեր մահը։

Սարթրի վէպերուն ու թատերգութիւններուն մէջ կը տեսնենք այս յուսահատութիւնն ու նողկանքը, ըմբոստութիւնը կեանքի պայմաններուն դէմ, կը գրէ Կ. Փիքոն(**), բայց բացակայ է ազատութիւնը։ Չենք տեսներ այդ ամբողջական մարդը։ Հերոսները, որ տեսակ մը գերմարդ ըլլալ կ'ուզեն, յիշեցնելով Նիցչէն, մեղագրելի են իրենց բռնութեամբ, անգթութեամբ, շարին ու բարին դէմ ունեցած անտարբերութեամբ, անասնային եւ ոճրային բնազդներով։ Անոնք ո՛չ միայն ազատ չեն, այլեւ կը դառնուին պարապին առջեւ, կը նողկան իրարմէ, իրենց անձէն, միայնակ են իրենց մէջ, մարդկային ընկերութեան «դժոխք»ին մէջ եւ կը նմանին անոր, որ կը գտնուի «խմելու հարկադրանքի տակ՝ առանց ծարաւ զգալու»։ (Արդարեւ, անիմաստ է ամէն շարժում, երբ անիմաստ է ամէն ինչ)։ Թափառական են անոնք, ծփուն, անձեւ, չունին զիրենք փրկող խանդավառութիւն մը, ասուածներ ըլլալ կ'ուզեն եւ չեն ձգեր այդ ապաւորութիւնը։ Չենք գիտեր, թէ ինչ յոյսով կ'ուզեն զօրաւոր երեւալ։ Ու, Կ. Փիքոն կ'եզրակացնէ. «Սարթր այս թատերգութիւններով, ճերաշխարհ մըն է միայն, որ կու տայ, շատ յստակ իրեն համար, տպաւորիչ, բայց տեսիլ մը միայն եւ ոչ թէ առաջնորդութիւն»։

Ուրիշ բան չէին կրնար ըլլալ արդէն այդ հերոսները։

Սարթր, ուրիշ էջերու մէջ, կանգ առած է անձնականութեան եղերական հարցին առջեւ, համակարծիք Փոլ Վալէրիի հետ։ Բացակայ ենք այն մարդուն մէջ, զոր կ'ըլլանք։ Այսինքն՝ մենք չենք այնքան առեն, որ կը ձգտինք մենք ըլլալ եւ լինելութեան որոշ պատկեր մը ունինք մեր առջեւ։ Օրինակ մը։ Գրականութիւն ընողը կը խորհի գրող դառնալ։ Գրողի իր պատկերն է, զոր կ'ուզէ իրագործել։ Կ'աշխատի ըլլալ, բայց անանցանելի անջրպետ մը կայ միշտ իր անձին եւ ըլլալիք գրողին միջեւ, որ ենթակայ է արտաքին պայմաններու։ Այդ գրողը հետեւաբար ինքզինքին կը նմանի այն չափով միայն, որքան Համլէթի դերը կատարող դերասանը՝ Համլէթին։

Որոշ է, թէ նման անձնականութիւն մը թէ՛ գոյութիւն ունի եւ թէ գոյութիւն չունի։ Ներկայ է եւ բացակայ։ «Ո՞վ եմք, ի վերջոյ, — կ'ըսէ Սարթր, — երբ պարտադրուած եմք կերտել մեզ այնպէս, ինչպէս որ եմք». «si nous sommes sur le mode d'être du devoir être ce que nous sommes»։

Սարթրի հակառակորդներէն ոմանք կը մերժեն գրականութիւն իսկ ըսել այդ թատերգութիւններուն։ Անոնց մէջ կը տեսնեն ախտադին հոգեվիճակներու փառաբանութիւն մը լոկ, գռեհիկ ու սրիկայ բառերով։ «Եթէ այս սրիկայութիւն է, — կ'ըսեն ոմանք, — նորութիւն չէ եւ պէտք չունինք այլեւս անոր»։

Արդարացի կը թուին մեզի այս կարծիքները, վերջինը մանաւանդ ոչ մէկ նորութիւն։ Նկատելի է, ամէնէն առաջ՝ նմանութիւն մը այս գոյապաշտութեան եւ գերիրապաշտութեան միջեւ։ Հակառակ իր գաղափարական, վիպային, գերբնական բնոյթին, գերիրապաշտութիւնը աղերս մը ունի շատ իրապաշտ գոյապաշտութեան հետ, որ, ինչպէս տեսանք, հեռու չէ գաղա-

(**) Panorama de la littérature moderne, 1940.

digitised by A.R.A.R.@

փարական ըլլալէ նաեւ։ Գերիրապաշտութիւնը մերժելով հանդերձ իրականութիւնը, դիմելով երեւակայութեան, ենթադիտակցութեան, հիպնոթիզմին նոյնիսկ, կը հետապնդէր իրականութիւնը։ Դէմ էր այն բոլորին, որ կեղծ կեանք եւ կեղծ անձնականութիւն մը կը պարտադրեն մարդուն — կրօնք, հայրենասիրութիւն(*), ընտանիք, գիտութիւն եւ գրականութիւն։ Ե՛ւ Ֆրէօյտով, ե՛ւ Մարքսով, սեռային ազատութեամբ՝ ծնունդ կու տար շատ իրապաշտ արուեստի մը, որ գերիրական էր միայն ձեւով, շատ հին ըմբռնում մը՝ նկարչութեան աշխարհին մէջ։ Ֆրանսական բանաստեղծութեան եւ նկարչութեան մեծ մասը ենթարկուած կ'երեւայ դեռ այսօր այս շարժումին։ Զգալի է ան գոյապաշտութեան մէջ նաեւ։ Ասիկա, իր կարգին, ուզելով ըլլալ աշխարհիկ մարդուն գործնական փիլիսոփայութիւնը, աշխարհէն հեռանալու միջոցներ ցոյց կու տայ անոր։ Ու կը նմանի գերիրապաշտներուն դարձեալ ասոնց սիրելի Լօթրէամոնը յիշեցնելով, երբ Մարքը կ'ըսէ, թէ կու տայ բոլոր տգեղութիւնները, որպէսզի մարդիկ գեղեցկութեան ձգտին։

Ցուսահատութենէն մեկնող այս երկու շարժումներուն տարբերութիւնը հոն է, որ գերիրապաշտութիւնը դէմ էր բանականութեան եւ գոյապաշտութիւնը, ընդհակառակն, գիտակցութեան կը դիմէ։ Բայց յարաբերական է այս տարբերութիւնն իսկ, ինչպէս պիտի տեսնենք աւելի անդին։ Կայ ուրիշ պարագայ մը եւս, նոյնքան յարաբերական։ Գերիրապաշտութիւնը կ'երազէր կործանուած տեսնել Արեւմուտքը Սթիլլայի մը ձիրն սմբակներուն տակ։ Գոյապաշտութիւնը խարխլած այդ Արեւմուտքն է, որ կ'ուզէ ոտքի կեցնել։

Գերիրապաշտութենէն եռք, Փասքալէն յետոյ, գոյապաշտութեան մէջ կը ճանչնանք Ֆրանսական մտքի ցայտուն ներկայացուցիչները՝ Տեքարթէն Վալէրի, Պերնանոսէն Ժիտ, Ժիւլիէն Կրինէն մինչեւ Մալրո։ Այս վերջինը կ'ըսէր արդէն տարիներ առաջ. «Մահ կայ, կան հոգեկան մեռնուիլը, ընտանացումն ու վախը, որոնց կը յանձնուինք՝ չկարենալով ըմբռնել մեր ծագումը։ Ընկնուած եմք ժամանակին եւ տարածութեան անհունին, ոչնչութեան եւ անհերթերթութեան առջեւ»։ Անարէ Ժիտ, տեսանք, նախատական էր այս շարժումին հանդէպ։ Բայց իր անցեալը յիշողը գիտէ, թէ ինքն ալ դէմ էր պատրանքին եւ հակասական կը գտնէր ամէն ինչ, կը պահանջէր ինքնութեան կատարեալ ազատութիւնն ու ազատ արտայայտութիւնը գրականութեան մէջ, ըլլալով իր կարգին գայթակղալից հեղինակ մը։ Կ'ըսէր վերջապէս, թէ լաւ դգացումները լաւ գրականութիւն չեն տար։ Բայց շատ ըմբռնելի է, երբ, ծերութեան մէջ, կը յայտարարէ, թէ պէտք է երթալ գեղեցկութեան, բարութեան եւ արտայայտութեան եռաւէն, գիտնալով հանդերձ, թէ կը պակսին անոնք։

«Անտարակոյս ոչինչ նոր է աշխարհի վրայ», կ'ըսէ գոյապաշտամիտ Անարէ Մորուան՝ իր գիրքերէն մէկուն հերոսին քերնով։ «Այֆրէտ տը Վինիյին Գամիւի նախահայրն է»։ Աշխարհը չէ, որ անհեթեթ է Գամիւի համար, այլ այն՝ զոր կը ստանանք մեր մտածումին եւ այդ աշխարհին բաղդատութենէն։ Հասկնալ կ'ուզենք։ Իսկ աշխարհը անհասկնալի է։ Այս բոլորը կը տեսնենք Ալֆրէտ տը Վինիյի մէջ ունայնութիւնը կեանքին, յուսահատութիւնը, ինքնալքումը...

Նոր չեն նաեւ գոյապաշտութեան սեռային շատ բաց արտայայտու-

(*) Գոյապաշտութիւնը նոյնպէս կը հայհոյէ (Les Sursis) հայրենիքին։

digitised by A.R.A.R.@

թիւնները։ Անուններ՝ Սելին, Ժէյմս Ճոյս, Անթոնէն Արթօ, Արթըր Միլլըր, «Տիկին Շաք-բրիէյի սիրահարը» հատորին հեղինակը, եւայլն։

Քառորդ դարէ ի վեր աշխարհը, մասնաւորապէս Ֆրանսան դէմ կ'ելլայ գեղեցիկ արտայայտութիւններու։ Գրողները կը խորհին, թէ գրականութենէն աւելի կարեւոր է իրականութիւնը տալ ինչպէս որ է։ Ու կարգ մը տաղանդաւորներու կարգին կան նաեւ անոնք, որ այդ միջոցին կը դիմեն, արագ յաջողութիւն գտնելու համար։ Եւ «Nous en avons assez», կը պոռայ Լաս Վերկնաս, «De ces sentiers excrémentiels ou mieux vaut ne s'aventurer que sur des échasses»... «Ֆ···ի փիլիսոփայութիւնն է», կ'ըսէր Լէոն Փոլ Ֆարկ։ «L'existentialisme, c'est l'excrémentialisme», կը գրէ ուրիշ մը՝ Իվ Կանտոն։

Անտարակոյս, յառաջացած, ինքզինք ապառած քաղաքակրթութեան մը ճակատագիրն է։ «Որը մտածեմ, հետեւաբար կը բոյժայուիմ», կը յայտարարէ այսօր այդ քաղաքակրթութիւնը։ «Ինչ որ շարունակ մարդկային արժանիքի իբրեւ փաստ ծառայած է (մտածումը), գոյաշտները կը ներկայացնեն (զայն) իբրեւ դժբախտութեան պատճառը։ Մտածումը պտուղին մէջի որդն է(*)։

Այդպէս է նաեւ ժողովուրդը։ Պատերազմներէն ու գեղեցիկ խոստումներէն յոգնած, առաջնորդներէն հիասթափ այդ ժողովուրդը փիլիսոփայութեան վերածած է անփութութիւնը։ Բացուած են աչքերը։ Եւ լոյսը ահաւոր բան մըն է, երբ կը յանգի անկրթութեան, անպատկառութեան եւ անպարկեշտութեան, որ յուսահատութենէն կը բխին։ Զարգացած, արամիտ անձանձներ կը գտնենք մեր դէմ, նիւթապաշտ ոչնչապաշտներ...

Ու Սարթր, որ մեր դարուն տղան է, 1905ի ծնունդ, իր կարգին, պիտի զգար այդ լոյսին բերած ողբերգութիւնը։ Կ'ապրինք օրերու մէջ, ուր չենք կրնար հաւատալ մարդկային յառաջդիմութեան։ Գիտութիւնը սոսկում կը պատճառէ։ Մարդերը բնութենէն չէ, որ կը վախնան այլեւս, այլ գիւտերէն։ Սարթր ստիպուած էր Տէքարթին դէմ ելլել, քանի որ Էկզիսթանսը կը դնէ Էսսանսէն առաջ։ Բայց մեր դարն է, որ կը մղէ զինք մտածումին չարիքը մատնանշելու։

Եւ սակայն կը դիմէ գիտակցութեան։ «Բաց աչքերով քալենք, — կ'ըսէ, — տեսնենք ամէն բան, տապալենք պատրանքները, հասնինք պայծառ գիտակցութեան։ Այս է յոյսին եւ ազատութեան ճամբան»։

Ինչպէ՞ս բացատրել այս հակասանքը։ Սարթր տղան է մեր դարուն, որ մտածել չ'ուզեր եւ սակայն բոլոր դարերէն աւելի ուժ կու տայ խելքին։ Գրականութեան պատմագիրը կ'ըսէ, թէ երբեք այսքան մտածում եւ մտահոգութիւն չէ եղած ֆրանսական գրականութեան մէջ, ուր խմացական եւ քաղաքական գանգան հոսանքներ ալեկոծութիւն մը կը ստեղծեն։ Սարթր արմատանդն է այս ալիկոծութեան։ Բայց համամարդկային տրամն է նաեւ այդ հակասանքը։ Մարդիկ հարցուցած են միշտ, թէ պէ՞տք է մտածել կամ ոչ։ Ո՞րն է փրկարարը։ Ու ներկայ է այս տրամը գոյապաշտութեան մէջ։ Սարթր ինքն իսկ, փառաբանելով պայծառ գիտակցութիւնը, կը սահմանափակէ զայն ու տեսակ մը կուրութիւն կը թելադրէ մեզի։ Տեսանք, թէ իր գիտակցութիւնը յուսահատ է երկինքը հասկնալէ, կը գոհանայ մարդերով։ Տեսանք նաեւ, որ խելքի պտոյտ կ'ունենայ, եթէ բացատրէ անկրպետը, որ կայ մեր անձին եւ մեր լինելութեան մէջեւ։ Սարթրի գիտակցութիւնը ինք-

(*) Տ· Ռոպս, «Ակօս», Զ· տարի, թիւ 4։

digitised by A.R.A.R.@

ղինք կրծելով կը մեծնայ։ Իրականին մէջ չենք գիտեր, թէ կը մեծնա՞յ կամ կը պզտիկնայ։ Շղթայուած Պրոմէթէոսն է։ Քամիւ խոստովանեցաւ այս դժբախտութիւնը, այսինքն՝ բանականութեան տրամը, քաղաքակրթութիւններու վերելքն ու անկումը՝ դիմելով Սիսիֆի առասպելին։

Ու իրականութիւն է։ Գիտակցութիւնը իր անբաւարարութիւնը խոստովանած է կրօնքներուն եւ, վերջերս՝ Պերկսոնի եւ Այնշթայնի բերնով։ Սարթր դիտէ, թէ այսպէս է։ Ու մարդոց առջեւ է միայն, որ ան կը յանձնարարէ բաց աչքերով քալել։ Բայց մարդոց մէջ իսկ այդ գիտակցութիւնը որքա՞ն բաւարար ու փրկարար է։ Ինք կու տայ մեր վարանումին պատճառը դարձեալ. «Մտածումն է, որ կը քայքայէ մեզ»։

Արդարեւ, յոյսի եւ փրկութեան ճամբայ է գիտակցութիւնը։ Մեր անձին տէր դառնալով, աշխարհը ճանչնալով է, որ կրնանք ձերբազատուիլ մեր ներքին եւ արտաքին ճնշումներէն։ Եւ յուսահատութիւնն է անկասկած գիտակցութեան խարիսխը։ Բայց գիտակցութիւն եւ յուսահատութիւն կը քայքայեն նաեւ մարդը, զայն կը դարձնեն տկար, ամուլ, երկչոտ, ոգէտներուն եւ հոսհոսներուն առջեւ։

Ձա՞փ մը կայ միթէ, ուրկէ անդին պէտք չէ անցնիլ՝ չկորսնցնելու համար մեր ինքնավստահութիւնն ու խանդավառութիւնը, քաջութիւնն ու յանդգնութիւնը, առաքինութիւններ, որ կը պահեն իրենց ուժը՝ սահմանափակ մտքով խոպան հոգիներուն եւ կարգ մը զարգացածներուն մէջ։

Շատ աւելի ճիշդ է սակայն ըսել, թէ մարդուն նկարագրէն կախում ունի գիտակցութեան այդ դրական կամ ժխտական արդիւնքը։ Կարելի չէ փրկութիւն մը գտնել անոր դիմելով, երբ չունինք համապատասխան խառնուածք մը։ Այսպէս նաեւ չենք կրնար օգտուիլ քրիստոնէութենէն՝ աղօթելով հանդերձ, ոչ ալ եպիսկուրեան, չնական կամ այլ բաներ ըլլալ, երբ հակառակ զանոնք ընդունող մեր ուղղին, մեր նկարագիրը կը մնայ տարբեր։ Որովհետեւ մեր գիտակցութիւնը երբեք չի կրնար ձերբազատուիլ բոլորովին մեր ներաշխարհին խաւերէն, աներեւոյթ, ժառանգական եւ ստացական տարբերուն զօրութենէն։ Ժիւլիէն Կրին եւ Քաֆքա կ'ըսեն մեզի, թէ տէրը չենք շատ անգամ մեր արարքներուն։ Հակասական եւ բարդ էակ մըն է մարդը։

Այս էր նաեւ Ֆաուսթին ըսածը։ Կը սկսի սարսռիմին պէս, խօսքը ուղղելով մարդուն.

Qu'a-t-il besoin de s'égarer dans l'éternité ?
Qu'il suive donc sa rout le long de la terrestre journée,
Et si des fantômes surgissent, qu'il passe son chemin...

Բայց կարելի՞ է։

Maintenant, l'air est si rempli de ces spectres,
Que nul ne sait comment les éviter...

Մեֆիստոֆէլը անբաժան կ'երեւայ մեզի։ Անհրաժեշտ է ան՝ ազատութեան, գեղեցկութեան եւ արդարութեան հասնելու համար։ Եւ համաձայն Պերնանոսին, գիտակցութիւնը, մաքրելէ ետք մեզ մեր կեղծիքներէն, մեզ դարձնելէ յետոյ մեր տէրը, կը դառնայ սատանայ մը մեր մէջ, ցոյց տալով մեզի անհրաժեշտութիւնը կեղծիքին՝ իրրեւ ապրելու եւ մեծնալու անհրաժեշտ ազդակ։ Սրբութեան կը հասնինք, երբ դժոխքին մէջ կ'իյնանք։ Ու յուսահատութիւնը անբաժնելի Péché originalն է քրիստոնեայ գոյապաշտին համար։ Անբաժնելի եւ աններելի։

Սարթր, ճարտար տեսաբան՝ նկատի առած է գիտակցութեան այս եր-

digitised by A.R.A.R.@

կու թեւերը։ Գիտակցիլ եւ յուսահատիլ։ Վհատիլ եւ գիտակցութեան հասնիլ։ Հասկնալ, թէ գիտակցութիւնը մեզ կրծող որդն է։ Գայլաբիլ անոր դէմ՝ անով։

Բայց ամէն մարդու չի դար այս ճամբան։ Եւ իր ուզած «մարդ»ը չեն անոնք, որ կու գան այդ ճամբով։ Այս պայմաններուն մէջ, Սարթրին մարդը անձկոտ կրնայ ըլլալ միայն։ Եւ անշուշտ, հոս ալ, Սարթր գտած է ըսելիքը։ Կը դատապարտէ յոյսը իբրեւ թմրեցուցիչ, թոյն, տկարութիւն, բայց անհրաժեշտ կը գտնէ անձկութիւնը, յառաջդիմութեան իբրեւ ազդակ։ Ինչպէ՞ս կրնաք խաղաղ ըլլալ, կ'ըսէ, երբ կը ձգտիք մեզ եւ ուրիշները կերտել»։ «Ներանութեան փիլիսոփայութիւն մը չէ, կը գրէ իր գոյապաշտութեան համար, այլ ճիգի, պայքարի եւ համերաշխութեան դրական եւ հիւմանիստ փիլիսոփայութիւն մը»։

Բայց յանուն ինչի՞ այն ատեն այս բոլորը, երբ ազատութիւն չկայ, երանութիւն չկայ, ոչ ալ ուրախութիւն եւ գութ՝ եւ հոգիները կը մնան անձկոտ, մինակ, աւելորդ զգալով իրենք զիրենք, աւելորդ ճիգեր թափելով ու պզտիկնալով, գոհկանալով՝ մեծնալու տեղ։

Այս է մարդկային նկարագիրը անկասկած։ Տրամ մըն է։ Բայց տրամին վրայ տրամ մըն է նաեւ անհեթեթութեան սէրը, երբ այդ սէրը մասնաւորապէս կը պանծացնէ գոհկութիւնները։ Մարդը կեղտերը չսիրելով է, որ կրնայ արդարանալ մասամբ։

Սարթր փիլիսոփայութեան աշխարհ մը տակնուվրայ բրած է՝ հասնելու համար ժխտական արդիւնքի մը։ Եւ յայտնելով կեանքին անհեթեթութիւնը՝ անհեթեթութեան մէջ կ'ինչայ նաեւ իր փիլիսոփայութիւնը։ Ժ. Տելհոմ կ'ըսէ, թէ կարելի չէ գոյութենէն դուրս գալ՝ զայն դատելու համար։ Գոյապաշտութիւնը ուրեմն չի կրնար գիտակցութիւն եւ դատողութիւն ըլլալ, առանց ինքզինք քանդելու։ Եթէ անհեթեթ է կեանքը, անհեթեթ է նաեւ մարդկային գիտակցութիւնը եւ իրական գոյապաշտը այն է, որ ոչինչ կը գրէ այս մասին։ Իսկ Սարթր կը գրէ ու կը ճաշէ, կը պառկի, կը ծխէ բոլորիս պէս։ Գոյապաշտ չէ։

Այս է։ Անգամ մըն ալ կը համոզուինք, թէ քանիերորդ դարու փիլիսոփան ալ չի կրնար ընդունիլ լուծում մը տալ կեանքին, չեշտելէ եռք եղած վարդապետութիւններուն անբաւարարութիւնը։ Եւ հայ ընթերցողը իրաւունք ունի մերժելու իմացական նման երբութիւնները, երբ անոնք, փրկութեան տեղ, քայքայում առաջ կը բերեն։ Հայը, գիտնալով հանդերձ կեանքին ունայնութիւնը, կը սիրէ զայն եւ կ'ապրի անսպառ յոյսի մը շնորհիւ, ինչ փոյթ, թէ աչքերը շատ «բաց» չեն։ Գտիկութիւններ կան, որ մեծութիւն են, մաքրութիւն նաեւ՝ ինչպէս ցոյց կու տայ մեր գրականութիւնը։ Գոյապաշտութիւնը շարժում մըն է, որ արձագանգ չի կրնար գտնել մեր մէջ, ըլլալով աւելի վնասակար, քան թէ օգտակար։ Հայը շատ աւելի համաձայն է անոնց հետ, որ կ'ըսեն, թէ բարութեան, արդարութեան եւ գեղեցկութեան եռեւէն պէտք է երթալ, թէեւ գոյութիւն չունին անոնք։ Ու բոլոր ժողովուրդներէն աւելի գիտէ, թէ գոյութիւն չունին անոնք...։ Գոյապաշտութիւնը շարժում մըն է, որ չի կրնար հող գտնել նաեւ իր երկրին մէջ։ Անցնելու վրայ է արդէն։ «Կեանքը գեղեցիկ է», կ'ըսէ նաեւ Ֆրանսացին։

Աւելորդ դժբախտութիւն մըն է ռարթրիզմը նաւուն վրայ, որ կ'երթայ դէպի անծանօթը՝ իր անթիւ դժբախտութիւններով։

(«Ակօս», 1951, թիւ 3–4)

Ն. ՍԱՐԱՖԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԾԵՐԷՆ

ԿՐԱՀԱՄ ԿՐԻՆ ԵՒ ԻՐ "ՁՕՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՓԱՌԸ"

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՑԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Կրահամ Կրին ծնած է 1904ին։ Իր ուսումը ստացած է Անգլիոյ Գէրքհամոթըր գպրոցին մէջ, ուր իր հայրը կը պաշտօնավարէր իբրեւ տնօրէն։ Անկէ ետք կը յաճախէ եւ կ'աւարտէ Գալլիբլ գոլէճը։

Գրական ասպարէզ կը մտնէ բանաստեղծութիւն գրելով։ Իբրեւ փոխ խմբագիր կը պաշտօնավարէ «Տնը Թայմզ»ի մէջ։

Գրական իր համբաւը կը կերտէ իր չորրորդ վէպով՝ «Սթամպուլ Թրէյնն»։

1926ին, կ'ընդունի կաթոլիկութիւնը։

1935ին, Լիսպերիոյ մէջ կատարած իր ճամբորդութիւնը կը նկարագրէ գեղեցիկ եւ ուշագրաւ էջերով, «Ճամբորդութիւն առանց քարտէսի»։ *Այս շրջապտոյտէն վերադարձին*, «Սփէքթէյթըր» *թերթին կողմէ կը հրաւիրուի վարելու ֆիլմերու քննադատի պաշտօնը։*

1938ին, կ'ուզարկուի Մեքսիքա, *կը-բօնական հալածանքներուն մասին տեղեկագիր մը պատրաստելու պաշտօնով։ Համայնավարներուն կողմէ ի գործ դրուած այս հալածանքներուն ականատես վկայի հանգամանքով՝ ան կը գրէ երկու կարեւոր գործեր՝* «Ապօրէն ճամբաներ» *եւ* «Ձօրութիւնն ու փառքը»։

1938ին, *կը հրատարակէ* «Պրայթըն Ռոք»։

1940ին, *կը նշանակուի* «Սփէքթէյթըր» *թերթին գրական բաժնի խմբագիր։*

Տարի մը ետք, արտաքին գործոց նախարարութեան մէջ պաշտօնի կոչուելով՝ կ'երթայ Սիերա Լիոնէ, ուր եւ կը մնայ 1941–43 *տարեշրջաններուն։ Անկէ ներշնչուած՝ կը գրէ* «Նիւթին հոգին», *որուն կը յաջորդեն այլ վէպեր, ինչպէս* «Աբարթին վերջաւորութիւնը», «Հանդարտ ամերիկացին», «Մեր մարդը Հաւանայի մէջ», «Հրկիզեալ սկիզբը»։ *Իր վերջին վէպն է* «Կատակերգակները»։

1967ին, *կը հրատարակէ պատմը-*

digitised by A.R.A.R.@

ւածքներու հատոր մը՝ «Կրնա՞նք մեր ամուսինը փոխ առնել» խորագրով։

Այժմ կը զբաղի մանկական գրքոյկներու հրատարակութիւններով եւ դասախօսական աշխատանքներով։

***

Անգլիացի այս մեծ վիպասանը ա՛չ միայն գրական աշխարհի մէջ մեծութիւն մըն է իր գրական-գեղարուեստական եւ հոգեբանական նուաճումներով, այլեւ՝ 20դ դարու քաղաքակրթութեան մէջ, դասական ստեղծագործութեամբ կրօնական շունչը հարուածային հաւատքով մը կանգուն պահող քրիստոնեայ մը։

Բողոքական էր մինչեւ իր մտաւոր հասունութիւնը, երբ յանկարծ իր հոժողումները զինք կ՚առաջնորդեն կաթոլիկ հաւատքին։ Կրօնական աւելի մտաւորական դարձ մըն էր ուրեմն այս հաւատափոխութիւնը, դարձ մը՝ ներշընչուած կաթոլիկ եկեղեցւոյ կարգապահութենէն եւ անոր մէջ բնական ուժի մը ներկայութենէն։

Մեծ վիպասանի գրականութեան մէջ կրկնուող թեման պարզամտուած ու ժողովրդականացած բնազանցութիւնն է։ Հալածա՛խը։ Գրեթէ իր բոլոր վէպերուն մէջ, գործողութիւններուն մէկ կարեւոր մասը տեղի կ՚ունենայ հեւապընդումներու ճամբով։ Միշտ հեւապնդում։ Գողեր, ոճրագործներ եւ քաղաքական յանցաւորներ, դաւաճաններ, որոնք բոլորն ալ կը հետապնդուին ոստիկանութեան կողմէ։ Որքին մէջ, ընկերա-բարոյական այս դրսեւորումը ուրիշ բան չէ, եթէ ոչ հոգեբանական-կրօնական զգացումներու առարկայացումը։ Հալածանքը տեղի կ՚ունենայ մեր ներքին աշխարհին մէջ, մեր միտքն է, որ կը հալածուի մեր հոգիէն. հոգին, մեր ներքին եսը ներկայացնող զգայական համադրումի գումարը՝ կը պայքարի, կը հալածուի, կը դատապարտուի Աստուծոյ անխուսափելի գաղափարէն, անոր անընդունելի կամ կասկածելի ներկայութենէն, անոր ամբողջական եւ անառարկելի դերակայութենէն։

Սակայն հալածանքի երկար այս շրջանն շատ յաճախ կը պսակուի Աստուծոյ յաղթանակով։ Այս յաղթանակը եղերական է, երբ կը կոչուի միայն մահացումի ենթակային համար, բայց անմահութիւն է անիկա, երբ մարդ էակը իր անկախութենէն զիջելով իր սկիզբն ու վախճանը կը լուծէ հաւատքական եսին մէջ, որուն ճակատագիրը Աստուծոյ էութեամբ պայմանաւորուած է։

Այնքան սահուռ գրիչով մը կը պատկերէ հչմարտութիւնները, որ մեզի կը բերէ խտացումը քանթեան բարոյականութեան, որուն համար ընդունելի չէ այն բարիքը, զոր ենթական կը կատարէ առանց պարտականութեան գիտակցութեան, կը կատարէ անձնական եսին բաւարարութիւն տալով։ Կրինի համար եւս անընդունելի է Աստուծոյ հանդէպ այն սէրը, որ կը ժայթքի մեր անձնականութենէն։ Ահա թէ ինչու նոյնիսկ կաթոլիկներ կը սահմռկին «մարմնական գեղեցկութիւնն ու սարսափը» ներկայացնող այս յեղափոխականէն։

Մարդկութեան շարութիւնը խարանող, ժիսի «նեղ դուռի» փրկարար փիլիսոփայութեան միայն հաւատացող վիպասանը միշտ կը մղէ մարդը իրականացնելու իր ազատութիւնը, չափուելու եւ պայքարելու սատանային դէմ եւ փաստելու գործնական օրինակով անոր անկարողութիւնը։ Այս պայքարին մէջ զօրաւոր կերպով կը գործէ սատանան — բռնութիւնը։ Այստեղ, Կրին անգամ մը եւս կը գերազանցէ ինքզինք՝ արուեստագէտի կախարդական գրիչով մը ներկայացնելով բոլոր այն բռնութիւնները, որոնք մարդս կը հեռացնեն Աստուծոյ վախէն։

Անգլիացի աւանդապաշտ ժողովուրդին այս տաղանդաւոր զաւակը իր նոր հաւատքին ապացոյցը պիտի տար առաջին անգամ գրելով «Պրայթըն Ռոֆ» վէպ-

digitised by A.R.A.R.@

պը։ Նոյն տարուան (1938) գարնան Մեքսիքա հանդիպելու պարտականութիւն ստանձնած ըլլալով՝ կը ծնէր միջազգային գրականութեան զօրաւորագոյն վէպերէն մէկը, որ համբարձական պարզ տպաւորութիւններէ անդին անցնող խոր վերլուծումն մըն է, պայքար մը՝ կրօնական եւ աշխարհիկ իշխանութիւններու միջեւ։ Այս վէպը կը կոչուի «Զօրութիւնն ու փառքը»։

Այս հատորը արուեստագէտի սքանչելի հաւատարմութեամբ մեզի կը փոխանցէ Մեքսիքայի մէջ հալածուող եկեղեցին, այն ահռելի պայքարն ու անպատում ոճիրները, որոնց զոհ կ'երթային եկեղեցւոյ պաշտօնեաներն ու հաւատացեալները։ Հակառակ այս բոլորին, ժողովուրդը կը շարունակէ զարմանալի ջերմեռանդութեամբ պաշտել Աստուած։

Կրահամ Կրինի այս գլուխ-գործոցը միաժամանակ դրական – վաւերագրական աշխատանք մըն է, ուր կաթոլիկ հեղինակը կարելի չափով կը ջանայ դէպքերու նկարագրութեանց եւ վերլուծումներու մէջ մնալ անկողմնակալ։

Այստեղ նաեւ մեզի կը տրուի պատասխանը ա՛յն հարցումին, թէ ինչո՞ւ լատին այս ժողովուրդը իր ամբողջ միութիւնը, գոյութեան ամբողջ իմաստը կրօնքի կերպով կապած է կրօնին, հակառակ այնքան մեղքերու։ «Այստեղ նշում է կեանքը, կապաշտութիւն է, զրկանք ու բռնութիւն է, բայց մարդիկ կ'ապրին կրօնքի շուրջը տակ — Աստուծոյ կամ սատանայի — մինչ անդին, Միացեալ Նահանգներու մէջ, թմրեցուցիչներու շտեմարաններ, ֆոֆա-ֆոլա, համպրկոր, շնորհազուրկ, դատարկ, ֆրամալի աշխարհ մը»։

«Զօրութիւնն ու փառքը», ինչպէս ըսինք, Կրինի գլուխ-գործոցն է, հրատարակուած՝ 1940ին։ Այնտեղ ներկայացուած են չարն ու բարին, ակարութիւնն ու հզօրութիւնը։ Բոլոր ընտրուած տիպարները գաղափարական եւ ընկերային որոշ դասակարգի մը մարմնաւորումներն են, իրենց մոլորութիւններով եւ քարոյականով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԹԵՄԱՆ

Միջազգային հռչակ վայելող այս վէպին առաջին մասով կը նկարագրուին այն գինուորները, որոնք կարմիր շապիկով յեղափոխականներ յորջորջուելով սարսափ կը ստեղծեն երկրին մէջ, գաղտնի ոստիկանութեան հսկողութեամբ ու քաջալերանքով։ Հետաքրքրական ձեւով մը տրուած են նոր վարչակարգի բիրտ ու բռնաւոր ղեկավարներու ապրումները, երբ անոնք իրենց մաքրագործումներու ընթացքին երբեմն կը մարդանան, կը յիշեն իրենց անցեալը, ա՛յն վարժարանը, ուր իրենց մանկութիւնը անցուցած են, բայց որ այսօր վերածուած է բռնաւորներու կիզբոնի մը։

Բռնապետական վարչակարգի ողբերգութիւնը այնտեղ եւս կը կրկնուի։ Ոստիկանական հետապնդում, ձերբակալութիւններ, մահանութիւն, դնդակահարում, տանջահար հարցաքննութիւններ։

Հոս եւս ընթերցողին հրամցուածը քէօսլէրեան, օրվէլեան եւ հէօքսլիեան գրական աշխարհներու մէջ ստեղծուած բռնապետական վարչակարգն է։

Սակայն բռնապետական վարչակարգերը նկարագրող բոլոր գրողներու մէջ Կրինն է, որ այնքան յաղթական ու պայծառ եզրակացութիւններու կը յանդի։ Մինչ բռնապետական կարգերու մէջ զորութիւնը հիմնուած է ատելութեան վրայ(1), վէպին գլխաւոր հերոս հայր Մոնթէզ խիստ կերպով դէմ կ'արտայայտուի այս գաղափարին. «Եթէ ուշադրութեամբ պատկերացնէք այր մարդ մը կամ կին մը, միայն գթութեան ու համակրութեան զգացում մը կրնաք ունենալ անոր նկատմամբ... եւ ասիկա յատկութիւն մըն է, որով՝ Աստուծոյ պատկերը կը փոխանցուի մարդոց։ Դիտեցէք անոնց աչքերը, բերանին ձեւը եւ արդէն անկարելի կ'ըլլայ ատել զանոնք։ Ատելութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ երեւակայութեան ձախողանքը»։

(1) Ջորջ Օրվէլ իր «1984» վէպին մէջ կ'ըսէ «Ատելութիւնը զօրութիւն է»։

digitised by A.R.A.R.@

Այդ ընկերութեան մէջ արգիլուած է խմիչքը։ Մահուան դատապարտուած են բոլոր այն կրօնաւորները, որոնք տակաւին կը յամառին իրենց պարտականութիւնը կատարել։ Գլխաւոր երկրորդ հերոսը տեղական սպան է, որուն ոստիկանական ամբողջ ապարանքը ի գործ դրուած է՝ գտնելու եւ դնդակահարելու համար վէպին գլխաւոր հերոս հայր Մոնթէզը։ Նոյն վարձատրութիւնը եւ ոստիկանական ճիգը ի գործ դրուած են ամերիկացի հռչակաւոր կանկսքը մը եւ Մոնթէզը գտնելու։

Վէպին հերոսներէն է նաեւ մեքսիքացի ժողովուրդը, խման, խաւերայ, բայց հաւատացեալ, կապուած իր սուրբերուն եւ քահանաներուն։ Անոր դէմ եւս գաղտնի ոստիկանութիւնը անխնայ պայքար ու հալածանք չղթայազերծած է։

Կայ նաեւ կարգաթող քահանայ հայր Ճոզէին տիպարը։ Հայր Ճոզէ ամբողջութեամբ ենթարկուելով վարչակարգի հրահանգներուն, կը հրաժարի քահանայութենէն, նոյնիսկ կը մերժէ ընթացք տալ աղաչող մօր մը խնդրանքին, երբ այս վերջինը իր մահացող մանկան համար միայն աղօթք մը կը խնդրէ։ Այս վախկոտ ու իր կեանքի բարօրութեան համար ապրող տիպարը հակադրուած է հայր Մոնթէզի։

Բ. մասին մէջ կը շարունակուի հեռապնդումը։ Հայր Մոնթէզի կողքին է ամբողջ ժողովուրդը, որ մահուան իսկ դնով ամէնուրեք կը պաշտպանէ ու թաքստոց կը հայթայթէ անոր։

Թման, ապօրինի զաւակի հայր, բայց իր կրօնական եւ քահանայական հաւատքին մէջ զօրաւոր, Աստուծոյ հանդէպ անսեղծամտի պաշտամունքով օժտուած, ժողովուրդին ծառայելու իր ուխտին մէջ հաւատարիմ եւ եկեղեցւոյ ծառայութեան համար իր կեանքը տալու պատրաստ։ Այս բոլորին մարմնացումն է փախըստականը, հալածական հայր Մոնթէզ։

Գ. մասին մէջ հայր Մոնթէզ կը հասնի գիւղ մը, ուր նոյնիսկ կը յաջողի բողոքական ընտանիքի մը Թոյլտուութեամբ ու կազմակերպութեամբ եկեղեցական արարողութիւն կազմակերպել, բաղմաթիւ անկնունք փոքրիկներ մկրտել։ Այնտեղ, իր կոչումին հաւատարիմ կրօնաւորը անդամ մը եւս ցոյց կու տայ այն կարգապահ ոգին, որով դաստիարակուած է։ Վէպի մեփիստոփելը հանդիսացող Մեսքիտոն, որ կաշառի սիրոյն ոստիկանութեան հաշուոյն կը գործէ, կը յաջողի գտնել վարդապետը եւ համոզել զայն, որ երթայ վերջին հաղորդութիւն տալու ձերբակալուած ու մահամերձ ամերիկացի կանկսքրրին։ Հայր Մոնթէզ բաւական ուշիմ է՝ հասկնալու համար, որ եղածը իրեն համար լարուած ծուղակ մըն է Մեսքիտոյին կողմէ, բայց միւս կողմէ իր կեանքէն աւելի զօրաւոր կը հանդիսանայ իր քահանայական պարտականութեան դիտակցութիւնը։ Կ'երթայ ու հպարտօրէն կը կատարէ իր պարտականութիւնը։ Կանկսքրրին վերջին խօսքը կ'ըլլայ վարդապետին՝ «փախչիր»...

Սակայն հայր Մոնթէզ չի փախչիր։ Ոստիկանութիւնը կը յաջողի ձերբակալել զինք։ Առաջին յուղիչ ու յատկանշական հանդիպումը տեղի կ'ունենայ յեղափոխական տեղակալին եւ վարդապետին միջեւ։

Երկու այս ծայրայեղ տիպարներու զրոյցին մէջ՝ Կրահամ Կրին դրած է նը-կարագրուած պայքարին իմաստը, ինչպէս եւ մեկնակէտը այն պայքարին, որուն մէջ կը տուայտին այսօրուան մեր աշխարհի ընկերային հակամարտ կառոյցներուն համախոհները։

Տեղակալ սպան խեղճ, բայց խոր համոզումով կը փորձէ ձերբակալուած զոհին բացատրել յեղափոխութեան նպատակները եւ արդարացնել բոլոր ի գործ դրուած միջոցները՝ հասնելու համար ծրագրուած պետական դեմոկրատիային։ Իր կարգին, հայր Մոնթէզ ջերմօրէն կը պաշտպանէ կաթոլիկ եկեղեցին։

Գնդակահարումէն առաջ, հայր Մոնթէզ կը խնդրէ, որ վերջին հաղորդութեան համար դիմեն հայր Ճոզէին, բայց այս վերջինը խիստ կերպով կը մերժէ։

Գրգռուած է ժողովուրդը, ամէն

digitised by A.R.A.R.@

մարդ իր հոգիին խորքէն նզովք կը կարդայ յեղափոխականներուն։

Մինչ բանտին բակը զինուորները աշխոյժ եռուզեռի մէջ՝ մահավճիռի դատաստանութեան թեմնիֆ կարգադրութեամբ զբաղած են, անդին, ժողովուրդը անսահման յուզումով կը սպասէ մեծ մարտիրոսացման։

Կը նահատակուի հայր Մոնթէղ։

Հայրենակիցները կը փութան անոր սրբացած արիւն մէջ թաթխել իրենց թաշկինակները, ապա՝ փոքր կտորներու վերածած այդ թաշկինակները կը բաշխեն բոլոր հարազատներուն ու անոնցմով մխիթարուած՝ կ'երթան տուն, իրենց պաշտելի եկեղեցւոյ վերջին քայլ հովիւին մահը ողբալով։

Կիներու հոգիներէն բարձրացած աղօթքները կը հասնին Աստուծոյ, այդ պաղատանքին կը միանայ մարդոց զայրոյթը, իսկ իրենց վարդապետին անմահութեան հաւատացող մանուկները ամէն օր ու ժամ կը սպասեն հայր Մոնթէղի վերադարձին։

Գաւառի կղերական հայր Մոնթէկ, գիւղացիներու կորովի կրօնաւորն էր։ Շատ զարգացած չէր, բայց կրնար յաջողութեամբ պատասխանել կրօնական ամէն հարցումի։

Աւելի եւս շեշտելու համար ժողովուրդին հաւատարմութիւնը՝ հեղինակը դատաստանութեան արարքը կատարել կուտայ խառնածին մը միջոցով, որովհետեւ ոչ մէկ մեքսիքացի, որքան ալ անօթի եւ խոստացուած գումարին կարօտ՝ չի գտնուիներ իր վարդապետին։

Կը նահատակուի քրիստոնեայ վերջին վարդապետը, բայց կը յաղթանակէ եկեղեցին, կը զօրանայ քրիստոնէական հաւատքը, որովհետեւ խոր ու հաստատատատ հաւատքները չէ կարելի խորտակել զինու զօրութեամբ։

ՎԷՊԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՍՏԱՌԸ

Մեքսիքացիները աւանդապաշտ, պարզ եւ հաւատացեալ քրիստոնեաներ են, կաթոլիկ։ Վէպի պատմութեան թատերաբեմն են Մեքսիքայի հարաւային նահանգները։

Շատ անոյշ մեծամասնութիւն մը՝ կառավարիչը, ոստիկանական տեղակալը եւ խումբ մը զինուած կատաղի յեղափոխականներ, կարմիր շապիկաւորներ, դէմ կը կենան ամբողջ ժողովուրդին, կը յաջողին շրջան մը իրենց հակակշռին տակ առնել եկեղեցին ու շրջանի ազգաբնակչութիւնը, բայց հինգ տարի հոգ ինքնաբերաբար կը մարի ոկսուած այս արկածախնդրութիւնը։ Շուտով պատմութեան թատերաբեմէն կը չքանան յեղափոխականները, կը հանդարտի շրջանը, կը յաղթանակէ կաթոլիկ եկեղեցին, կը հաստատուի ազգային դեմոկրատիկ վարչակարգ մը։

Այս յեղափոխականները եւս, այլ յեղափոխական շարժումներու վարիչներուն նման՝ կ'առաջնորդուին հէկէլի ծընունդ տուած եւ Մարքսի կենքահայրութեամբ 20րդ դարու քաղաքակրթութեան մէջ մուտք գործած այն տեսակէտէն, թէ միայն «իշխանութիւնն է, որ իրաւունք ունի եւ անսխալական է»։ Աշխարհի մէջ ընկերային մեծագոյն ոճիրները գործուեցան ա՛յս պիտակին տակ։ Այս ոճիրներուն հեղինակները հանդիսացող իշխանութիւնները միշտ իրենք զիրենք արդարացուցին, բայց, ի վերջոյ, յաղթանակեց հաւաքականութեան ձայնը, թէ՝ իրաւունքը կը պատկանի հաւաքականութեան, նոյնիսկ եթէ անիկա սխալական ըլլայ ընդդէմ միակ արդար եւ անսխալական դիկտատորին։

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԴԻՐՔԸ

Կրահամ Կրին կը յաջողի շատ յաճախ իր անաչառութիւնը պահել, մնալ կարելի չափով առարկայական, բայց միաժամանակ բոլոր էջերուն ընդմէջէն նշմարելի է ենթագիտակցական քծծիծաղ մը, բանապետական ձգտումներու դէմ հեգնանքի շեշտ մը եւ համակրանք մը՝ պարտականութեան գիտակցութիւնը ունեցող եւ կաթոլիկ դաստիարակութեամբ

digitised by A.R.A.R.@

աւանդական արժէքները պահող կղերին հանդէպ։

Այդ հեգնանքը կը ներկայացուի հետաքրքիր ձեւով։ Դատաւորն ու այդ չարժամն պատասխանատուութիւնը ատենադրոյ ոստիկանութեան տեղակալը կը կատարին ձերբակալուած անմեղներու հարցաքննութիւնը։ «Անոնք կու գան խոնարհելով, գլխարկները իրենց գլխուն, մէկը միւսին ետեւէն.

— Այսինչ այսինչեան, անկարգութեան ու գինովութեան յանցանքով դատապարտուած, անմիջապէս վճարէ հինգ փեզոս...

— Բայց... բայց ես այդ գումարը չունիմ, որ վճարեմ, Ձերդ Վսեմութիւն։

— Ուրեմն տարէք զինք, որ մաքրէ լուացարանն ու խցիկները։

— Այնինչ այնինչեան, դատապարտուած ընտրական յայտարարութիւնները պատռած ըլլալու յանցանքով։ Վճարէ հինգ փեզոս...

— Այսինչ այսինչեան, դատապարտուած՝ շապիկին տակ սուրբի մետալիոն մը կրած ըլլալու մեղքով»։

Այս կատակերգութեամբ կը շարունակուի դատավարութիւնը։ Միւս կողմէ, աշխարհիկ մեղքերու մէջ ինկած, սակայն միշտ հաւատարիմ, աւանդապահ հայր Մոնթէղ՝ «Ուխտի խմող կղերականը», հաստատ համոզումով կ'արդարացնէ իր փախուստը. «Իմ պարտականութիւնս է չներքակալուիլ... այդ մէկը անկարելի է, ես կղերական եմ, իմ ուժերէս վեր է»։ Այլ խօսքով՝ ասիկա հաստատումն է կարգապահական այն նուիրապետութեան, զոր կաթոլիկ եկեղեցին կրցած է սանձել դարերու ընթացքին։

Հայր Մոնթէղին նկարագիրը աւելի խոր ուսումնասիրելով կը յանգինք այն իրողութեան, որ իր մէջ վերջին տարիներուն յայտնուող բոլոր ժխտական երեւոյթները հետեւանք են բռնապետական այդ փարչակարգին։

Ցաւերժական տիպարներու վաւերականութիւն ունին կարմիր շապիկաւորները, անմահացած՝ Սերվանթէսի գրչով։

Հակառակ իր թերութիւններուն՝ ճշմարիտ հերոս մը է հայր Մոնթէղ։ Բոլոր գլխաւոր օրինակներու կողքին՝ կրին կը յիշէ յատկանշական մանրամասնութիւն մը, որ գրական ատանձնայատկութիւն մը է Մոնթէղի կղերականի վարկին։ Պատերազմի դաշտին վրայ եւ վատնդի պահուն նոյնիսկ քաջամարտիկ զինուորը զէնքէն աւելի իր կեանքին մասին կը խորհի, մինչ հայր Մոնթէղ անձկութեամբ կը փնտռէ սրբութեան ակիհը, որուն մէջ խաւսուած է իր կեանքի անհրաժեշտ իմաստը։

Ինք՝ ժողովուրդը, ատատպելով հանդերձ, կ'արհամարհէ յեղափոխութիւնը։ Ան գիտէ, թէ իր սրբութիւնները ատանակոխ եղան, կրօնաւորները խաթարուեցան յեղափոխութեան մէջ, յեղափոխութեան անմարդկային հոսանքին մէջ։ Այս ընդհանուր այլասերման գործընթացով հայր Մոնթէղ կը բացատրէ նաեւ իր մեղքերը՝ «Մէկը յաջորդեց միւսին, խմել, — ապօրինի գաւակ, ընդհանուր անտարբերութիւն»...

Վէպի վերջաւորութեան, հայր Մոնթէղի նկարագիրը կը յատկանայ, նոյնիսկ դինք ձերբակալիլը իր դերադոյն նրպատակը դարձուցած ոստիկանութեան տեղակալը կը սկսի համակրիլ եւ անձամբ կը դիմէ կարգաթող վարդապետ Ճոզէին, խնդրելով անկէ, որ դայ եւ վերջին հաղորդութիւն տայ անոր։ Ան կ'ըսէ. «...Վազը պիտի գնդակահարուի։ Գէշ մարդ չէ»։

Նոյնպէս հեգնանքով նկարագրած է ոստիկանութեան տեղակալը, որ տկար անհատականութեան տէր, միշտ ակայի ցաւէն տատապող անձ մը է, զրաղած՝ պիլիարտի խաղով։

Կառավարիչը մասնաւոր դեր մը չունի, բայց յիշուած է անոր զարմիկը, որ կը զբաղի գոնեակի մաքսանենգութեամբ, երբ վարչակարգը խստիւ արգիլած է ալքոլի գործածութիւնը։

Իրենց գրոյցի ընթացքին, հայր Մոնթէղ կը յաջողի նուաճել տեղակալը, մեծ յաջողութեամբ յիշելով Աստուածաշունչին եւ կեանքի փորձառութենէն

digitised by A.R.A.R.@

քաղուած օրինակներ. «Անօթութիւնը մարդս կը մղէ չարութեան, ցի՛շդ այնպէս՝ ինչպէս դրամը»։

ՎԷՊԻՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՊԱՇՏ ԽՈՐՔԸ

«Զօրութիւնն ու փառքը» հատորին պատմութիւնը ամբողջութեամբ հիմնուած է իրապաշտ արժէքներու վրայ, որովհետեւ կը մեկնի հոգեբանական յստակ ճշմարտութիւններէ։ Գարլ Եունկեան ցեղային ենթագիտակցական տեսակէտն է կարծէք Կրահամ Կրինի կողմէ ընդունուած. կարելի չէ աւանդութեամբ մարդկային մշակոյթին անցած արժէքները քանի մը տարիներու հալածանքով եւ բռնի միջոցներով փոխել։ Մշակոյթ մը աւանդութեամբ կը կազմուի եւ կը բարեփոխուի միա՛յն աւանդութեամբ։

Դժուար է ամբոխներու հոգիներէն անջատել մշակոյթի անբաժան մասն ու առանցքը հանդիսացող բնազանցութիւնը, կրօնական արմատացած զգացումը։ Հայր Մոնթէգ Ներքին հպարտութեամբ կը յարէ. «Այնտեղ, մայրաքաղաքին մէջ, նախագահը կը շրջապատուած մարդոցմով շրջապատուած, բայց դուն, զաւակս, դուն ունիս քու վրադ հսկող երկնի բոլոր հրեշտակները»։

Կրին կ'ուզէ ապացուցանել, թէ՝

1.— Արտաքին, քաղաքական եւ ընկերային ճնշումները կրնան ազատուել մարդկային հոգին, ստեղծել հակազդեցութիւններ, զայն մղել փոխ վրէժի տարբեր արտայայտութեանց։

2.— Այդ ազդեցութիւններն ու ճնշումները, սակայն, որոշ ուղղութեամբ դաստիարակուած մարդուն մէջ աւելի կը զօրացնեն իր հաւատքը եւ կը մղեն զայն հաւաքելու իր ամբողջական ուժերը՝ ընդդէմ պարտադրուած նորմին։

Պատմելու արուեստին մէջ հանճար նկատուող վիպասանը յաջողած է իրական դէպքերու գումարով ամբողջ ճշմարտութիւնը խտացնել այս հատորին մէջ։ Անոնք ընկերային են, մարդկային, հոգեբանական եւ քաղաքական. ճշմարտութիւններ, որոնց միաձուլումով կը կառուցանէ իր իմաստասիրութիւնը։

Մարդ էակը չի կրնար ապրիլ առանց հոգեկան կեանքի։ Մեր մարմնին ու մտքին հետ՝ մենք պայմանաւոր էութիւններ ենք նաեւ մեր հոգեւոր կեանքով, հոգիի գոյութեամբ։ Այս կուսանը մարդկային մեր բաղմաթիւ պահանջներուն բիւրեղացումն է յաճախ, մեր մխիթարութիւնը, մահուան սարսափին առջեւ երկրորդ կեանքի մը կարելիութեան մեր հաւատքը։

«Զօրութիւնն ու փառքը»

Զօրութիւնը բռնապետութիւնն է, ոճիրները, բոլոր բիրտ միջոցներն ու յեղափոխութիւնները։

Փառքը՝ աստուածայինն է, հոգեկան ու անկորնչելի։

Զօրութիւնը՝ միջոցն է, ֆիզիքականը։

Փառքը՝ միտքն է, մղիչ ուժը, սկզբունքն ու աննիւթականը։

Զօրութեան ու փառքի այս պայքարին մէջ, մարդկայնական յուզումներու, մեծ սիրոյ եւ գութի այս մթնոլորտին մէջ նուաստացած, մեղանչած, ընկերային պարտադրանքով ստեղծուած տորնութեան հանդրուանները բոլորած մարդը՝ մահուան առջեւ իսկ ցուցաբերած քաջութեամբ կը յաղթանակէ, կը բիւրեղանայ, կը մարդկայնանայ։

Կրահամ Կրինով մարդը կը յաղթանակէ բոլոր անհեթեթութեանց ու ժամանակաւոր ուժերուն դէմ, սէրը կը յաղթանակէ ատելութեանց դէմ։

20րդ դարու քաղաքակրթութիւնը այս կարգախօսով միայն կրնայ փրկուիլ խորտակումէ...

Ա՛յս է Կրահամ Կրինի գրականութեան խորհուրդը։

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՓԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԱՐԻՈՒԹԵԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Որեւէ, մա՛նաւանդ ազգային հասարակութեան պատմութիւն շարադրուելիս՝ առաջին հերթին ելակէտ են ընդունւում ամէնից ցայտուն երեւոյթները եւ ապա միայն ընդգրկւում առօրեական մանրամասնութիւններ, որքան հնարաւոր եւ յարմար է: Իսկ ցայտուն երեւոյթներն էլ նրանք են, որոնք առաւել հարազատութեամբ են արտայայտում տուեալ հասարակութեան բաղկացուցիչ անհատներին բնորոշ առանձնայատկութիւնների զումարը, պատկերացում տալիս նրա հաւաքական ինքնութեան մասին: Պարզ է, որ պատմութիւն շարադրուելու ընթացքում նաեւ առանձնապէս շեշտւում ու փառաբանւում են մարդկային մանաւանդ այն յատկութիւններն ու արարքները, որոնք նպաստում են մարդկանց մերձեցմանը, գործակցութեանը ու համակեցութեան առաւել արժանաւոր ձեւեր ստեղծելուն եւ ապահովելուն: Ուստի եւ չկայ պատմութեան որեւէ շարադրանք, որտեղ բացակայելու լինեն այս կամ այն կացութիւնը կամ արժէքը պաշտպանելու համար ոտքի ելած մարդկանց քաջութեան, արիութեան ու հերոսութեան նկարագրութիւններն ու գնահատականները, որպէս պատմական վկայութիւն եւ որպէս օրինակ ուրիշների համար:

Նոյն ազգի պատմութեան մէջ ամէնից յաճախ ու սիրով են հոլովւում այն անունները, որոնք խորհրդանշում են ընդհանուր գործի համար մղուած պայքարն ու պայքարողներին: Նոյն հայրենիքի մէջ յատկապէս այն երկրամասերն են հռչակւում, որտեղ ամէնից յաճախ են վճռական պահերը դիմաւորել վճռական գործողութիւններով, ցուցաբերել արիութիւն: Հայոց պատմութեանը ծանօթ իւրաքանչիւր ոք գիտի, թէ որոնք են այդ կարգի երկրամասերը, գիտի, որ դրանցից մէկն է եւ Զէյթունը: Զէյթունը գրեթէ մեկուսի եւ փոքր գաւառ է, մեծ ճակատամարտեր չի չահել եւ ազգ չի առաջնորդել: Բայց հենց ճիշդ նրա համար, որ մի քուռն զէյթունցիները դարեր շարունակ յամառօրէն պաշտպանել են իրենց փոքր գաւառի մեծ ազատութիւնը, ինչպէս եւ համայն հայութեան համար հարազատ ազգա-մշակութային արժէքները, սերնդէ սերունդ փոխանցել նախնիքներից ժառանգած արիութեան

digitised by A.R.A.R.@

թթիմորը եւ հայոց պատմութեան մի որոշակի ժամանակաշրջանում հանդիսացել արթնացող մարտական ուժերի ներշնչման աղբիւր, — նրանք վաստակել են դարեդար յիշուելու իրաւունք։

Ուստի՝ միանգամայն տեղին է, որ «Հայաստան» հրատարակչութիւնը մեծ տպաքանակով (20 հազար) լոյս է ընծայել Հայկազ Պօղոսեանի «Զէյթունի պատմութիւնը»։ Պօղոսեանը շատ յայտնի հեղինակներից չէ։ Ժամանակ առ ժամանակ նրա ստորագրութեամբ յօդուածներ կարելի է հանդիպել «Թանքեր Հայաստանի արխիւների» հանդէսում եւ առհասարակ թւում է, թէ նա իր պաշտօնավարութեամբ ուղղակի կապուած է արխիւային հաստատութիւնների հետ։ Յամենայնդէպս, Զէյթունի պատմութեանը նուիրուած աշխատութիւնը Պօղոսեանը գրել է ակնյայտ սիրով, ա՛յնքան սիրով, որ գրքի առաջին իսկ պարբերութիւնները կարդալիս ակամայ կասկած է առաջ գալիս, թէ արդեօք հեղինակի այդ սիրահարուածութիւնը չի՞ խանգարի իսկապէս գիտական ուսումնասիրութիւն կերտելուն։ Բայց այդ մտավախութիւնն, անշուշտ, աւելորդ է, որովհետեւ գիրքը ընդհանուր առմամբ շարադրուած է գիտական պահանջների համաձայն։

Պօղոսեանն իր գրքի հենց առաջին էջերն սկսում է բարձր տրամադրութեամբ ու Զէյթունի անունը յիշատակելիս գրում հետեւեալը.

«Իւրաքանչիւր մարդու սիրտ հպարտութեան ջերմ զգացումով է լցւում ամէն անգամ, երբ լսում է այդ սիրելի անունը եւ իր ձեռքն է առնում այդ գաւառակի ժողովրդի հերոսութեան մասին գրուած որեւէ աշխատութիւն»։

Եւ այդ չունչն ու ոգին տիրող են հանդիսանում մինչեւ գրքի վերջը։ Կարելի է ասել, որ դիրքը պարզապէս սրբութեան անաղարտ փառաբանութիւն է հանդիսանում, ոչ թէ ընդհանուր տեսական կամ վերլուծական առումով, այլ Զէյթունի պատմութեան տրամադրած անմիջական տուեալների շրջանակում։ Հեղինակը ներկայացնում է վաւերական իրողութիւններ, որոնք ինքնին բացայայտում են լեռնականների ոգու բնոյթը, նրանց վարքի ներքին շարժառիթները։ Արիութիւնը փառաբանելու տարբեր ձեւեր ու միջոցներ կան։ Պօղոսեանը ընտրել է իր յարմար դատած եղանակը։

«Զէյթունի պատմագրութիւնը» նեղրածական մասում Պօղոսեանը ներկայացրնում է, թէ իրենից առաջ ինչ են գրել ուրիշները Զէյթունի մասին։ Նախ ի միջի այլոց ընդգծում է, թէ՝ «Անիից, Կարսից, Սասունից եւ Հայաստանի մնացած մասերից Զէյթուն գաղթածների մօտ պահպանուել են իրենց նախահայրերի առասպելները, գաւթիչների դէմ մղած նրանց պայքարի փորձը»։ Ապա տեղեկացնում է, որ «մինչեւ անցեալ դարի 50-ական թուականները հայերէն լեզուով տպագրուած պատմագիտական աշխատութիւններում եւ պարբերական մամուլում շատ սակաւ տեղեկութիւններ են պահպանուել Զէյթունի գաւառակի եւ առհասարակ Կիլիկիայի նոր շրջանի պատմութեան վերաբերեալ։ Յատկապէս շատ քիչ տեղեկութիւններ կան Զէյթուն քաղաքի եւ նրա շրջակայ հայ գիւղերի աշխարհագրութեան, կենցաղի եւ սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների մասին»։ Հեղինակը նաեւ բացատրում է, թէ ինչու է այդպէս պատահել, — եղել են արշաւանքներ, աւերումներ, հրդեհներ, եւայլն։

Բայց «19-րդ դարի 50-ական թուականներից, հայ եւ եւրոպական քանանչերն ու ճանապարհորդները սկսում են հետաքրքրուել Զէյթունի գաւառակով»։ Պօղոսեանը 24 էջի վրայ տալիս է այդ կարգի գրականութեան մանրամասն տեսութիւնը։ Մասնագէտները հաշուել են, որ պատմութեան ընթացքում Զէյթունի ազատասէր հայութիւնը աւելի քան 40 անգամ ըմբոստացել է թրքական լծի դէմ, իսկ 1895-96 թուականների ապրստամբութիւնը առաւել հետաքրքրութիւն առաջ բերեց Զէյթունի հանդէպ։ Պօղոսեանը յայտնում է նաեւ հետեւեալը.

«Հայկական ՍՍՀ պետական պատ-

digitised by A.R.A.R.@

մական արխիւում եւ Մ. Մաշտոցի անուան մատենադարանում պահպանուել են մի շարք ձեռագիր աշխատութիւններ ու բազմաթիւ վաւերագրեր, որոնց մանրամասն ուսումնասիրութիւնը նոր լոյս է սփռում Զէյթունի պատմութեան վրայ։ Յատկապէս շատ նիւթեր կան նշուած արխիւներում 1862–1915 թ.թ. միջեւ ընկած ժամանակաշրջանի Զէյթունի պատմութեան վերաբերեալ»։

Գօրոսեանը անդրադառնում է այն հարցին, թէ ինչ է արուել Խորհրդային Հայաստանում Զէյթունի պատմութեան ուսումնասիրութեան առնչութեամբ եւ ընդհանրապէս.

«Սովետահայ պատմագրութիւնը մինչեւ 1950 թուականը Զէյթունի պատմութեան ուսումնասիրութեան ուղղութեամբ շատ քիչ աշխատանք է տարել։ Սակայն սկսած 1940ական թուականների վերջից արդէն սովետահայ պատմաբանները սկսեցին զբաղուել նրա պատմութեան հարցերով։ 1920ական թուականներին հրատարակուած Ա. Կարինեանի միակ յօդուածը «Խորհրդային Հայաստան» թերթի 1927 թուականի № 83–84ում «Անցեալն ու ներկան» վերնագրով, միանգամայն սխալ կերպով է բնութագրում լեռնականների ազատագրական պայքարը թուրքական բռնակալութեան դէմ»։

Մեր կողմից ասենք, որ իսկապէս շատ զարմանալի կը լինէր, եթէ Արտաշէս Կարինեանը որեւէ ճշմարտանման միտք յայտնէր հայ ազգային-ազատագրական պայքարի այս կամ այն կողմի վերաբերեալ։ Գօրոսեանը դրական գնահատական է տալիս 1950 թուից յետոյ ստեղծուած գրականութեանը, յիշելով Վ. Մելիքսէթեանի, Մ. Ներսիսեանի, Վ. Գարսամեանի, Ա. Յովհաննիսեանի, Հ. Ղազարեանի աշխատութիւնները։ Սակայն՝ «վերը նշուած աշխատութիւններից եւ ոչ մէկը ամբողջական պատկերացում չի տալիս հերոսական Զէյթունի կէսհազարամեայ հարուստ ու ուսանելի պատմութեան վերաբերեալ»։ Այսպիսով, Գօրոսեանի ներկայացուող աշխատութիւնը Զէյթունի պատմութիւնը ամբողջութեամբ ընդգրկելու եւ այսօրուայ գիրքերից տեսնելու ինքնուրոյն փորձ է, մինչեւ հիմա գրուածները հանրագումարի բերելու վերջին խօսքը։

Ներածական մասից յետոյ Գօրոսեանը յաջորդական ինքնուրոյն գլուխների մէջ շարադրում է Զէյթունի բուն պատմութիւնը՝ 1409ից մինչեւ 1921 թուականը։ Այս կապակցութեամբ, սկզբից եւեթ պէտք է ընդծել մի ընդհանուր տպաւորութիւն։ Հեղինակը բոլոր դէպքերում ցուցաբերում է առնուազն երկու հիմնական արժանիքներ։ Նա բարեխղճօրէն հաւաքել, ուսումնասիրել եւ ազատագրծել է բաւական հարուստ գրականութիւն եւ սկզբնաղբիւրներ, որոնք վերաբերում են իր ընտրած նիւթին։ Բացի այդ, նրա հեղինակային ոգին առողջ է եւ հեռուազէս մերժում է կողմնորոշուում իրագործութիւնների ու գրականութեան մէջ, ունի իր յստակ դիրքն ու նպատակը։ Բայց գլուխում պակասում է մի նոյնպէս հիմնական ու կարեւոր արժանիք. գրքի կառուցուածքը կուռ չէ, նկատւում են որոշ անտեղի կրկնութիւններ ու ձգձգուած տեղեր։ Ի հարկէ, ինչպէս որ արդէն մի անգամ նշուեց, գիրքը ընդհանուր առմամբ շարադրուած է գիտական պահանջների համաձայն, գիտական աշխատանքի արդիւնք է։ Բայց գիտական աշխատանքն էլ իր ներքին ասոիճաններն ունի եւ, աբեւալ դէպքում, կառուցուածքի տեսակէտից Գօրոսեանի գիրքը դժուար է առաջնակարգ համարել։ Սա անհատական ճաշակի հարց չէ, այլ ընթերցողների ընկալման հոգեբանութիւնը հաշուի առնելու անխախտ պայման։ Երկրորդ անգամ հրատարակուելու ժամանակ, եթէ այդպիսի բան իրօք պատահի, գիրքը հիմնովին վերանայուելու եւ վերախմբագրուելու կարիք ունի։

Այսպէս, գիրքը կոչւում է «Զէյթունի պատմութիւն», բայց նրա առաջին գլուխը վերնագրուած է «Սոցիալ-տնտեսական իրավիճակը Զէյթունում 19րդ դարի առաջին կէսին», իսկ երկրորդը՝ «Զէյթունի պատմութեան հեռաւոր էջերը (1409–1800)»։ Վերջապէս այնքան ա-

digitised by A.R.A.R.@

կընայիս է, որ ուրիշ գրախօսներ եւս նկատել ու շեշտել են այդ պարագան։ Մեր կարծիքով, այստեղ հարցը չի սահմանափակւում որեւէ հաւանական թիւրիմացութեամբ, քանի որ կառուցուածքային շեղումներ նաեւ յաջորդ գլուխներում կան։ Ըստ երեւոյթին, Գողոսեանը պարզապէս հեռուել է խորհրդային պայմաններում պարտադիր համարուող սխոլաստիկական մեթոդին, երբ հասարակական որեւէ իրականութիւն քննութեան առնելու ժամանակ անպայման պէտք է առաջին հերթին ներկայացուի նրա «սոցիալ-տնտեսական» կացութիւնը։ Բայց այդ մեթոդը առհասարակ ո՛չ կարող է բարձրացնել որեւէ ուսումնասիրութեան արժէքը, ոչ էլ նուազեցնել։ Նոյնիսկ այդ մեթոդին դիմելու դէպքում Գողոսեանը ստիպուած չէր գլուխների տեղերը փոխել, քանի որ ինքը պատմութիւն է գրում եւ այդ պատմութիւնը պէտք է շարադրուի որոշակի ժամանակագրութեան համաձայն, որպէսզի երեւոյթների ընթացքն ու այսպէս ասած զարգացումը ճիշդ ընկալուի։ Իսկ «սոցիալ-տնտեսական»ն էլ չի խանգարում՝ թող իր պատշաճ տեղն ունենայ։

Կամ, ասենք, գրքի երրորդ, չորրորդ, եօթներորդ եւ ութերորդ գլուխները կրում են կաղապարուած վերնագրեր՝ «Զէյթունի լեռնականների պայքարը»... այսինչ կամ այսինչ թուականներին։ Պայքարը՝ պայքար։ Բայց չէ՞ որ այդ պայքարը միայն ներքին մշտական պատրաստակամութեամբ չի պայմանաւորուած եղել, այլ արտաքին հանգամանքներով, որոնք տարբեր երանգներ են ունեցել եւ պայքարին հաղորդել տարբեր թափ ու բնոյթ։ Վերնագրերը հենց նրա համար են, որ հեղինակային դիրքից դէպուկ կերպով բնութագրեն այս կամ այն ժամանակաշրջանը, այլապէս գիրքը գլուխների բաժանելու հարկ չկայ։ Պէտք է շեշտուեն առանձնապէս հանգուցային ու շրջադարձային թուականները, որպէսզի պայքարի կորագիծը ըմբռնելի իմաստ արտայայտի։ Մինչդեռ Գողոսեանի գրքի յիշեալ գլուխների միապաղաղ վերնագրերը ոչինչ չեն յուշում եւ չեն ճշդում։

Գողոսեանն իր գրքում, բնականաբար, բացատրութիւններ է տալիս Զէյթունի հայ բնակչութեան կազմաւորման հանգամանքների, «Զէյթուն» եւ «Ուլնիա» անունների ծագման, աշխարհագրական միջավայրի, զէյթունաբնակների կենցաղի ու բարքերի, զբաղմունքների, ինքնակառավարման բնոյթի, իշխանական տների ու նրանց ներքին պայքարի եւայլնի մասին։ Հասկանալի պատճառներով, հեղինակը սոսկ ընդհանուր դծերով է շարադրում Զէյթունի սկզբի չորս հարիւր տարուայ պատմութիւնը, գրքի երկրորդ գլխում, քանի որ համեմատաբար քիչ դրաւոր վկայութիւններ են մընացել այդ երկար ժամանակաշրջանի մասին։ Յայտնի է, որ Կիլիկեան Թագաւորութեան բարձումից յետոյ՝ «հայ զինուորական ուժերը եւ ժողովուրդը, եգիպտական մամլուկներին կատաղի դիմադրութիւն ցոյց տալու հետ միասին, դաշտային Կիլիկիայից աստիճանաբար բարձրացել են լեռնային Կիլիկիա։ Հենց այս ժամանակից սկսած աւելի է ստուարանում ո՛չ միայն Զէյթունի, այլեւ ներս շրջակայ հայ գիւղերի բնակչութիւնը»։ Բայց՝ «Զէյթունի նշուած ժամանակաշրջանի պատմութեան հետ կապուած բազմաթիւ հարցեր թաղուած են պատմական խորխորատներում։ Մեզ յայտնի չէ, թէ 1375–1780 թուականների ընթացքում ինչպիսի կեանքով են ապրել զէյթունցիները, ինչպիսի սոցիալ-տնտեսական յարաբերութիւններ են գոյութիւն ունեցել այնտեղ եւ ինչպիսի կենցաղ ու սովորութիւններ է ունեցել ժողովուրդը»։

Ներկայումս Զէյթունի մասին յայտնի առաջին գրաւոր յիշատակութիւնը վերաբերում է 1409 թուին, որը հրապարակուել է 1955 թուին, երկրորդը՝ 1473 թուին, որը գտնուել է 1870 թուին։ Եւայլն։ Հետաքրքրական է Գողոսեանի հետեւեալ հաւաստումը.

«Յայտնի է, — գրում է նա, — որ Կիլիկեան հայկական թագաւորութեան

digitised by A.R.A.R.@

ժամանակաշրջանում այնտեղ ծաղկած է եղել գյուղատնտեսությունը։ ...Սակայն թագաւորության վերացումից յետոյ Զէյթունը հանդիսացաւ այն միակ վայրը, որտեղ շարունակեցին ձեռագրերի ընդօրինակութիւնները»։

Պողոսեանը պատմում է զէյթունցիների եւ չրջապատի նկուղը ցեղերի փոխյարաբերութիւնների ու պայքարի մասին, միաժամանակ շեշտելով, որ առհասարակ Կիլիկիայում թուրքական տիրապետութիւնը «սկզբնական չրջանում ձեւական բնոյթ է կրել»։ «Մեր ուսումնասիրութիւնների ընթացքում, — գրում է նա, — մենք չհանդիպեցինք մի դէպքի թուրքական 15–17դ դարերի տիրապետության ամբողջ ընթացքում, որ զէյթունցիները կռուեին օսմանեան զօրքերի դէմ։ Միայն 1780 թուականին Մարաշի Օմէր փաշան հիմք դրեց այդ կռիւներին, որը եւ շարունակուեց շուրջ 135 տարի»։ *Ուրեմն, զէյթունցիները դարեր շարունակ վարել են կիսանկախ կեանք եւ* «թուրքական տիրապետության հենց սկզբից մինչեւ 1865 թուականը ամբողջ գաւառակում ոչ մի թուրքական իշխանաւոր չի եղել»։ *Այս պերճախօս իրողութիւնը արձանագրելուց յետոյ, Պողոսեանը զերազանցապէս զրաւում է 1780թ մինչեւ 1915 թուականը ընկած ժամանակաշրջանի ազգերաշինական իրադարձութիւններով։*

19դ դարը զէյթունցիների կեանքում ներկայանում է որպէս անընդհատ պայքարի, դիմադրութեան ու նաեւ մի չարչ բացայայտ ըմբոստութիւնների դար։ Պողոսեանի գրքի այդ ժամանակաշրջանին վերաբերող մասերը ունեն հարուստ բովանդակութիւն, հարուստ աղբեալներ, ընդարձակ նկարագրութիւններ։ Դէպքերն ու դէմքերը յաջորդում են միմեանց, ընթերցողին փոխանցելով իրենց փոթորկալի կեանքի ուսանելի փորձը ու նաեւ հպարտութիւնը։ Զէյթունի պատմութեան 19դ դարի երկրորդ կէսի հերոսական դրուագները, առանց այդ էլ, այս կամ այն չափով արդէն յայտնի են հայ ընթերցողներին։ Պողոսեանի վաստակը կայանում է նրանում, որ ընթերցողի տրամադրութեան տակ է դրել մի ամբողջական գործ, որտեղ ի մի են ամփոփուել անխտիր բոլոր դրուագները՝ իրենց առանձնայատուկ կողմերով։ Այստեղ, ի դէպ, աւելորդ չէ մէջբերել հեղինակի մի դրոյթ, թէ՝ «Զէյթունի պատմութեան ուսումնասիրութիւնից երեւում է, որ նրա բնակիչները զէնքի են դիմել միայն այն դէպքում, երբ այլեւս ուրիշ ճանապարհ չի եղել, իսկ մնացած ժամանակ նրանք աշխատել են խաղաղասէր քաղաքականութիւն վարել իրենց շրջապատող ցեղերի նկատմամբ»։

Բնական է, որ Պողոսեանը յատկապէս կանգ առնի ամէնից ծանրակշիռ իրադարձութիւնների վրայ։ Այդպիսի իրադարձութիւններից է եւ 1862 թուի ապստամբութիւնը։ Հեղինակը ո՛չ միայն նկարագրում է ապստամբության հետաքրքրող դէպքերն ու հենց ապստամբության ընթացքը, այլեւ բանավիճում ապստամբության մասին զանազան կարծիքներ արտայայտած ուրիշ այլեւայլ հեղինակների հետ։ Պողոսեանը եզրակացրեալ է, թէ՝ «ճիշդ է, որ Զէյթունի 1862 թուականի հերոսական ապստամբութիւնը յաղթանակեց եւ մեծ նշանակութիւն ունեցաւ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները բարբաջելու տեսակէտից, սակայն չի կարելի մոռնալ, որ այդ ապստամբութիւնով էլ վերջացաւ Զէյթունի մի քանի դար տեւող ինքնավար վիճակը։ ...Դրանից յետոյ Զէյթունցիների ազգ պայքարը 19դ դարի ընթացքում մղուել է իրենց կորցրած կիսանկախութիւնը յետ ստանալու համար»։

Պողոսեանը միաժամանակ բնութագրում է եւ Ֆրանսիայի այն ժամանակուայ արեւելեան քաղաքականութիւնը, մանաւանդ Կիլիկիայի կապակցութեամբ։ Ներկայացնում է «Լեւոն Լուսինեան իշխանի» անձն ու գործունէութիւնը, քննադատելով նրա ազգամանդրական դէմքը։ Միքայէլ Նալբանդեանի գործածած բառով ասած՝ այդ «չառլատանի» մասին ներկայացուած տուեալներն անպայման

digitised by A.R.A.R.@

տեղին եւ պիտանի են։ Բայց, կարծում ենք, Գողոսեանը չատ է քաշքշում նրա անունը եւ յատուկ եռանդով պիտակներ չի խնայում։ Մինչդեռ պատմական իրողութիւնների անկիրք ու առարկայական շարադրանքն իսկ բաւական է եւ պերճախօս։ Շառլատաններ միշտ եղել են եւ հանդիպում են ամէն քայլափոխի։ Էականը նրանց գոյութիւնը չէ, այլ մարդկանց ապակողմնորոշել կարողանալն ու յաջողելը, ինչ որ պայմանաւորուած է միջավայրի յետամնացութեամբ ու հոգեմտաւոր ցածր մակարդակով։ Զէյթունի պարագայում ուշագրաւն այն է, որ այդ ինքնաբոյս «փչխանի» յաւակնութիւններին չատ քչերը կարեւորութիւն տուին, իսկ մեծ մասամբ մարդիկ վերջին հաշուով ցուցաբերեցին զգաստութիւն, ինչ որ լաւ վկայական է նրանց համար։ Ուրեմն, նոյնիսկ այնպիսի ճգնաժամային պայմաններում, երբ «փրկիչներին» հաւատալը հոդեբանօրէն դիւրին էր, ժողովուրդը հիմնականում առողջ էր ու թոյլ չտուեց, որ իր քթից բռնեն եւ ուզած ուղղութեամբ առաջնորդեն։ Մեզ համար այժմ ամէնից կարեւորն այդ է։

Գողոսեանը ուսանելի էջեր է չարադրել նրդ՝ «Զէյթունը հասունեան եւ հակահասունեան պայքարի ասպարէզ» գրքում, խօսելով «լուսաւորչականների եւ բիւզանդական մնացած ազանդների միջեւ եղած պայքարի», «օտար դաւանանքների դէմ հայ առաքելական մտաւորականութեան պայքարի» եւայլնի մասին։ Հեղինակը այնուհետեւ կանգ է առնում 1877էն 78 թուականների զէյթունեան եւ ընդհանուր իրադարձութիւնների, Գապիկ իշխանի գործունէութեան, 1884 եւ 1887 թուականների Զէյթունի հրդեհների եւ այլ դէպքերի վրայ։ Եւ, ի հարկէ, 1895–96 թուականների կոտորածների առնչութեամբ, լայնօրէն ներկայացում է նաեւ զէյթունցիների հերոսական ինքնապաշտպանութիւնը։ Հեղինակը դրուատական խօսքերով է յիշում իտալական հիւպատոս Էնրիկո Վիտորին, որը «ամիսներ ապրելով Զէյթունում, ո՛չ միայն ուսումնասիրեց եւ գրեց նրանց պատմութիւնը, այլեւ ջերմ զգացումներով կապուեց այդ ժողովրդի հետ, սիրեց նրան եւ թողեց մի հիանալի գիրք այդ ժողովրդի մասին»։ Խօսում է նաեւ Հնչակեանների կիլիկեան գործունէութեան մասին։

Զէյթունի պատմութեան վերջին դրուագն է հանդիսանում 1915–1921 թուականների ժամանակաշրջանը, երբ զէյթունցիները բաժանեցին ամբողջ արեւմտահայութեան ճակատագիրը։ Գողոսեանը արձանագրում է, որ «1895–96 թուականների դէպքերից յետոյ լեռնական զէյթունցիները մինչեւ իմպերիալիստական առաջին պատերազմի սկիզբը թուրքական իշխանութիւնների դէմ առանձին զինուած ելոյթներ չունեցան»։ Ցեղասպանութեան տարիներին եւս զէյթունցիները, հանգամանքների ճնշման տակ, ինչպէս յայտնի է, առանց դիմադրութեան զինաթափուեցին։ Գողոսեանը նշում է, որ «լեռնականները իրենց ամբողջ պատմութեան ընթացքում ոչ մի անգամ այդպիսի դառն եւ անմխիթարական վիճակի հասած չեն եղել»։ Փորձում է բացատրել պատճառները։ Ցայտնի է նաեւ, որ փոքրաթիւ ջոկատներ, Զէյթունի շրջակայ վայրերում եւ գիւղերում, օրհասական պայքար են մղել, ապա անցել Ամանոսի լեռները եւ կռիւը շարունակել մինչեւ զինադադարը։ Գրքում ներկայացում է եւ այդ ժամանակաշրջանը։ Այնուհետեւ, ինչպէս յայտնի է եւ ինչպէս պատմում է Գողոսեանը, «Ֆրանսիական իշխանաւորները խոստացան անկախութիւն տալ Կիլիկիայում հաւաքուած հայերին, եւ այդ սուտ խոստումների հետեւանքով այնտեղ կուտակուեցին 200 հազար հայեր։ 1919 թուի Օգոստոս ամսին արծուաքնի եւ նրա շրջակայ գիւղերի բնակիչներից 1500 մարդ վերադառնում են Զէյթունի գաւառակի գիւղերը եւ գիւղաքաղաքը»։ 1920–21 թուերին նրանք վերստին ստիպուած եղան հեռանալ հայրենիքից, վերստին կորուստներ տալով եւ կռիւներ մղելով։

Հայկազ Գողոսեանի «Զէյթունի պատմութիւնը» ընդգրկում է մարտական առանդոյթներ ունեցող հայկական նշանա-

digitised by A.R.A.R.@

ւոր գաւառի կեանքի աւելի քան 500 տարուայ ուղին։ Բնականաբար, շարադրանքը նոյն խտութիւնը չունի։ Եթէ 400 տարուայ կեանքը պատկերացնում ենք ամենընդհանուր գծերով, համազգային պատմութեան տուեալների եւ ժամանակագրական պատահական նշանաձողերի օգնութեամբ, ապա վերջին 100 տարին, գրեթէ ժամանակակից պատմութեան մաս կազմելով, տեսանելի է իր հիմնական ընթացքով։ Գօղոսեանը ի մի է բերել քիչն ու շատը եւ կազմել ամբողջական աշխատութիւն։ Թերեւս Զէյթունի պատմութեանն ու կեանքին աւելի իրազեկները ինչ-ինչ պակասութիւններ ու վրիպումներ նկատեն գրքում, դա ինքնին հասկանալի է, սակայն ազգային պատմութեամբ հետաքրքրուող իւրաքանչիւր, նոյնիսկ որոշ պատրաստութիւն ունեցող ընթերցող՝ անպայման գոհունակութեամբ կը սկսի ու կ'աւարտի գրքի ընթերցումը։ Քանզի նրանում մտածելու նիւթ կայ, կեանքն ու աշխարհը ճանաչելու յաւելեալ պատեհութիւն։

Զէյթունները շատ չեն, ժամանակի վրայ կարող են համբուել։ Եւ այդպիսի արծուաբների ամբողջական շարքը հանդիսացել է ազգային հաւաքականութեան կանգուն ողնաշարը, գոյատեւելու ուժ ներշնչել նաեւ իրերի բերմամբ արծուաբոյն չլինելու դատապարտուած երկրամասերին։ Զէյթունները պահպանել են այն, ինչ որ ուրիշները չէին կարող պահպանել։ Բայց պահպանել են, գիտակցաբար կամ բնազդաբար, ոչ թէ միայն իրենց համար, այլ նաեւ ուրիշների ու բոլորի։ Եթէ այդպէս չլինէր, նրանց գոյութիւնն ու երբեւէ պարզած ըմբոստութեան դրօշը երբեք արձագանգ չէին գտնի հեռաւոր, բայց ազգայնօրէն հարազատ մարդկանց սրտերում, չէին ներշնչի ու ոգեւորի։ Բայց պատմութիւնը աներկբայօրէն վկայում է, որ հենց ճիշդ այդպէս է եղել։ Ուստի եւ միշտ գտնուել են արծուաբների արժէքը հասկացող հեղինակներ ու նոյնպիսի ընթերցողներ։ Խորհրդային Հայաստանում երկար լռութիւնից յետոյ Հայկազ Գօղոսեանի գրքի նման մի գիրք հրատարակելը ինքնին պերճախօս վկայութիւն եւ ապացոյց է։ Հաւաքաբար, կամ դէթ հաւաքական ըմբռնումներով ապրող ազգը ազգային շաղախը ամրացնող գործօնների դերը վերջին հաշուով չի կարող անտեսել եւ չի էլ անտեսում։

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

ՍԱՄՈՒԷԼ ՊԷՔԷԹ

ԱՆՁԻՆ ՓՆՏՌՏՈՒՔԸ

ՀԱՅԱՑՈՒՑ

ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Իր վերջին կամքէն եւ կտակին մէջ, Սամուէլ Պէքէթի առաջին պատմուածքին՝ «Մըրֆի»ի նոյնանուն հերոսը՝ Մըրֆին, պարտականութիւն կը յանձնէ իր ժառանգորդներուն եւ կտակարարներուն, աճիւնները գետեղել Թուղթէ տոպրակի մը մէջ եւ զայն տանիլ «Տուպլինի Լաբտ Ապպի փոդոցին «Ապպի» թատրոնը, զոր Լորտ Զբսթըրֆիլտ կոչած է անհրաժեշտ տուն եւ ուր անոնք կ'անցընեն իրենց կեանքին երջանկագոյն ժամերը: Տեղ մը, սեաւասիկ, որ կը գտնուի դէպի ձոր գացող ճամբուն աջակողմը, ուր պէտք է շղթայուի եւ ցուցադրուի նաեւ թատերական ներկայացում մը»: Հակա-թատրոնի արուեստին իրապէս յանդուգն ոգին խորհրդանշող արարք մըն է ասիկա, ուր «Սպասելով Կոտոյին» թատերգութեան հեղինակը ստացաւ իր առաջին տարաւորութիւնները՝ տրամայի այդ ձեւին մասին, որուն դէմ ինք իսկ արտայայտած է հեռուեալ մերժողական բառերով. «Արտառոց խաբէութիւնը իրապաշտական արուեստին եւ տեղը մէկ փէնի արժող գեղեկութիւնը նոթագրութիւններու գրականութեան»:

Սամուէլ Պէքէթ ծնած է Տուպլին, 1906ին: Ան զաւակն էր քննիչ պաշտօնեայի մը: Շոյի, Ուայլտի եւ Եէյթցի նըման՝ Պէքէթ կը սերէր մէջին դասակարգի պատկանող իրլանտացի բողոքական ընտանիքէ մը եւ, հետեւաբար, սնած ու մեծցած էր գրեթէ իբրեւ «մաքրակրօն հաւատացեալ», ինչպէս որ ինք ըսած է առիթով մը. այսուհանդերձ, ան հետագային դարձաւ բոլորովին անհաւատ անձ մը: Կ'ենթադրուի, թէ լինելութեան եւ պատկանելիութեան հարցերուն շուրջ Պէքէթի սկզբնական մտահոգութիւնները ծնունդ առած են անգլո-իրլանտական անխուսափելի եւ մշտագոյ հարցումէն՝ «Ո՞վ իմ ես». թէեւ կրնայ ըլլալ, որ ճըշմարտութիւն մը գոյութիւն ունենայ այս կարգի ենթադրութիւններուն մէջ, բայց

digitised by A.R.A.R.@

միաժամանակ անիկա բոլորովին հեռու է ամբողջական բացատրութիւն մը ըլլալէ՝ գոյութեան մասին զգացուած այն խորունկ անձկութիւնը յատկանշող, որ բանալի լուսաբանութիւնն է Գէքէքի գրականութեան եւ որ յատկօրէն կը բխի իր անհատականութեան խորագոյն ծալքերէն, աւելի խորունկ, քան ընկերային գոյակցութեան մակերեսայնութիւնը:

Տասնըչորս տարեկանին, Գէքէք կը գրկուի ձորձ Ա. Թաքաւորին կողմէ հիմնուած անգլօ-իրլանտական տանգապահ գիշերօթիկ վարժարանը, «Փորթորա Բոյըլ», ուր ուսում ստացած էր նաեւ Օսքար Ուայլտ: Այդտեղ, Գէքէք եղաւ մարդկային դիծերով օժտուած զգայուն եւ տիպար ուսանող մը, միաժամանակ ճարպիկ մարզիկ մը:

1923ին, Գէքէք կը ձգէ Փորթորան՝ անցնելու համար Թրինիթի գոլէճ, ուր կը հմտանայ իտալերէն եւ ֆրանսերէն լեզուներուն մէջ եւ, 1927ին, կը վկայուի՝ ստանալով Գօլկաւոր Արուեստից տիտղոս: Անմիջապէս ետք, ան իր համալսարանի յանձնարարութեամբ կը փոխանցուի Փարիզի Էքոլ Նորմալ Սիւփէրիէօր: Այնուհետեւ, Գէյֆասթի մէջ, կարճ ժամանակի մը համար ուսուցչական պաշտօն վարելէ ետք, 1928ի աշնան վերստին կ'անցնի Էքոլ Նորմալ, իբրեւ անգլերէն լեզուի դասատու:

Այս ձեւով սկսած է իր կապը Փարիզի հետ, ուր ան հանդիպեցաւ ձէյմս Ճոյսի եւ շուտով անդամ դարձաւ անոր շրջանակին, խմբագրելով — դեռ 23 տարեկանին — փայլուն հեղինակ մը տարօրինակ այն գրքին, որ խորագրուած էր «Our Exagmination round his Factification for Incamination of work in Progress» ,անիկա հաւաքածոյ մըն էր 12 յօդուածներու, գրուած՝ 12 առաքեալներու կողմէ, որոնք կը մեկնէին Ս. Գիրքը եւ պաշտպանողական ասութիւններ կ'ընէին իրենց Տիրոջ մասին, որ դեռ Մեծ Փրկիչ չէր կոչուած: Գէքէքի յօդուածը, որ վերնագրուած է «Տանթէ···, Պրունօ···, Վիքօ···, Ճոյս» կը յորդի արուեստագէտի մը համար յատկանշական եղող բարձրը ներշնչումներով, ուր հեղինակը անհնար կ'անցնի այդ ներշնչումներուն ընթացքին շարահիւսուած բառերու բարդութեան մօտէն, ձեւով մը անտեսելով նաեւ ծոյլ տրամադրութիւնները հանրութեան, որ սահմանուած է միայն դիւրին բաներ ըմբռնելու:

«Անասնական ուղղակի արտայայտութիւնը անոր, — էջեր եւ էջեր —: Եւ ինքէ դուք, տիկիններ եւ պարոններ, չէք հասկնար զայն, ատիկա անոր համար է, որ զայն ընկալելու սահմանուած չէք եւ կը գտնուիք ցած մակարդակի մը վրայ: Դուք կը գտնուիք միայն ա՛յն ատեն, երբ գրութեան կառոյցը անջատուած ըլլայ պարունակութենէն եւ կարենաք հասկնալ մէկը՝ առանց նոյնիսկ միւսը կարգալու յոգնութիւնը յանձն առնելու: Արուեստի այս արագ, բայց միաժամանակ մակերեսային ըմբռնողութեան տրամադրութիւնը ծնունդ առած է երեւոյթ մը, զոր ես առանց վարանելու կ'որակեմ մըտաւորական լրծնաշրջութիւն: Կառոյցը, որ պարզապէս կոմոլին գրուող եւ անկախ երեւոյթ մըն է, սահմանուած է հասկնալի դարձնելու գրութեան մէկ երրորդը կամ մէկ չորրորդը կազմող մասնիկը միայն»:

Ասոնք են հիմքերը այն հաւատքին, զոր Գէքէք կիրարկած է գրողի իր ոգի կեանքի մէջ հաստատ համոզումով մը, որ նոյնիսկ սարսափազդու է իր բիւրեղութեան մէջ:

Հարրիէթ Շօ Ուիվըրի ուղղուած 28 Մայիս 1929 թուակիր նամակի մը մէջ, Ճոյս կը յայտնէ իր մտադրութիւնը Գէքէքի յօդուածը իտալական հանդէսի մը մէջ տպելու մասին: Նամակին մէջ, ան կը խօսի նաեւ դաշտադնացութեան մը մասին, որ կազմակերպուած է Ամրիէն Մոնրիէի կողմէ, նշելու համար Գլումբատէյի 25ամեակը: Այս առիթով, 27 Յունիս 1929ին, Վէրսայի մօտակայքը գտնուող Լէոփոլտ պանդոկին մէջ տեղի ունեցած է նաեւ ճաշկերոյթ մը: Ռիչըրտ Էլմանի կողմէ խմբագրուած Ճոյսի կենսագրութենէն կ'իմանանք, որ Փոլ Վալերի, Ժիւլ Ռոմանի, Լէոն Փոլ Ֆարկի,

digitised by A.R.A.R.@

Ֆիլիպ Սուփոյի եւ նման շարք մը ակնառու դէմքերու կողքին՝ Սամուէլ Պէքէթ եւս ներկայ եղած է յիշեալ հաշկերոյթին։ Նոյն այդ կենսագրութեան մէջ յիշուած է նաեւ, թէ հաշկերոյթէն վերադարձի ճամբուն վրայ, Պէքէթ ջղայնութիւն պատճառած է Փոլ Վալէրիի եւ Ատրիէն Մոնիէի, անընդհատ խնդրելով Ճոյսէն, որ կեցնէ պասը, խմիչք մը առնելու համար ճամբեզրի սրճարանի մը մէջ։

Առաջին անգամ Փարիզ բնակութիւն հաստատած չրջանին, Պէքէթ ինքզինք կը յայտնագործէ նաեւ իբրեւ բանաստեղծ՝ շահելով (10 փաունտ արժոյզ) մրցանակ մը։ Մրցանակը, որ իբրեւ պարտադիր նիւթ ունէր ժամանակը, ծրագրուած եւ կազմակերպուած էր Նանսի Կունարի կողմէ, որ միաժամանակ դատական կազմի անդամ էր՝ Ռիչրդա Ալտինկթընի հետ միասին։ Պէքէթի բանաստեղծութիւնը կը կրէր յանդուգն խորագիր մը՝ «Պոռնիկադէտ», ուր ան կը ներկայացնէ Տէքարթ փիլիսոփան, որ հաւերու, հաւկիթի, ժամանակի եւ ցնդումի շուրջ խորհրդածութիւններ կը կատարէ։ Այս առիթով կը հրատարակուի գրքոյկ մը, որ կը պարունակէր Պէքէթի շուրջ յայտնուած կարծիքներու հաւաքածոն եւ առնոր մրցանակ շահած բանաստեղծութիւնը։ «Գր. Սամուէլ Պէքէթի տղագրուած այդ առաջին գիրքը» լոյս տեսած է 300 օրինակով, 100 օրինակները ստորագրուած են հեղինակին կողմէ եւ որոնց համար իբրեւ գին նշանակուած է հատը 5 շիլին, իսկ մնացեալ 200 օրինակները անրատորագիր էին ու կը ծախուէին հատը մէկ շիլինի։

Այս միջոցին, Պէքէթ ինքզինք եւ իր նոր գտած բարեկամը՝ Ճոյսը, կը մխրճէր նոր աշխատանքի մը մէջ, Ֆրանսերէնի վերածելու համար «Աշխատանքը յառաջդիմութեան մէջ» անուն երկարաշունչ յօդուածի մը «Անն Լիվիա Փլիւրապէլ» հատուածը։ Այս աշխատանքը, սակայն, պիտի չամբողջանար Պէքէթի կողմէ, որովհետեւ ան ստիպուած պիտի ըլլար իբրեւ լեզուի ուսուցիչ անցնելու Տուպլին։ Հետագային, 1930 թուականին, Ճոյս եւ Սուփօ շարունակեցին եւ աւարտեցին Պէքէթի կիսատ ձգած թարգմանութիւնը։

Այս ժեւով, 24 տարեկան հասակին, Պէքէթի համար արդէն ապահովուած էր ակադեմական վարկ մը գրական ասպարէզին ներս։ Պէքէթ ստացաւ իր Մագիստրոս Արուեստի տիտղոսը՝ իբրեւ թեզ ներկայացնելով Փրուստի մասին ուսումնասիրութիւն մը, որ լոյս տեսաւ 1931ին, Լոնտոնի մէջ, առանձին հրատարակութեամբ, երբ ինք Փարիզ կը գրանցէր։ Անիկա Փրուստի ժամանակի հոտախուզութեան նուիրուած լայնածաւալ եւ խոր ուսումնասիրութիւն մըն է, ուր գայլիօրէն կը ցոլան նաեւ Պէքէթի հետագայ գրութիւններուն ընդգրկելիք թեմաները, — սեփականութեան անկարելիութիւնը սիրոյ մէջ եւ բարեկամութեան պատրանքը։ «...եթէ սէրը... դրսեւորումն է մարդուն տխրութեան, բարեկամութիւնը դրսեւորումն է անոր վախին եւ եթէ առանցքն ոչ մէկը կարելի է իրականացնել — նկատի ունենալով, որ անոնք «մտային պատնեշաբանութիւններ» չեն եւ անթափանցելի են — այսուհանդերձ, սեփականութեան մէջ արձանագրուած ձախողութիւնը կ'ունենայ ողբերգականին ազնուականութիւնը, մինչդեռ հաղորդակցելու փորձը, երբ ոչ մէկ հաղորդակցութիւն կարելի է, պարզապէս կը վերածուի գռեհկութեան կամ վախցողու երգիծանքին, որ կը ստացուի, երբ խենթ մը փորձէ խօսիլ կարուսիի մը հետ»։ Հետեւաբար արուեստագէտին համար «միակ կարելի հոգեկան ընդլայնումը կը կայանայ խորութեան իմաստին մէջ։ Արուեստի ձգտումը հեռու է տարածումէ, ընդհանրական, անիկա խիտ է։ Արուեստը աստուածացումն է առանձնութեան։ Ոչ մէկ հաղորդակցութիւն գոյութիւն ունի, որովհետեւ հաղորդակցութեան միջոցները, իրե՛նք գոյութիւն չունին»։ Հակառակ անոր, որ արտայայտուած այս գաղափարները պարզապէս Փրուստի մտքերուն բացատրողականներն են, եւ հակառակ անոր, որ Պէքէթ կը պնդէ, թէ ինք գրքոյկը գրած է իբրեւ

digitised by A.R.A.R.@

պարտականութիւն-թեզ, այսուհանդերձ, անուրանալի է ա՛յն իրողութիւնը, որ հոն տեղ գտած են Գէքէթի անձնական ապրումներն ու անոր ներաշխարհին ինքնուրոյն զգայնութիւնը։

Գէքէթի համար, որ զգաց, թէ սովորութիւնն ու կեանքի առօրեան խլիրդն են ժամանակին, թէ՝ ընկերային յարաբերութիւնները ժաս կը կազմեն միայն ցնորքին եւ թէ արուեստագէտին անհրաժեշտութիւնը կեանքին՝ ինքնին միայնութեան կեանք մըն է, վստահաբար համալսարանի դասախօսին միապաղաղ առօրեան պիտի թուէր անտանելի։ Տարբեր չէր կրնար ըլլալ արդէն, եւ Թրինիթի գոլէճին մէջ չորս շրջան անցընելէ ետք, Գէքէթ միանգամայն հրաժարեցաւ կեանքի տաղտկալի կրկնութիւններէն եւ ընկերային բոլոր պարտաւորութիւններէն, նման «Աւելի խայթոցներ, քան հարուածներ» անուն իր պատմուածքի հերոսին, Գէլաքրին, որ հակառակ իր թուլամարթ բնութեան, «զուսնազարդեց իր հիմնապաշտպանութեան վերջին հանգրուանը ա՛յն հատատքով, որ լաւագոյնը, զոր ինք կրնայ ընել, անդադրում շարժումն է ու տեղէ տեղ փոխադրութիւնը»։

Գէքէթ ատեն մը ապրեցաւ Թափառական կեանքի հրաչալիքները։ Բանաստեղծութիւններ եւ պատմուածքներ գրելով եւ սովորական գործեր ընելով՝ ան անընդհատ երթեւեկի մէջ եղաւ Տուպլինէն Լոնտոն եւ Լոնտոնէն Փարիզ, եւ Ֆրանսայի ճամբով հասաւ մինչեւ Գերմանիա։ Անկէ կարելի է հետեւցնել, որ Գէքէթի գրական հերոսները զուգադիպութեան մը բերումով չէ, որ եղած են թափառաշրջիկներ եւ զատարկապորտներ, այլ այդ հերոսներուն նկարագրին մէջ տկներեւօրէն կ'արտայայտուի զանոնք կերտող հեղինակին փորձառութիւնները եւ կեանքի հանդէպ անոր զգացած խորթութիւնն ու մենութեան տառապանքը։

«Աւելի խայթոցներ, քան հարուածներ» հատորը լոյս տեսած է Տուպլինի մէջ եւ ենթահող ունի նոյն քաղաքը։ Անմիջապէս անոր յաջորդող հատորը բանաստեղծութիւններու գրքոյկ մըն է, լոյս տեսած 1955ին, եւ խորագրուած՝ «Արմագանգի ոսկորները եւ այլ մրուրներ»։ Այնուհետեւ, Գէքէթի գործերը տպագրութեան կ'արժանանան նաեւ Լոնտոնի, Փարիզի եւ այլ մայրաքաղաքներու մէջ եւս։ Լոնտոնի մէջ Գէքէթի ապրած փորձառութիւնը խոր գրոշմ կը ձգէ նաեւ անոր առաջին երկարաշունչ պատմուածքին՝ «Մըրփի»ի (1938) վրայ։

Փարիզ հանդիպելու իւրաքանչիւր առիթով, Գէքէթ անպայման կ'երթար տեսնելու իր դրչի բարեկամ Ճոյսը։ Բիլլրտ էլման այսպէս կը նկարագրէ այդ հանդիպումները։

«Պէքէթ անսահման հակում ունէր դէպի սակաւախօսութիւնն ու լռութիւնը։ Նոյնն էր նաեւ Ճոյսի պարագան։ Անոնց խօսակցութիւնը յաճախ կը ստանար լայնածաւալ լռութեան մը ծանրութիւնը, որուն ընթացքին անոնք կը փոխանակէին թախծալից ակնարկներ։ Պէքէթ տրխուր էր աշխարհին համար, մինչ Ճոյս՝ ինքն իրեն համար։ Անոնք երկուքն ալ ունէին նստելու յատկանշական ոճ։ կը նստէին դէմ դիմաց, Ճոյս՝ ծալապատիկ, իսկ Պէքէթ իր երկար եւ ճկուն անդամներուն կը ֆանար տալ ընկերոջ նստելու դիրքը։ Կը պատահէր, որ Ճոյս յանկարծ հարցնէր այսպիսի հարցում մը։ «Ինչպէ՞ս կրնայ իտէալապաշտ Հիւմ գրել պատմութիւն մը», Պէքէթ կը պատասխանէր։ «Անոր գրածը կ'ըլլայ նկարագրային ու պատմողական արձակ»։

Նման հանդիպումներու ընթացքին էր գարձեալ, որ Գէքէթ Ճոյսին կը կարդար Ֆրիթց Մոհնըրի «Լեզուի ֆենոմենատութիւնը» անուն գործէն հատուածներ, ուր գրեթէ առաջին անգամ կը մատնանշուէր լեզուին ընձեռած անսահման կարելիութիւնները եւ զայն իբրեւ հաղորդակցութեան միջոց եւ աննիւթական գաղափարներ արտայայտող գործիք գործածելու դիւրութիւնը։ Բայց հակառակ անոր, որ Ճոյս կը սիրէր Պէքէթը, այսուհանդերձ, կ'ուզէր որոշ հեռաւորութեան մը վրայ պահել զայն։ Անգամ մը

digitised by A.R.A.R.@

ուղղակիօրէն ըսաւ անոր երեսն ի վեր. «Բացի ընտանիքէս, ես ոչ ոք կը սիրեմ»: Այս խօսքերը արտասանեց եղանակով մը, որ կը մատնէր հետեւեալը. «Ես ոչ ոք կը սիրեմ, նոյնիսկ՝ ընտանիքս»: Մէկ կամ երկու անգամ պատահած է, որ Ձոյս իր «Ֆինիկսի զարթնումը» անուն դրուագէն հատուածներ արտագրել տայ Պէքէթի: Հաւանաբար այս դէպքն է, որ հեռադային առիթ տուած է այն զրոյցներուն, ըստ որում՝ Պէքէթ եղած է Ձոյսի անձնական քարտուղարը: Իրականութեան մէջ Պէքէթ երբեք չէ ստանձնած քարտուղարական պարտականութիւն մը: Եթէ երբեւիցէ անձնական քարտուղար ունեցած է Ձոյս, ան եղած է Միմիքայն Փոլ Լէոնէ:

Բիշերտ էլմանն է դարձեալ, որ կը պատմէ Ձոյսի դժբախտ ազգկան՝ Լուսիային, Պէքէթի հանդէպ ունեցած սիրոյ պատմութիւնը: Պէքէթ սովորութիւն ըրած էր յաճախ Լուսիան տանիլ ճաշարան կամ թատրոն: Այդ շրջանին, արդէն Լուսիա ցոյց տուած էր ջղային անկայունութեան նշաններ: «Հետզհետէ իմքնագիտակցութեան զգացումը լմեց Լուսիան, որ սկսաւ նուազ ենիգ թափել՝ ծածկելու համար իր սէրն ու կիրքը. իմանալով իրեն հանդէպ Լուսիային ունեցած զգացումներուն մասին, Պէքէթ անհուն սառնասրտութեամբ կը մերժէ զայն, եւ որպէսզի ամէն յոյս եւ սպասում ջնջուի ադրկան սրտէն, չի վարանիր անոր յայտնելու, որ ինքնի կ'այցելէ զիրենքնի պարզապէս վայելելու համար Ձոյսի ընկերակցութիւնը: Հետագային, սակայն, Պէքէթ իր յայտնաբերած անխղճութեան մասին խոստովանած է Բէկի Կուկէնհայմին, յայտնելով անոր, որ այդ շրջանին ինքնի տեսակ մը մեռած էր եւ մարդկային ոչ մէկ զգացում կը թրթռար իր մէջ, որպէսզի կարենար սիրել Լուսիան»:

Աբուեսոի սիրահար եւ արդիական գծագրութիւններու հաւաքածոյ կազմող Բէկի Կուկէնհայմ, իր կարգին, քանի մը տարի ետք «անհունօրէն պիտի սիրահարուէր» Պէքէթի: Ան կը նկարագրէ Պէքէթը իբրեւ վայելուչ եւ խորապէս գրաւիչ երիտասարդ մը՝ բոլորովին անտարբեր իր շրջապատին. տարօրինակ զգացում մը, որ պատճառ կը դառնար անոր յանախ մինչեւ կէսօր անկողնին մէջ անցընելու: Կուկէնհայմ կը շեշտէ նաեւ, թէ դժուար էր Պէքէթի հետ խօսիլ, որովհետեւ «ան երբեմ աշխոյժ ու եռանդուն չէր, եւ ժամեր ու անհատնում խմիչք պէտք էր՝ կեանքի կոչելու համար իր խանդավառութիւնը եւ ունենալու՝ խոզազերծ Պէքէթ մարդը»: Ըստ Բէկի Կուկէնհայմի, Պէքէթ իր հերոսին Պէլաքքի նման «կ'ուզէ վերադառնալ սաղմնաթաղանթի մութութեան» եւ ճիշդ անոր պէս «ան իր մօր արգանդին մէջ ապրած է կեանքի դառն յիշատակներ, որոնք պատճառ կը դառնային սուր տառապանքի եւ տագնապներու, զինք հասցնելով մինչեւ շնչահեղձութիւն: Ան կը կրկնէր, որ կեանքը լաւ պիտի ըլլար օր մը, սակայն երբ ստիպուած ըլլար յստակ որոշում մը կայացընելու, կ'ուրանար իր բոլոր ընտանիքը»:

Այստեղ կարելի է ըսել, որ Պէքէթի եւ Բէկի Կուկէնհայմի յարաբերութիւնները տեսակ մը փոխարերաբար վերարտադրուած են Պէքէթի 1938ին հրատարակուած առաջին պատմուածքին՝ «Մբրֆի»ի մէջ, ուր կը նկարագրուին հերոսին՝ Հէրպերթ Ռիտի եւ անոր բարեկամուհիին՝ Սիլիայի փոխյարաբերութիւնները: Սիլիա անդադար կը թելադրէր հերոսին, որ դանէ կայուն աշխատանք մը, որպէսզի կարենան ամուսնանալ. հերոսը, իր կարգին, խոստանալով հանդերձ, ամէն անգամ կը թերանար նման քայլ մը առնելէ:

«Ազատարարը» խորագրով Պէքէթի առաջին թատերգութիւնը գրուած է Ֆրանսերէն լեզուով, պատերազմէն անմիջապէս ետք, սակայն ցարդ կը մնայ անտիպ, նաեւ՝ չէ ներկայացուած որեւէ բեմի վրայ: Այդտեղ, դարձեալ կը նկարագրուի երիտասարդի մը տագնապալից պայքարը՝ ինքզինք ազատագրելու համար իր ընտանիքէն եւ ընկերային պարտաւորութիւններէն: «Ազատարարը» կը ներկայացուի երեք արարներով: Բեմը կը բաժնուի երկու մասի: Աջին՝ հերոսը եր-

digitised by A.R.A.R.@

կընցած է իր անկողնին վրայ, բոլորովին անտարբեր եւ կրաւորական։ Զախին՝ անոր ընտանիքն ու բարեկամները կը խօսին անոր կացութեան մասին՝ առանց խօսք ուղղելու իրեն։ Ամբիճանաբար գործողութիւնը կը չեղի ժախէն դէպի աջ, եւ կամաց-կամաց հերոսը կը հաւաքէ իր ամբողջ ուժն ու կորովը, ինքզինք ազատագրելու համար իր կացութեան ապաստուկէն եւ ընկերութեան պարտաքրանքներէն։

«Մրրիկ»ն եւ «Ազատարարը» կը ցոլացնեն Գէքէքի ազատութեան եւ անձնական կեանքը ազատորէն ապրելու իրաւունքին փնտռտուքը։ Իրականութեան մէջ, Գէքէք Փարիզի մէջ գտաւ մշտական կեցութեան տուն մը։ 1937ին, ան Մոնպառնասի հեռաւոր մէկ անկիւնին մէջ վարձեց յարկաբաժին մը, ուր անցուց ե՛ւ պատերազմի, ե՛ւ յետ-պատերազմեան շրջանի իր օրերը։

Այդ շրջաններուն է ահռելիկ, որ Փարիզի մէջ շրջազայիլ սկսաւ զրոյց մը, որ կը բխէր Թերեւս նոյնինքն Գէքէքի գրականութենէն։ Ըստ այդ զրոյցին, Գէքէք Փարիզի փողոցներէն մէկուն մէջ սրախողխող եղած էր դատարկապորտի մը կողմէ եւ թոքէն վիրաւորուելով անմիջապէս փոխադրուած է հիւանդանոց։ Առողջանալէն ետք, ան գացած է բանտ՝ այցելելու համար իր ոճրագործին։ Գէքէք կ'ուզէր ոճրագործին բերնէն իսկ իմանալ անոր արարքին դրդապատճառը եւ կը ստանար հետեւեալ պատասխանը. «Ձեմ գիտեր, պարոն»։ Թերեւս ասիկա խօսքերն ու ձայնն են այն մարդուն, զոր մենք շարունակաբար կը լսենք Գէքէքի «Սպասելով Կոտոյին» եւ «Մոլոյ» թատերգութիւններուն մէջ։

1939ի Սեպտեմբերին, երբ կը պայթէր Համաշխարհային Երկրորդ պատերազմը, Գէքէք կը գտնուէր Իրլանդա, ուր գացած էր այցելութիւն մը տալու իր այրիացած մօրը։ Անմիջապէս կը վերադառնայ Փարիզ։ Պատերազմէն շատ առաջ, արդէն Գէքէք ժխտական կեցուածք ունէր Գերմանիոյ ընկերվար վարչակարգին դէմ, եւ ահա պատերազմի սկիզբը ան վէճի կը բռնուէր ոմանց հետ։ Վերջինը ենթադրութիւն եւ կործանիչ կը գտնէր պատերազմը, մինչդեռ Գէքէք կը տեսնէր պատերազմը արդարացնող կարգ մը շատ զօրաւոր եւ օգտակար ազդակներ։ Կրելով էյր շրջանի հպատակութիւն, Գէքէք յաջողեցաւ Փարիզի մէջ մնալ, նոյնիսկ ա՛յն առեն, երբ քաղաքը բռնագրաւուած էր գերմանացիներուն կողմէ։ Ան միացաւ դիմադրական շարժումին մաս կազմող խումբի մը եւ ապրեցաւ ստորերկրեայ կազմակերպութեանց գործիչներուն յատուկ արկածալից եւ վտանգաւոր կեանք մը։

1942ին, օգոստոսեան օր մը, երբ Գէքէք վերադարձաւ Փարիզի իր յարկաբաժինը, հոն գտաւ բացիկ մը, որ կ'իմացրնէր դիմադրական շարժումի անդամներէն մէկուն ձերբակալութիւնը։ Գէքէք անմիջապէս կը ձգէ իր տունը եւ փախուստ կու տայ դէպի ազատ գօտի՝ Ուինիոնի մօտ գտնուող Վօքլիւզ գիւղը, ուր գիւղացի ընտանիքի մը մօտ աշխատանք կը ճարէ՝ իբրեւ երկրագործ։ (Վօքլիւզ գիւղի մասին յիշատակութիւն մը կայ «Սպասելով Կոտոյին» թատերգութեան ֆրանսերէն բնագրին մէջ, ուր Վլատիմիր կը պնդէ, թէ էսթրակոն ծանօթ է Վօքլիւզ անուն գիւղին, մինչ էսթրակոն հիմնովին կը ժխտէ ծանօթ ըլլալ որեւէ տեղի, բացի այնտեղէն, ուր կայնած է այդ վայրկեանին — Մերտէքլիւզէն։ Նոյն թատերգութեան անգլերէն բնագրին մէջ Վօքլիւզը փոխարինուած է Մաքոն անուն քաղաքով, իսկ Մերտէքլիւզը կոչուած է Ֆաքոն)։

Գրականութեան մթնոլորտէն չհեռանալու համար, Գէքէք, իր երկրագործական աշխատանքներուն առընթեր՝ կը սկսի գրել վիպակ մը՝ «Ուաթ», ուր կը նկարագրէ առանձնութիւն փնտռող տարօրինակ տիպար մը, որ իր թափառումներուն ընթացքին կը պատսպարուի պր. Նաթ անունով քահանայ եւ խորհրդաւոր հողատիրոջ մը մօտ։ Մենք պիտի տեսնենք, որ հետագային պր. Նաթի նկարագրէն շարք մը ցայտուն գիծեր պիտի վերացուին Գէքէքի այնքան նշա-

digitised by A.R.A.R.@

նաւոր հերոսին՝ պը. Կոտոյի ներաչխարհին մէջ։

Փարիզի ազատագրումէն անմիջապէս ետք, Գէքէթ կարճ ժամանակի մը համար կը մնայ Փարիզ, ուրկէ կ'անցնի Իրլանտա՝ իբրեւ կամաւոր մաս կազմելով Կորմիր Խաչի միութեան մը։ Ցրանսա կը վերադառնայ 1945ի աշնան։ Հոն, Սէն Լոյի հիւանդանոցին մէջ, առեն մը կ'աշխատի իբրեւ մատակարար եւ պահեստապետ եւ, վերջապէս, ձմրան կը վերադառնէ Փարիզի իր յարկաբաժինը, որ անաղարտ եւ ապահով զինք կը կանչէր իր մտերմութեան։

Տուն վերադարձը, Գէքէթի համար պիտի ըլլար գրական բեղունութեամբ յատկանշուող շրջանի մը սկիզբը. անմնատուր ստեղծագործական տագնապալից եւ ուժական տենչի մը, Գէքէթ հինգ տարիներու ընթացքին պիտի արտադրէր յաջորդաբար վեց երկեր. երկու թատերգութիւն՝ «Սպասելով Կոտոյին» եւ «Ուարտախաղ» եւ երեք վիպակ՝ «Մոլոյ», «Մոլոն կը մեռնի» եւ «Անանուանելին». նաեւ անտիպ ուրիշ վիպակ մը՝ «Մերսիէ եւ Քամիէ»։ Ասոնցմէ զատ եւ ասոնց հետ միասին՝ «Պատմութիւններ եւ անկապատակ գրութիւններ» խորագրին տակ՝ Գէքէթ լոյս կ'ընծայէ շարք մը կարճ պատմուածքներ եւ արձակ էջեր։ Այս բոլորը, որոնք պիտի զատնային Գէքէթի համբաւին երախայրիքը, կը կրեն իրենց ժամանակի խոր դրոշմը եւ գրուած են ֆրասերէն լեզուով։

Ասիկա հետաքրքրական երեւոյթ մըն է, որ յատկանշական կը դառնայ Գէքէթի պարագային։ Ի հարկէ, կան շարք մը գրողներ, որոնք վարկ ու համբաւ ապահոված են՝ գրելով իրենց մայրենի լեզուէն տարբեր լեզուով մը։ Բայց այդ գրողները ունեցած են իրենց յատուկ պատճառներ, որոնք մղած են զիրենք այդ երկրորդ լեզուին ընտրութեան։ Եղած են գրողներ, օրինակ, որոնք աքսորուած են իրենց հայրենիքէն եւ բռնի հրաժարած են իրենց մայրենի լեզուէն, խզելով բոլոր այն կապերը, որ զիրենք կը կապէ հայրենիքին։ Ուրիշ գրողներու պարագային, մայրենի լեզուն սեփականութիւնը եղած է սահմանափակ ընկերութեան մը եւ կամ փոքր ազգի մը, մինչ գրողները իրենք ուզած են իրենց պատգամը հասցնել ժողովուրդներու լայն զանգուածներուն։ Նման պարագայի մը, օրինակ, չատ հասկնալի է ռումանացի կամ տանրմարքացի գրողի մը ֆրանսերէն կամ սնգլերէն լեզուն ընտրելու շարժառիթը։ Այս պատճառները, սակայն, հեռու են Գէքէթի իրականութիւնը ըլլալէ։ Գէքէթի մայրենի լեզուն անգլերէնը իր օրերու համաշխարհային հաղորդակցութեան ամէնէն տարածուն լեզուն էր։ Գրագէտը, սակայն, ֆրանսերէնը ընտրած է՝ գրելու համար իր գլուխ-գործոցները, պարզապէս անոր համար, որ ան հաւատացած է սորվելի լեզուի մը բերելիք պարտադրանքներուն, որոնք անհրաժեշտ են եւ միաժամանակ օգտակար՝ գրականութեան եւ անոր յաջողութեան։ Այս առիթով է,որ Գէքէթ պատասխանելով ֆրանսերէն լեզուի իր գործածութեան մասին ուղղուած հարցումի մը, կ'ըսէ. «Որպիսեսեւ, ֆրանսերէն լեզուով աւելի դիւրին է գրել՝ առանց ոճի զործածութեան»։ Ըսել ուզած է պարզապէս, որ գրագէտը մայրենի լեզուի գործածութեան առեն ենթագիտակցաբար կը մղուի ոճային դարձուածքներու եւ բառախաղերու գործածութեան, մինչ օտար լեզու մը գործածելու պարագային, ան մեծապէս ուշադրութիւն պիտի դարձնէ անընթալ արտայայտելու վերջինը, որ, իր կարգին, սեթեւանքներէ եւ սճային տարտամութենէ պիտի փրկէ գրութեան լեզուն։

(Շար. 1)

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

digitised by A.R.A.R.@

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

ԵՔԷ չենք սխալիր, այս երկրորդ տարին է, որ «Գրական թերթ»ի խմբագրական կազմը մրցանակ կը շնորհէ տարբեր բնագաւառներու վրայ ուշագրաւ գործեր ստորագրած իր աշխատակիցներուն։

1972 տարեշրջանի բերքին կապակցութեամբ, իր այս տարուան թիւ 9ին մէջ խմբագրութիւնը հրատարակութեան տուած է հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Գրական թերթ»ի խմբագրական կոլեգիան թերթի 1972 թուականի մրցանակները շնորհեց.

1. *ԱՂԱՍԻ ԱՃԵՄԱՋԵԱՆԻՆ՝ «Բոլերո» (№ 1) եւ «Զիներին յատկացուած ճանապարհը» (№ 15) պատմուածքների համար։*
2. *ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆԻՆ՝ բանաստեղծական շարքի համար (№ 21)։*
3. *ՀՐԱՉԵԱՑ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ՝ «Բարձրաձայն խոհեր» (№ 9) յօդուածի համար։*
4. *ՍԵՐԳԷՅ ՍԱՐԻՆԵԱՆԻՆ՝ «Քննադատութեան գլխաւոր ուղղութիւնը» (№ 12) յօդուածի համար։*
5. *ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆԻՆ՝ «Տասնինը դար եւ տասնինը տարի» (№ 38) եւ «Մեր նոր, մեր բարի ճանապարհները» (№ 13) ակնարկների համար։*
6. *ՌՈՒԲԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ՝ Ռ. Արամեանի «Թագաւորի եօթ խնձորները» (№ 21), Ա. Սեկոյեանի «Տասնուչ կարատանոց քարը» (№ 17) եւ մանկական էջի (№ 14) ձեւաւորման համար։*

Հաղորդագրութիւնը այս է։ Եօթը գործ, բանաստեղծութիւններու շարք մը, վեց դէմք, վեց մրցանակ։

Գեղեցիկ պիտի ըլլար հարկաւ մէկտեղել պարգեւատրուած գրութիւնները եւ, բաղդատութեան հաճելի աշխատանքին համար՝ անոնց կողքին տալ համապատասխան ուրիշ նմոյշներ, բայց ատիկա հնարաւոր չէ, հնարաւոր եղաւ միայն բանաստեղծութեան պարագային։ Առ այդ, պսակուած շարքին (Մարօ Մարգարեան) հետ իրենց հրատարակութեան թուականներուն կարգով կու տանք նոյն տարեշրջանին եւ միւնոյն շարաթաթերթին մէջ լոյս տեսած Համօ Սահեանի, Վահագն Դաւթեանի եւ Ռաֆիկ Դաւոյեանի բանաստեղծութեանց շարքերը։

Իր ընտրութեան մէջ՝ արդար եղա՞ծ է արդեօք «Գրական թերթ»ի խմբագրութիւնը։

Բանաստեղծութիւն ըսուածը կարկառող կենսատու տարրերը, — գիւտը, անակնկալը, թարմութիւնը, թռիչքը, սուղումը, ներքին հրավառութիւնը, վարպետութիւնն ու մնացեալները գերազանց չափով մը Մարգարեանի տողերուն մէջ յայտնուած են միայն, թէ միւսները եւս, մեղմ ասած՝ նոյնքան արժանիքներ կը բովանդակեն։

Հարցումը կը դնենք եւ պատասխանը կը ձգենք ընթերցողին։

digitised by A.R.A.R.@

■

Երբ գիւղից քաղաք եկայ,
Փէշերս մղեղոտ էին,
Ճակատս Միր-Կաթինոտ,
Ոտքերս դեռ հողոտ էին, —
Ամբոխն ինձ առաւ իր մէջ
Ու տարաւ չգիտեմ թէ ուր,
Փնտռեցի ու չգտայ,
Աչքերս ինձ կարօտ էին:

Վերջապէս մի օր տեսայ՝
Երգերիս մէջ էի լալիս,
Կարծես թէ Է՛լ տեղ չկար,
Ձեռքերիս մէջ էի լալիս,
Որպէսզի ուրախ անցնեն,
Արցունքս չտեսնեն մարդիկ,
Սրտիս մէջ, ցաւերիս մէջ,
Վէրքերիս մէջ էի լալիս:

Եւ հիմա ո՞ւր եմ եւ ի՞նչ...
Ինձ յիշող ու լացող չկայ,
Իմ առաջ դուռ չի բացուում,
Եւ դուռս էլ բացող չկայ:
Թող այդպէս լինի, ոչինչ,
Միայն թէ չգան ու չասեն.
— Խօսքիդ մէջ ինքն իր սրտի
Տրոփիւնն զգացող չկայ:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

■

Գառների մայուն բլուրներն ի վար,
Կալերից փախած մղեղոտ քամի,
Մութի հոտ առած մի տագնապահար
Երամի ծիւ-ծիւ... Ու զանգեր ժամի:

Էլ բան չեմ յիշում: Օրն անցաւ գնաց:
Թող օրհնութեանդ լինեմ արժանի,
Դաշտից, արտերից, կալերից եկած
Արդար յոգնութիւն իրիկնաժամի:

■

Անիւնս տարէք
Մի հեռո՛ւ, անշուք գերեզմանատուն
Եւ մի անտաշ քար դրէք իմ հողին,
Որ սիրահարուած մղեղներն արթուն
Արեւոտ աչեն այդ քարի կողին,
Տաքանան, սիրեն, համբուրեն իրար,
Մի բան հասկանան աշխարհի բանից...
Ու երբ հեռանան զոհացած, ուրախ,
Իրենց մտքի մէջ ողբերգի տան ինձ:

■

Մէկի համար յոյսի
Սուսիկ-փուսիկ առու,
Մէկի համար քախտի
Զրադաց եմ եղել:
Մէկի խիղճն եմ եղել
Ու հաւատը բարու,
Մէկի համար մտքի
Աւուր հաց եմ եղել:
Ուր գնացել, մարդիկ,
Հոգի ունեմ տալու,
Ձեր մորմոքներն իմ մէջ
Անթեղած եմ եղել...
Հիմա ասէք տեսնեմ
Ո՞վ է վրաս լալու,
Լացողներիս վրայ
Վաղուց լաց եմ եղել:

(«Գրական թերթ», 1972, թիւ 6)

digitised by A.R.A.R.@

■

Եւ ահա կրկին ցաւոտ մի թախիծ
Գալիս է անտես ու ինձ ողողում:
...Եւ կրկին քո սեւ թաւիշի տակից
Սպիտակ ուսդ է ճնշելիորեն շողում:

Շողում են կրկին աչքերը քո ջինջ,
Որ ասես մոլոր զիշերներ լինեն,
Եւ այդ աչքերից լուռ նայում է ինձ
Մեզաւոր ու սուրբ այն Մագթալինէն:

Դու ո՞ւր ես հիմա... Քայլերդ թեկուն
Որտե՞ղ են երգում մեղեդին այն տաք,
Ո՞ւմ ուսերին ես գլուխդ թեքում՝
Իբրեւ ճնշելիորեն յոգնած հպատակ:

Եւ քո աչքերը ո՞ւմ են ցոլանում
Մեզաւոր ու տաք մի առաւօտով,
Եւ ո՞ւմ են այրում մատները քո նուրբ
Իրենց ընտանի ու թաքուն տօթով:

...Ու ես ուզում եմ մինչեւ վերջ հարբել,
Ու ես ուզում եմ այսօր խենթանալ,
Խանդի մրուրը մինչեւ վերջ պարպել
Եւ գալ հոգմի հետ, քո դուռը բանալ:

Մտնել հոգուդ մէջ, խառնել ամէն ինչ,
Քեզ նորից անել հեզ ու հպատակ,
Եւ արցունք տեսնել աչքերին քո ջինջ,
Եւ արցունք տեսնել ձեռքերին իմ տաք...

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

■

Աշխարհի բոլոր ճանապարհներից
Ամենաերկար,
Տանջալին է նա
Եւ բաղձալին է, սակայն, ամէնից:

Անխօս հայեացքի
Առեղծուածից է նա սկիզբ առնում
Եւ յետոյ՝ մշուշ,
Եւ յետոյ՝ թախիծ...

Այդ ճանապարհին
Գլխապտոյտ կայ վիհ ու անդունդի
Եւ կայ խոստումի
Մենաւոր ծաղիկ՝
Գլխապտոյտի եզերքին բուսած:

Եւ ծով կայ մթին,
Որ մակընթացում լուսնկայի տակ,
Ալիքի ձեռքով յակինթ է բերում
Ու նոյն պահին էլ
Ետ տանում դէպի խորքերն իր խաւար:

Այդ ճանապա՞րհը...
Եւ կարող է նա
Քեզ ուտաբոքիկ տանել ծովերի
Կապոյտ ջրերով
Ու քո դէմ բացել կզգիներ անյայտ,

Ուր անյայտ գոյներ,
Անյայտ ծաղիկներ,
Հաւքեր կան անյայտ...

Այդ ճանապարհը
Խորհրդաւոր է ու գիւտ
Եւ արեան թախիծ,
Որ շատ է նման
Վայրի հաւքերի թախծութեանը հեզ:

Անխօս հայեացքի
Առեղծուածից է նա սկիզբ առնում
Եւ ձգւում մինչեւ
Խոստովանութեան հրաշքը վերին:

Ես կարոտե՞լ եմ այդ ճանապարհին...

digitised by A.R.A.R.@

■

Լուսաբացին, երբ քնատ քո ձեւերն են նուագում,
Մարմինդ ի վար տաք հողի շնչառությունն է խաղում:

Ու երբ նկնում ես զարթնած, նետում քողը քո հագի,
Քեզ հետ զարթնում է ասես քնած շունչը կրակի:

Հողի պէս սուրբ ու բեղուն ես կրակի նման նենգ,
Դու՝ յայտնություն հրաշքի, տառապանքի դու օրենք:

Դու՝ առաջին ձնծաղիկ՝ տրուած լոյսին ու քամուն
Ես շուրթերս արիւնոտ անապատի դու սամում...,

Դու՝ հաւատի մաքրություն ու մեղաւոր դու հերձուած,
Դու՝ մեկնելի մեղեդի ու սեպագիր առեղծուած:

Դու՝ գալատեան բեկրություն ու կարօտի տուայտանք,
Որ չի մտնում չափի մէջ ու չի ընկնում հանգի տակ:

Շրթունքներս ճաքճքող ծարաւի դէմ ու քաղցի՝
Հազարդություն դու գինու, հաղորդություն դու հացի:

Քեզ եմ գալիս ես անվերջ ծարաւս ու քաղցս առած,
Ես արիւնն իմ հնամեայ ծնկաչոք է քո առաջ...

■

Զարթնում է նորից խռովքն իմ վայրի...
Զգում եմ... Դո՛ւ ես... Գալիս եմ խաղաղ,
Դու՝ գիշերային շողուն խաւարի
Ես արշալոյսի լուսեղէն շաղախ:

Ասես գալիս ես այլ ժամանակից,
Գալիս մոգությամբ մի անհնարին,
Ես թարթիչներիդ թախծությանն տակից
Քնքշանքն է նայում, խառնուած չարին:

Այլ աշխարհից ես բերում դու ասես
Քո շրթունքների հեզնանքը տանջող,
Բարակ իրանիդ բեկումը այդ հեզ
Ես հմայքներդ նուրբ ու ճահճջող:

Գալիս ես, որ քեզ լոկ հեռուից շնչեմ,
Որ մտքով անգամ ես քեզ չքանամ,
Քո մաքրությանն դէմ այսպէս երկնչեմ
Ու կարօտիդ դէմ այսպէս սրբանամ:

Այլ աշխարհից ես գալիս դու ասես,
Բերում այս դողը, ծարաւն այս վերին,
Ես հայեացքիդ տակ հաւատում եմ ես
Սիրուց մեռնելու առասպելներին:

digitised by A.R.A.R.@

■

Ես չկանչեցի, դու ինքդ եկար,
Եկար ճագանքիդ բեկումով փխրուն,
Եւ թարթիչներիդ թախիծը թեքած,
Նստում էիր լուռ ու ինձ հետ տխրում:

Ու թե, որ կեանքում զատել գիտէի
Ե՛ւ մեղքի շռդքը, եւ սէրը արդար,
Քո աչքերի դէմ կարկամում էի
Եւ անզօր էի հայեացքդ կարդալ:

Մերթ դողում էր նա իբրեւ սեւ արցունք,
Մերթ վառում թաքուն ու կանչող լոյսեր,
Դու՝ ոտից գլուխ մի խրթին հարցում,
Դու՝ ոտից գլուխ տառապանք ու սէր:

Եւ ինչո՞ւ եկար, ի՞նչ էիր ուզում,
Ինչո՞ւ հեռացար... Չգիտեմ ոչինչ:
Եւ հիմա հեռուից տենդօրէն յուզում,
Այրում են հեռուից աչքերը քո ջինջ:

Քեզնից մնացած այս թախիծը խոր
Մթնով զարթնում է ու լուռ հեծեծում...
Նա քո՞նն է նաեւ, նա մանուկ է որբ
Ու որբի նման քո դուռն է ծեծում:

(«Գրական թերթ», 1972, թիւ 11)

digitised by A.R.A.R.@

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Փշատենու թախիծ
Իջնող արծաթ-արծաթ,
Ու տխրություն դատարկ
Ճանապարհի...
Դեղին,
Դեղին,
Դեղին
Ննջող արտեր արդար,
Ու մի թռչուն մենակ
Կանգնած քարին:
Եւ անուններ շքեղ,
Ժամանակներ նշող,
Թողած հողին խոնաւ
Ու խուչքարին:

■

Եւ օդի մէջ փայլփլեցին
Դեռ չպազած սէրերի տաք
Ցիշատակներ.
Ու շատ հեռուում
Լաց եղաւ մի
Փոքրիկ աղջիկ.
Եւ ծառերը առաւօտեան
Ծաղկեցին մի ակնթարթում:

■

Իսկ դու այդպէս խուլ ձեռացիր
Ու տուր համուն,
Ինչի համար արեգակն է
Ելնում շքեղ ովկիանոսից.
Ինչի համար գարունները են
Շողում շռայլ.
Ինչի համար ոսկէ գամերն
Անծայրածիր կապոյտների
Հրկիզում են ու աստղանում,
Եւ պտտւում շուրջը իրենց.
Ու աստղային միջուկներն են
Պայթում հեռու անհունների մէջ
Ու տարածւում մշուշ-մշուշ
Ինչի համար տանարներն են
Երկնասարսուռ
Մարդիկ ձօնել,
Ինչի համար աստուածներ են
Մեզ յորինել.
Ինչի համար ոչինչ կեանքում
Չի կարող քեզ փոխարինել:

■

Շառաչում են ալիքները,
Խոր դարերից
Բերած մի վէճ
Ու յոգնաշաղ աստղեր ճերմակ
Կաթկթում են ծովերի մէջ.
Արեգակն իր
Կանաչ-կարմիր
Խարիսխներն է վերից կախում,
Ճայը լոյսն է
Ճերմակ թեւի
Կապոյտների մէջ թաթախում.
Ի՞նչ է եղել հեռուներին,
Ի՞նչ է եղել՝
Ո՞վ է այնտեղ
Երջանկութեան դուռը թակում:

digitised by A.R.A.R.@

■

Մի խոսք, մի բառ,
Կէս մի ժպիտ,
Եւ ովկիանոս մի խնդութիւն...
Որքան փիչ է հարկաւոր քեզ,
Անհունութիւններով լեցուն հոգի,
Եւ ո՞վ է որ
Այդ մի փիչը քեզ չի տալիս —
Ձիւն է գալիս
Ծաղիկներիս վրայ ճերմակ,
Ձիւն է գալիս:

■

Այս գարունն այնպէս
Դժուար է գալիս,
Դժուար է գնում
Այս գարունն այնպէս:
Ծաղկաբերքերիդ եղեամ է դնում,
Ու հոգուդ վրայ անճկատ ձիւնում —
Դժուար է գնում
Այս գարունն այնպէս:
Ինչ-որ մի անյայտ ցաւ է որոճում,
Ինչ-որ մի դժուար դաւ է յօրինում —
Այս գարունն այնպէս դժուար է գալիս,
Դժուար է գնում
Այս գարունն այնպէս:

■

Եւ ամպերի մութ փէշերին
Շուլալուեցին
Կայծակների թելեր ճերմակ:
Ու ո՛չ մի շուք,
Ո՛չ մի շշուկ՝
Հեռուում կորած սէրերի պէս,
Խորքում լռած սէրերի պէս,
Արեւիրիմներ փակած հոգում
Ու լուռ մարած սէրերի պէս:
Լոյսի գծեր լոկ մնացին
Հողմահալած
Ու հոգմածին,
Մէկ էլ հեռուում մի ծուխ մնաց,
Ու կապոյտին մի թուխ մնաց
Հեռուում մարած,
Խորքում լռած՝
Անսէր կորած սէրերի պէս:

■

Դու լռութիւնը գերադասեցիր
Եւ ինչ-որ թերի,
Անբմբռնելի
Խօսքեր ասացիր՝
Ինքդ քեզ համար,
Իրր թէ նրանք չեն վերաբերում
Ոեւէ մէկին:

Ու հեռո՛ւ-հեռու
Հորիզոնի պարզ լուսածիրի մէջ,
Ուր միանում են
Երկինք ու երկիր,
Քայլում է մենակ
Մտահոգ մի կին:

■

Լերան կապոյտ լեռակ գծագրի վրայ
Անճառագայթ կարմիր արեգակը իջաւ,
Ու լցուեցին ծաղկանց բաժակները գաւեղ
Տխրութիւնով կապոյտ
Ու կարմրաւուն մութով,
Ու ծխացին խամրող սէրերն անյիշատակ,
Ու լցուեցին տխուր հոգիները յոգնած
Աստուածների վաղուց կորած գութով:

■

Կապոյտների ծիրում
Երազները մեռան.
Կայծակում են վերջին
Սէրերն անարեկած
Ու հանգչում են ճերմակ
Կատարներին լերան:
Մոգութիւններն ամէն
Ու հրաշքներն անցան,
Մեխենային շիկնած
Ու մետաղէ լարին...
Ես ձեզ ինչո՞վ յիշեմ
Ու համակեմ ինչո՞վ,
Աներազ է հոգիս
Ու անսէր է տարին:

digitised by A.R.A.R.@

■

Քամին, քամին ծառերի
Հալած ոսկին է տանում,
Որոնց գինը աշխարհում
Մանուկները գիտեն լոկ,
Մանուկներն են հասկանում
Եւ նրանք, որ կրծքի տակ
Մանկան սիրտ են պահել դեռ:

Քամին, քամին ծառերի
Հալած ոսկին է տանում,
Հրաշք-հրաշք ձեւերով,
Թերթեւ, լուսեղ ու բարակ
Եւ այնքան թանկ, հասարակ·
Եւ նրանց լուռ ափերին,
Դալուկ տխուր ափերին
Կնիքներ կան աստղերի:

Աշուն· ինչո՞ւ եմ այսպէս
Կրակներով անկրակ
Ու խեղդուելով քեզ տանում·
Այսպէս ելած ինձանից,
Այսպէս կալած ինքս ինձ,
Աշուն· ինչո՞ւ եմ այսպէս
Ես քեզանով խենթանում:

■

Տխրութիւններ մարմանդ,
Մեղմութիւններ մշուշ,
Խենթութիւններ դալար
Ու կարօտներ բարի,
Վերադարձէ՛ք նորից,
Վերադարձէ՛ք:
Օդը պաղ է ու սուր,
Ցապաղում է տարին,
Ձիւն ու ծաղիկ շաղուած
Մնացել են քարին:
Եկէք հանդարտ-հանդարտ,
Եկէք ալիք-ալիք
Ու ձեզանով մեղմէք
Խստութիւնը դարի,
Վերադարձէ՛ք նորից,
Վերադարձէ՛ք:

(«Գրական թերթ», 1972, թիւ 21)

digitised by A.R.A.R.@

■

Ես պիտի գնամ հեռաւոր մի տեղ՝
Մօտիկ մի սիրով ապաքինուելու,
Ես պիտի ինձ հետ առնեմ քեզանից
Եւ հետ պիտի գամ՝ նորից գնուելու:

Ես-պիտի գնամ հեռաւոր մի տեղ,
Մշուշի նման փափուկ ու անձայն,
Մի կապոյտ ծովի ալիքների տակ
Ես պիտի ճօնուեմ որպէս ծիածան,

Որպէս ծիածան, կամ որպէս նրա
Արտացոլանքը ջրերի խորքում:
Եւ ջրերի մէջ ես պիտի լողամ,
Եւ պիտի շողամ կապոյտ երկնքում:

Պիտի ամէն ինչ մոռանամ մի օր,
Պիտի ամէն ինչ լքեմ անվարան,
Իմ հոգին պիտի մաքրեմ ախտերից,
Որ դառնամ միայն սիրոյ տաղարան:

Պիտի աչքերիս մշուշը լուամ
Մատներով անուշ արշալոյսների,
Եւ ինձ իմ ձայնը իմ անդունդներից
Իմ բարձունքներով վեր պիտի հրի:

Եւ յուշդ այնքան մօտ պիտի լինի,
Այնքան ցանկալի, այնքան իրական,
Որ ամէն վայրկեան ես պիտի լինի
Իմ ապաքինման զգուալից վկան:

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

Եւ այնքան քնքուշ, որ ես ցանկանամ
Դառնալու կրկին ստրուկը քո հեզ:
Կարօտներս ամբողջ բոցավառելով,
Կրկին որպէս զոհ նուիրեմ ինձ քեզ:

Ես պիտի գնամ հեռաւոր մի տեղ՝
Մօտիկ մի սիրով ապաքինուելու.
Ես պիտի ինձ հետ գնեմ քեզանից,
Եւ հետ պիտի գամ նորից գնուելու:

Այս առուծախի գաղջ մթնոլորտում
Արարիչն այս «իրն» ինչո՞ւ ստեղծեց,
Սրբազործելով սիրոյ մէջ նրան,
Կարօտի անբոյժ ախտերով եղծից:

■

Սուտ էր տառապանքն իմ համբ ու
թաքուն,
Սուտ էին բոլոր երազներս խեղճ,
Սուտ էին բոլոր գիշերներս անքուն՝
Սու-սու նիզակներ՝
Մխրճուած իմ մեծ երջանկութեան մէջ:

Սուտ էր հայեացքիդ տրտմութիւնն
անքոդ,
Եւ կարօտներիս տագնապն անանուն,
Ձերմակ ձեռքերիդ սրսփումը խուլ,
Եւ շրթունքներիդ մրմունջներն անհուն:

Սուտ էին, չկար ու չէին եղել,
Ախ, մի՞թէ սուտ էր ամէն ինչ, սէ՛ր իմ,
Մի՞թէ յաւիտեան տանջանքը թիւրոց
Դամբան է դառնում նրանց յոյսերին:

Աշխարհում միլիոն ստեր կան, որոնց
Հարկաւոր են ճիշդ բոյն ու օրօրոց:

Ցաւը խնդութեան դռներն է թակում
Եւ բոյն է դնում երջանկութեան մէջ,
Նրա սաղմերը աշխարհ են փոխում,
Ապականելով մեր թախտը անվերջ:

digitised by A.R.A.R.@

Աշխարհում միլիոն սուտ ցաւեր, որոնց
Հարկաւոր են ճիշդ բոյն ու օրօրոց:

Սուտն ամէն վայրկեան հետեւում է, որ
Ճշմարտութիւնը իրեն օրօրի·—
Ճշմարտութիւնը՝ մի վայրկեան, մի օր,
Ցաւերծ ու ճիշդ է սուտը բոլորի:

Եւ համատարած այդ ստի տակից
Ճշմարտութիւնն է ցաւի պէս ծագկում·—
Սուտ էին բոլոր տագնապներս անէն,
Սուտ էին բոլոր գիշերներս անքուն:

■

Աշխարհը լիքն է կործանումներով,
Աշխարհը լիքն է տագնապով վայրի,
Մարդաբիրուքեան խենթ սամումներով
Մարդիկ քանդում են տունը աշխարհի:

Բառը տանջանքից խուլ թփրտալով
Արիւնոտուում է շուրթերին իմ տոք,
Երբ որ տեսնում եմ՝ մագիլ է պահուած
Իրար գուրգուրող աղաւնիների
Փետուրների տակ:

Ցիրաւի, ե՞րբ է սկսուել անվերջ
Այս խառնուրդիւնը,
Մարդը իր ցաւը ե՞րբ է ճանաչել:
Տանջանքը գուցէ ծնունդ այն պահի՞ն,
Երբ համր շունը սովորեց հաչել:

Եւ սովորելու յաջորդ վայրկեանին
Նա իր հաչոցի վրայ էր հաչում,
Եւ հաչոցները խառնուեցին իրար,
Ոչ ոք իր ձայնը չի էլ ճանաչում:

Առաջին վիշտը աշխարհի վրայ
Չէր կարող մենակ, ուզում էր ընկեր,
Նրա մէջ վշտի տենչանքն էր հոսում·—
Վշտերի հօտը քշում ենք հիմի
Դէպի անոռնուն, անսահման հեռուն:

Եւ այդ վշտերի անսահման հօտին
ՏԷՐ իմ, ինչ տանջանք, Կայէնն է
հովիւ·—
Եւ կայ մի վիշտ էլ, որ այդ Կայէնին
Գիտենք Աբէլի մահուան շնորհիւ:

Շօշափեմ ձեռքով եւ տեսնեմ աչօք,
Որ իմ մէջ չկայ արնադաւ Կայէն,
Մոլեռանդօրէն իջած ծնկաչոք
Գոգանեմ երկիր, առ Աստուած հայեմ:

(«Գրական թերթ», 1972, թիւ 40)

digitised by A.R.A.R.@

ԼՈՒՌ ՈՒ ԼՐԻՒ ԹԺՈՒԱՌՈՒԹԻՒՆ

Մինչեւ սերունդի երկու գրողներուն կողմէ ստորագրուած հեռագայ երկու գրութիւնները ուղղակիօրէն Բագինեանի տրամադրուած չեն։ Անոնք առաջին անգամ լոյս տեսան Գոսթընի «Հայրենիք»ին եւ Պէյրութի «Ազգաց»ին մէջ ու շրջեցան թերթէ թերթ ու երկրէ երկիր անգամ մը եւս պատմելու այն վրդովմունքը, զոր ունեցաւ ամէն հայ՝ ի լուր Նշան Պէշիկթաշլեանի մահուան ու թաղման պարագաներուն։

Մեր գրողներուն կենսագրութեան մէջ տխուր բաներ շատ կան, բայց տխրագոյնը տեղի ունեցաւ դարձեալ Նշան Պէշիկթաշլեանի առիթով, մարմինը հոգին յանձնուած պահուն։

Երգիծագիր էր ողբացեալ գրագէտը, եւ իրր այդ՝ իր նիւթերը ընդհանրապէս անմիջական նեղկայէն ու շրջապատէն կ'ընտրէր եւ իր կոչումին հաւատարիմ գրել՝ յանկէ անուանէ կը մատնանշէր մարդոց թերութիւնները, կը նաղրանկարէր շարունակ։ Նաղրանկարութիւնը, հասկնալի է, ընթերցին իրեն կեանքի մէջ, բայց բնաւ հասկնալի չէ եւ երբեք ներելի պիտի չըլլայ գրագէտին դէմ կազմած միացեալ այդ ճակատին մինչեւ գերեզմանատուն երկարազգած քինախնդրութեան ուխտը...

Փարիզը այլապէս վարուեցաւ իր ծոցին մէջ ամբողջ յիսուն տարի երկնած հայ գրագէտին անլուսնալ մարմինին հետ։ Փարիզը, որ լուսոյ քաղաք էր երբեմն նաեւ մեզի համար, պլպլալ կը թուի այսօր եւս, առաջնորդարան ունենալ հոն, մամուլ ունենալ, մշակութային միութիւններ ունենալ եւ գրողներու միութիւն, գրագէտներ, բանաստեղծներ, հեղինակներու ամբողջ հեղեղ մը, որ հեղեղային հեղինակի մը մահուան առիթով արժանաւոր ընթացքի մը մէջ մղուելու փոխարէն՝ պղտորեցաւ կրկին, թշուառութեան իր մեծարարքառ առմարին վրայ ուեցնելով լուռ ու լրիւ թշուառութիւն մը եւս։

digitised by A.R.A.R.@

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

ԲՈՂՈՔ՝ ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

●

Ամիսներ են անցել Նշան Պէշիկթաշլեանի մահուանից ու սակայն դրժւարանում եմ հաշտուել այդ գաղափարի հետ։ Ուրեմն, ոչ եւս է բեղուն այն դրիչը, որը գրեթէ վեց առանձնակ շարունակ ծառայեց հայ պիր ու դրականութեան եւ հոգու ծաղիկներով զարդարեց մեր մշակոյթի բազմազան պարտէզները։ Երախտապիտութեան յատուկ խօսք ունեմ ողբացեալ գրականագէտին, որի գրական ներկայութիւնը, ինչպէս Սփիւռքում գնուած իմ սեբունդի ներկայացուցիչներից շատերի դէպքում, ներշնչման աղբիւր հանդիսացաւ մեր նկարագրի կերտման գործում։ Ինչպիսի՛ յափշտակութեամբ էինք կարդում իր պերճաշուք քնարավէպերը, իր երգիծական գիմանկարներն ու յատկապէս իր հայատրոփ էջերը։ Ընկել էինք «Սիդոնիա»յի յուզբոտ ալիքների մէջ եւ կախարդուել էինք։ Մենք հայկական դպրոց չտեսանք, մեր դրարոցը եղաւ Փարիզի հայ գրողների հոյլը՝ տարագիր իր հեւքերով, իր ցաւերով ու իր անմահ երազներով։

Ու Նշան Պէշիկթաշլեանը միշտ ունեցաւ իր իւրայատուկ տեղը։

Եւ հիմա ասում են, թէ նա չկայ։

Վրդովեցուցիչը մահուան գաղափարը չէ, այլ կեանքի տառապանքն ու յեսմահու անտարբերութիւնը հանդէպ հայ գրողին։ Գոնէ ժամանակին կարդին թաղել գիտէինք։ Եթէ ամբողջ կեանքում արհամարհում էինք նրան եւ թշուառութեան սեմին հասցնում, գոնէ կարողանում էինք շքեղ թաղումով պանծացնել նրա յիշատակը։ Հիմա այդ էլ զլանում ենք տարաբախտ գրողին։

Նշան Պէշիկթաշլեանի գործերը եթէ իրար վրայ դասենք, մի մարդահասակ բարձրութիւն կ'ունենան։ Իսկ նրա դագաղին հետեւել են հազիւ քանի մը հոգի։ Եթէ այս հոգեկան զանգուածիւն չէ, հապա ի՞նչ է։ Երեւոյթը իւրայատուկ չէ միայն Փարիզին։ Ամբողջ Սփիւռքն է տառապում արժէքների այլանդակութիւնից ու նկարագրի խաթարումից։ Ըստ երեւոյթին, նիւթական բարեկեցութիւնը քարուքանդ է անում մեր ժողովուրդի հոգեկան տունը։

digitised by A.R.A.R.@

Մի պահ մոռանանք իր գրքերը։ Սակայն ո՞ւր մնացին իր բազմաթիւ աշակերտները, որոնց տարիներ շարունակ հայերէն է սորվեցրել եւ նրանց հոգում հայեցի գիտակցութիւն խարսխել։ Մի՞թէ այդպէս են գնահատում ուսուցիչին։ Մի՞թէ այս է հարկն աշխարհի։ Մի՞թէ արդի բարքերը այսքան խորն են աղաւաղել մեր նոր սերունդի գիտակիցը։

Այս բոլոքք է ոչ այնքան Նշան Պէշիկթաշլեանի մահուան դէմ, որքան վերապրողների։ Նրա՛նց ու մե՛ր դէմ, որ ըստ արժանւոյն չգնահատեցինք վաստակաւոր նուիրեալին իր կենդանութեան օրոք եւ տարրական մարդկայնութիւնը չունեցանք քայլելու իր դագաղի հետ մինչեւ վերջնական փոսը։

Թերեւս այս բոլորը գիտէր տարաբախտ երգիծաքանը։ Չէ՞ որ երգիծարանները աւելի խորունկ են զգում կեանքի ողբերգութիւնը։ Մի՞թէ մարդուց աւելի կարելի է ապասել, անպատճառ պիտի ասէր Նշան Պէշիկթաշլեանը, մի գուցէ գալուկ ժպիտը դէմքին։ Եւ մինչեւ վերջ, ա՛նգամ իր հիւանդութեան ծանր տարիներին, նա պահեց իր զուարթախօսութիւնը, երբ սոսկ չնչառութիւնը ահռելի տառապանք էր նրա համար։

Նշան Պէշիկթաշլեանի մահով ժամանակակից հայ գրականութիւնը կորսընցնում է իր ամէնից բեղմնաւոր ու բազմավաստակ դէմքերից մէկը։ Կաղնիները մէկ առ մէկ ընկնում են եւ անտառը գնալով նօսրանում է։ Այս ու այն կողմ երեւում են նոր ծիլեր, սակայն նրանց պակասում է կենսարար հողը։ Արդէն Պէշիկթաշլեանը իր աւիշը քաղել էր Պոլսի հայ մտաւոր վերածնունդի յուռթի այգուց։ Եւ այդքանը բաւական եղաւ, որ նա կարողանար ծաղկել ու պտղաւորուել Նոյնիսկ Փարիզի պէս տարամերժ միջավայրում։

Նա կամուրջ եղաւ հնի ու նորի միջեւ։ Մոլեռանդութեամբ պահպանեց հայ գրականութեան աւանդները եւ սակայն միաժամանակ նոր ակօսներ պեղեց ներկայի սրտում։ Իր մօտ պաշտամունքի հասաւ սէրը հանդէպ հայերին ու հայկականը ու, մա՛նաւանդ, հանդէպ հայոց լեզուն, որը գեղարուեստական անաղարտութեան մօտեցաւ իր գրչի տակ։ Պերճ է իր ոճը, շքեղ ու ճոխուն, յաճախ հազնելով կախարդական աչեմ ու բիւրեղացած վեհութիւն։ Իր լաւագոյն էջերում անկրկնելի է Պէշիկթաշլեանը որպէս տրուեստադէտ եւ իմաստասէր՝ համադրելով Աստուածաշնչային պարզութիւնը Նարեկեան տատանումներն խորհուրդներուն հետ։

Գրող էր՝ բառի ամենալայն իմաստով։ Թերեւս ալիւռքահայ միակ դրողը, որը գրականութենից զատ այլ գործով չզբաղուեց։ Եւ հենց այդտեղից էլ իր մարդկային ողբականը։ Առօրեայի ծանր քաքը։ Որքան էլ հակադրական թուայ, սակայն յորդառատ նշմարները չատ բան չաւելացրին նրա գրական ժառանգութեան վրայ։

Սակայն Նշան Պէշիկթաշլեանը վաղուց արդէն իր լուման մուծել էր հայ գրականութեան անգաստանում։ Աւելի քան երեսուն հատորներ՝ երգիծավէպեր, քնարավէպեր, արձակ բանաստեղծութիւն, դիմանկար, պատմութիւն ու մշակոյթ եւ իր վաստակի պսակը՝ «Թատերական դէմքեր»ը, որը հերկուլեսեան աշխատանքի արդիւնք է։ Հապա մի՛ւս գործերը — «Միդոնճա», «Գրիգոր Նարեկացի», «Նարդոս», «Երգիծական էջեր», «Փարաւոն Սէմ Անտոն»։ Ո՞ր մէկը թուել։

Բազմաբեղուն գրիչ ունենալով հանդերձ, նա առաւելաբար յայտնի եղաւ որպէս երգիծաքան։ Եւ հենց այդ պատճառով էլ չատերի կողմից հալածուեց։ Մեր ժողովուրդը դեռ չատ ճանապարհ ունի կտրելիք մշակութապէս եւ հասարակայնօրէն հասունանալու համար։ Մենք ե՞րբ ենք հանդուրժել երգիծաքաններին։ Պարոնեանից, Օտեանից ու Պէշիկթաշլեանից զատ այլ

digitised by A.R.A.R.@

երգիծաբաններ ունե՞նք։ Յակաւին չունենք անհատական ու հաւաքական մեծութիւնը, մեր իսկ թերութիւնների վրայ ծիծաղելու։ Ե՞րբ պիտի դուրս դանք ազգային նուաստացման զգացումի հիւանդ խորխորատից եւ զուարթախոհութեամբ ընկալենք կեանքն ու երեւոյթները։ Առայժմ մենք միայն հայածել գիտենք։

«Մարդկութեան մէջ, բոլոր հալածուողները, — մի տեղ գրել է Նշան Պէշիկթաշլեանը, — ըլլան անոնք հաւատացեալներ, յեղափոխականներ, գիտուններ ու գրագէտներ, կրնան եղաբտաճալ իրենց կրած հալածանքով։ Եթէ հալածուողները իրենք չեղարտանան, կ'արձանագրուի հալածուած ըլլալու իրողութիւնը իբրեւ բարեհիշ։ Հալածողները, ապէսյն, կրնա՞ն հպարտաճալ իրենց սարքած խուչակրութեամբ»։

Ու մի՞թէ մահացած երգիծաբանին զլացուած վերջին յարգանքը՝ Փարիզի Ֆրանսական գերեզմանատան փոսի ճամբին, հալածանքի հետեւանք չէ...։

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

Հայ գրականութեան կազմիները կը տապալին իրարու ետեւէ, լուռ հսկաներու պէս։ Անոնք կը դժուարանան փակել իրենց աչքերը, ապասելով այն ընդլուզներուն, որոնք պիտի դան կենդանացնել այդ ահաւոր պարապութիւնը, այդ անծայրածիր անապատը, որ երբեմն պարտէզ էր ու մրգաստան, երգ էր եւ ստեղծագործութիւն։ Եւ մեր սրտերը կը համակուին թախիծով եւ յուսահատութեամբ ամէն անգամ, որ իրենց պերճ հասակով փոսին մէջ կ'երկրնան հայ գիրի եւ մշակոյթի անփոխարինելի հսկաները։

Հայ գիրի եւ մշակոյթի հսկայ մըն էր անկասկած Նշան Պէշիկթաշլեան, որ իր աչքերը փակեց Վիլլմոմպլի դորշ երկինքին տակ, ապասելով, որ իրեն հասնի իր գրած հարիւր հազարաւոր տողերէն զոնէ մէկուն արձագանգը։ Զեկաւ այդ արձագանգը, որովհետեւ հայ մարդը դադրած է յարգելէ գիրի ու գրականութեան անձնուրաց քուրմերը։

Պէշիկթաշլեան ապրեցաւ 74 տարի, եւ 74 անդամ ըմպեց չքաւորութեան եւ զրկանքի գաւն բաժակը, բայց 74 անդամ խնկարկեց, փառաբանեց եւ պանծացուց հայ գրականութիւնը եւ հայ ժողովուրդը։

Անոր կեանքը զգայացունց ոչ մէկ դրուագ կը պարունակէ։ Ցիշատակելի թուականները իր գրած գիրքերուն տարեթիւերն են։

Նշան Պէշիկթաշլեան աշխարհ եկաւ 1898ին, Գոլոյ Բերա թաղին տուներէն մէկուն մէջ։ Շատ մը հայ մանուկներու պէս՝ յանախեց իր թաղին նա-

digitised by A.R.A.R.@

խակրթարանը եւ հոն կանգ առաւ իր պաշտօնական ուսումը։ Բախտը չուենեցաւ բարձրագոյն վարժարանի մը կամ համալսարանի մը սեղանին առջեւ յագեցնելու գիտութեան իր զապակը, բայց ան տքնաջան ինքնաշխատութեամբ եւ յամառ ընթերցումով ամբարեց գիտական ու գրական անբաւ պաշար։

12 տարեկանին, Պէշիկթաշլեան սկսած էր գրիչ շարժել։ Պատանի հասակին՝ արդէն ան վայելչադէմ եւ բարձրահասակ մարդ մըն էր։ Օգտուելով այս առաւելութիւններէն, Պէշիկթաշլեան մուտք գործեց թատերական աշխարհէն ներս եւ դարձաւ թատերասէր հասարակութեան սիրուած դերասաններէն մէկը։ Սակայն պատերազմը վերջ տուաւ իր գործունէութեան, իբր դերասան, բայց չմարեց անոր սէրը բեմին հանդէպ։ Ան մօտէն ճանչցաւ իր ժամանակաշրջանի գլխաւոր արուեստագէտները եւ դերակատարները, եւ հետագային վերապրեցուց այդ շրջանի դէմքերն ու դէպքերը, իր գրած «Թատերական դէմքեր» հակայ հատորին մէջ, որ վերջերս արժանացաւ Մելիտինեցի մրցանակին եւ լոյս տեսաւ Կաթողիկոսարանի տպարանէն։

Առաջին Համաշխարհային պատերազմէն ետք, Պէշիկթաշլեան շատերու պէս լքեց Գոլիսը ու հաստատուեցաւ Ֆրանսա, ուրկէ իր աշխատակցութիւնը բերաւ Ֆրանսայի եւ Սիրիոյի հայ մամուլին։

Անդիտակցաբար, Պէշիկթաշլեան առաջին քայլը առած էր Գողգոթա տանող ճամբուն վրայ, հայ գրագէտի Գողգոթան, ուր հայ մտքի մարդոց կը սպասէր մէկը միւսէն ահաւոր երկու դահիճներ՝ Թուրքը կամ Թշուառութիւնը։ Շատ մը հանճարներ տառապելէ ետք երկրորդին ճիրաններուն մէջ, ինկած են առաջինի եռթաղանին տակ։

Պէշիկթաշլեան իրաւ գրագէտ մը ըլլալով, իր առօրեայ յօդուածներուն աւելի՝ ծնունդ տուաւ ստեղծագործութիւններու երկար շարքի մը, որոնցմէ շատերը 20րդ դարու հայ գրականութեան գոհարները կը հանդիսանան անկասկած։

Իր առաջին գործը, «Ինկեր Շահնազար» (Փարիզ, 1927), ունի երգիծական բնոյթ, եւ երգիծանքը պիտի մնայ Պէշիկթաշլեանի տաղանդին գլխաւոր երակը։ Այս գործին կը յաջորդեն երկու վէպեր՝ «Սիդոնիա» (Փարիզ, 1928) եւ «Ռապպի» (Գոլիս, 1931), որոնք հին ժամանակներու ոգեկոչումներ են եւ կը հաստատեն հեղինակին վիպային տաղանդը եւ զօրաւոր երեւակայութիւնը։

Ու այսպէս, իր ամբողջ ասպարէզին ընթացքին, Պէշիկթաշլեան չի մոռնար իր պարտքը վճարելու ներշնչման զանազան աղբիւրներուն։ «Երգիծական» (Փարիզ, 1933), «Հիւանդոտես» (Փարիզ, 1937)։ Երգիծական գործերէն ետք, կու տայ «Կապպա կամ Մեղրի բարը» պատմագեղեցիկական վէպը, եւ «Մեղրերս»՝ քերթուածները, որոնց կը յաջորդեն երգիծավէպեր եւ երգիծական պատմուածքներ, ինչպէս «Ծաղրանկարներ», «Հայ Ադրբտիֆ», «Մեր պարտէզէն», «Մանիաներ», եւայլն...։ Եւ իր հին սիրուհիին՝ թատրոնին գոհացում տալու համար կը գրէ «Գրիգոր Նարեկացի եւ Սմբատ Բ.» պատմական ողբերգութիւնը

Վենէնի իր մութ եւ ապառողջ խցիկին մէջ քաշուած՝ Պէշիկթաշլեան կ'արտադրէր անդադար, հակած իր խարխուլ սեղանին վրայ։ Ան կը նմանէր մինոնագարեան այն վանականներուն, որոնք քաշուած մութ խուցերու մէջ, մոռցած կեանք ու աշխարհ, մագաղաթներու վրայ կը գրչագրէին անմահ տողեր՝ ապագայ սերունդներուն համար։

Վանքերու խուցը եւ գիւղերու, քաղաքներու տունները շատ չէին տար-

digitised by A.R.A.R.@

բերեր իրարմէ. բայց Պէշիկթաշլեանին պարագան աւելի դժուար էր, ա՛յն իմաստով, որ իր սենեակին պատերէն անդին կը տարածուէր Փարիզը՝ իր յոյսերով, իր ապրանքներով, իր կոթողներով, իր թատրոններով եւ իր հարստ ու մէկ հմայքներով։ Պէշիկթաշլեան կը զգար հսկայ ու գեղեցիկ քաղաքին շնչառութիւնը եւ հրապոյրը, բայց կը նախընտրէր հայ գիրին տառապագին կախարդանքը։ Մելանի հոտը կ՚արբեցնէր զինք եւ հայ գիրերուն երգը աւելի զօրաւոր էր, քան լուսաւոր ոստանին տեսական կանչը։ Այնքան ատեն, որ ան չէր տուած իր առաջայ պարտքը Սուրբ Մեսրոպին, կը մնար արգելափակուած։ Յօդուածներ եւ պատմուածքներ կը տեղացնէր ամէն կողմ եւ կը սպասէր, որ պարտաճանաչ խմբագրապետ մը բարեհաճի թղթատարով իրեն ուղարկել այն շնչին գումարը, որ պիտի ծառայէր իր եւ կողակիցին համեստ ապրուստը հոգալու։

Հոս է ահա Պէշիկթաշլեանին մարտիրոսութիւնը եւ մեծութիւնը։ Ան կրնար որեւէ ֆրանսահայու պէս ձեռնարկել շահաբեր գործի մը, հանիլ նիւթական նախանձելի դիրքի մը, ուր հասած են իրմէ նուազ զարգացած, նուազ բանիմաց ֆրանսահայեր։ Պէշիկթաշլեան առաջին օրէն իսկ իր առջեւ փակեց այս դիւրին եւ հասարակ ճամբան եւ որոշեց ապրիլ միայն իր գրիչով։ Երեւակայեցէք, թէ ինչ կրնար ըլլալ վիճակը հայ տաղանդաւոր գրագէտի մը, որ կը յանդգնէր 20րդ դարու կէսերուն ձեռք երկարել հայ մամուլին եւ հայ ընթերցողին։ Արդէն պարագան նոյնը չէ՞ր արդեօք 19րդ դարուն, երբ հանճարեղ Բաֆֆի իր աչքերուն լոյսը կը մաշեցնէր գլուխ-գործոցներ արտադրելով պատառ մը չոր հացի փոխարէն, որմէ կը զրկուէր յաճախ։ Ի՞նչ ողբերգութիւն եւ ինչ գառնութիւն։ Բայց անհաւատալին հոն է, որ Պէշիկթաշլեան չընկրկեցաւ երբեք եւ շարունակեց իր փչոտ ուղին՝ հակառակ իր ոտքերուն տակ ցանուած խոչընդոտներուն։ Պատերազմի սեւ օրերուն, երբ ամէն մարդ իր շուրջը կը հարստանար սեւ շուկայի մթին առեւտուրով, Պէշիկթաշլեան օրեր անցուց անօթի, օրեր անցուց առանց կրակի։ Ինչպէս ինք կը խոստովանէր. «Միակ սնունդս քունն էր։ Մէկ ճաշի տեղ երկու քուն կը քնանայի»։

Այս ռեժիմը վատթարացուց իր առողջութիւնը, առանց սակայն կարենալ տկարացնելու իր կորովը եւ արտադրելու տենդը։

Եթէ վերջին տարիներուն, շնորհիւ արտասահմանի եւ մա՛նաւանդ, Լիբանանի սրտցաւ հայրենակիցներու նիւթական օժանդակութեան, գրագէտին նիւթական վիճակը որոշ չափով բարելաւուեցաւ, այդ չի նշանակեր սակայն, որ հայ ժողովուրդը կրցաւ վճարել իր պարտքը այս երախտաւորին։

Եւ Օգոստոսի առաւ մը, Պէշիկթաշլեան իր աչքերը ընդմիշտ փակեց այս աշխարհի լոյսին։

***

Նշան Պէշիկթաշլեան ունի իբրեւ գրագէտի մը բոլոր յատկութիւնները՝ խմացականութիւն, զգայնութիւն եւ երեւակայութիւն։ Ունի, մա՛նաւանդ, անբաւ պաշար, ճոխ ու ճկուն լեզու մը, որուն առաւելութիւնները ի յայտ կու գան մանաւանդ երգիծական սեռին մէջ, որուն անժխտելի վարպետներէն է «Մամիանոր»ու հեղինակը։

Երգիծաբանութիւնը գրականութեան ամէնէն դժուարին ընդարձակներէն մէկն է անկասկած եւ այդ պատճառով իսկ, ամէնէն մեծ ազգերն իսկ մեծ հպարտանքով կը խօսին իրենց երգիծաբաններուն մասին, որոնց թիւը կարելի

digitised by A.R.A.R.@

է հաշուել մատներու վրայ։ Հայ գրականութիւնն ալ հպարտ է իր Ցակոբ Պարոնեանով, Երուանդ Օտեանով, Լեո Կամսարով եւ Նշան Պէշիկթաշլեանով։

Առով միասին՝ պէտք է ըսենք, որ Նշան Պէշիկթաշլեան ունէր բոլոր առուեալները մեր գրու լաւագոյն վիպասաններէն մէկը ըլլալու, գժբախտաբար իրերու բերումով եւ յօդուած հասցնելու պարտաւորութենէն տարուած՝ ան ժամանակ չունեցաւ լիովին մշակելու վիպական սեռը, որուն համար պէտք եղած առաւելութիւններով եւ ճիրքերով օժտուած էր, ինչպէս կը փաստեն իր արտադրած պատմուածքները եւ վէպերը։

Ահա այս եղաւ յիսունէ աւելի հատորներ եւ հազարէ աւելի յօդուածներ արտադրած մարդուն կեանքը, ամբողջական նուիրում մը հայ մշակին եւ հայ դպրութեան, հայ ազգին եւ հայ գրականութեան։

Եթէ Պէշիկթաշլեան ուրիշ ազգի մը զաւակը ըլլար, ո՛չ միայն պիտի վայելէր նիւթական նախանձելի վիճակ, այլեւ պիտի արժանանար միջազգային մեծագոյն պատիւներու, յոբելեաններու, շքանշաններու։ Իր մահէն ետք ալ փողոցներ եւ հրապարակներ պիտի միրուէին իր անունով, պարտէզներ պիտի զարդարուէին իր արձաններով...

Պէշիկթաշլեան մեռաւ, բայց այդ պատիւներէն որեւէ մէկուն չարժանացաւ, որովհետեւ հայ ծնած ու հայ մեռած էր, օտար քաղաքի մը մէկ հեռաւոր արուարձանին մէջ։

Թաղումը, աւա՜ղ... այս ալ ուրիշ ողբերգութիւն։

Մամուլէն իմացանք, որ իր դագաղին հետեւած էին քանի մը տասնեակ հայեր միայն։ Կարդացինք այս լուրը եւ ընկզեցանք, որ մեր ժողովուրդը չէր յարգած նոյնիսկ պատշաճութեան նուազագոյն օրէնքը, չէր յարգած նոյնիսկ երգիծական դարձած ասացուածքին արամագրութիւնները. «Գնա՛ մեռիր, եկո՛ւր սիրեմ»։

Պէշիկթաշլեան հալածուեցաւ իր կեանքի ընթացքին, որովհետեւ բոլորի երեսին կը զարնէր պողպատէ ճշմարտութիւններ, որովհետեւ ի լոյս կը բերէր մարդոց թաքուն ապոկրիֆութիւնները, կեղծիքները։ Պէշիկթաշլեան հալածուեցաւ եւ մեռաւ իր դագաղին մէջ, որովհետեւ հայ գրագէտ մը էր եւ կ՚ըսէր բաներ, որոնք անհասկնալի էին պայմանաւորուած ու թմրած ուղեղներուն։

Պէշիկթաշլեանի դէմ գործուած այս յետ մահու անարգանքը պինք աւելի համակրելի եւ աւելի մեծ կը դարձնէ մեր աչքին։

ՆՈՒՊԱՐ ՁԱՐԽՈՒՏԵԱՆ

Գոս. Գրադարան

digitised by A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

●

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆՑ ՈՒՂԻՈՎ (հէքեաթներ եւ աւանդութիւններ), կարօ Մեհեան, ամբողջական հատոր, Համազգայինի Վ. Սէքեան տպարան, Պէյրութ, 1973:

ՊԱՏՄԱԳԻՐՔ ԶՄՇԿԱԾԱԳԻ, դասաւորեց եւ խմբագրեց Հայկազն Գ. Ղազարեան, Համազգայինի Վ. Սէքեան տպարան, Պէյրութ, 1973:

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

●

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

●

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ԱՍՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՄՆԱՑԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Ց. ԴԵՂԱՐԴ

Տ. ՊԱՍՈՒՆԻ

Բ. ԳԱՓԱԶԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ֆ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ

† ԵՊ. ՊՕՅԱՃԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ՏՊ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

digitised by A.R.A.R.@

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	10 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2.50 Լ. ՈՍԿԻ

Վարչութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani
Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@